

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ

Ա.Ա.ԱՌԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐԵՆ 1

ՔԱՐԻ ԴԱՐ - ՈՒՆ ԲՐՈՒՋԻ ԴԱՐ

ԵՐԵՎԱՆ 1992

**Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու Գ. Ե. Արեշյան**

Հայաստանի հնագիտության վերաբերյալ առաջին ամփոփ դասագիրըն  
է սա, ուր վեր են հանված Հայկական լեռնաշխարհի հուշարձանները, դը-  
րանց նյութական, հոգևոր մշակույթը, տնտեսաձևերը, արհեստները, կո-  
պերը հարակից շրջանների հետ:

Հնագիտական տվյալներով ցույց է տրված պատմական պրոցեսի վերա-  
կանգնման մեթոդիկան և արակտիկան, ինչպես նաև հնագիտության դերը  
պարումական մյուս գիտությունների շարքում:

Դասագիրըն նախատեսվում է բարձրագույն ուսումնական հաստատու-  
թյունների պատմության ֆակուլտետների ուսանողության, ինչպես նաև  
պատմաբանների, հնագետների, ազգագրագետների, արվեստաբանների և ըն-  
թերցող լայն հասարակության համար:

Ե. ----- - 92

704 / 02/

**ЕСАЯН СТЕПАН АЛЕКСАНДРОВИЧ**

**АРХЕОЛОГИЯ АРМЕНИИ**

**выпуск I**

**(каменный век – поздняя бронза)**

**На армянском языке**

**Издательство Ереванского университета**

**Ереван – 1992**

Հնագիտությունը<sup>1</sup> ուսումնասիրում է մարդկային հասարակության գարզացումը և այդ գարզացման օրինաշափությունները առ մշակույթի պեղած մնացորդների:

Պատմական գիտությունն իր ուսումնասիրության համար օգտվում է երկու խումբ աղբյուրներից՝ գրավոր և առարկայական: Հնագիտությունը հիմնականում ուսումնասիրում է իրեղին աղբյուրները: Մարդկային հասարակության աճենավաղ ու երկարած շրջանի ուսումնասիրության հիմքում դրվում են միայն իրեղին աղբյուրները: Գրավոր աղբյուրները հանդիս են եկել մոտ 5500 տարի առաջ, իսկ Հայաստանի պատմությունը լուսաբանվում է գրավոր վավերագրերով մ.թ.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ հերսից սկսած: Այդ հազարւյն տեքտուրը գրվել են նարեան երկրներում՝ շումերերներ, աքադերերն և պուտներով: Հայաստանում գրված հազարւյն սեպազիր և հիերոգլիֆ արձանագրությունները վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի երկրորդ և 1-ինի առաջին կեսին: Դրանք գրված են ինքերեն, աքադերեն, ուրարտերեն, էլամերեն և հին աստրակերեն լեզուներով: Աղբյուրագիտական հակայական նշանակություն ունեն ավելի ուշ գրված արամերեն, հունարեն և լատիներեն արձանագրությունները,

ինչպես և հայերեն միջնադարյան վիմագրերը: Աւասի հնագիտաց պետք է լավագույնք լինի բանահիրական ընտության մեթոդներին: Հնագիտության հարակից պատմական օժնությունը են դրամագիտությունը, հետազիրկան /գիրերի և գինաշատների ուսումնասիրությունը/: Հնագիտությունը սերտորեն կապված է հնամբարանության /պալեոսեռորդուլագիա/, հնակենդանաբանական /պալեոգոլոգիա/, հնաբուսաբանության /պալեօնունիկա/, չորրորդական /անարոպանի/ երկրաբենություն և այլ գիտությունների հետ: Հնագիտության աղբյուրները հնագիտական հուշարձաններն են՝ ընականվայրերը, ամրոցները, պաշտամունքային տարբեր կտորնեցները, զամանակակիցները, զրանցից հայտնաբերված նյութը և ներմրկվում է մանրակրիտ ուսումնասիրության, որի եղանակները արմատապես առընթափում են գրավոր աղբյուրների ուսումնասիրության եղանակներից: Նշված նյութերի ուսումնասիրությունը լայնորեն գործում է այսօնի հայության մեջ.

,Այն պատմության առածական հորիզոնը լայնացրեց եռևյալուն, աբրա-

1. Հնագիտությունը /միջնագային արխեոլոգիա անդմիեց/ հռենորեն „արխայուն, -ին և „Լոգոս“, - եռար բառերի միասնաւթյունն է, որն այժմ սնկալվում է որպես հնագիտություն:

առաջարիթական աստղագիտության հորիզոնը: Այն պատճության համար հարյուրավոր տեղամասեր մեծացրեց անցյալը ներթափանցելու հարավորությունները, այսպես, ինչպես մասնադիմություն կենսագույնության համար բացահայտեց մեծ օրգանիզմներում թաքնված անզամ ամենափոքր հյուսվածքների կյանքը: Վերջապես այս ուսումնասիրությունը մաքրեց այսպիսի փոփոխություններ գոտմական բազմեղակության և ծովալի մեջ, ինչպես ուսմանական ուսումնասիրությունը մեթոդը թիմիայի մեջ:::

Այն ամենի նշառական առաջուցված է երանով, որ առանց հնագույնությունը պայմանավորված է երանով, որի համար համարակառնության, չին Արեւելքի, անտիկ ժամանակաշրջանի կամ միջնադարի պատճությունները, ինչպես նաև այս ժողովորդի պատճությունը:

Հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութերի հիման վրա հնագույնները կատարել են մարդկության պատճության ժամանակաշրջանների հնակայալ քածանումը՝ թարի դար, Յոնսզի դար, Երաթի դար: Ավելի ուշ ժամանակաշրջանները քածանվում են գրավոր պատճության ակզեռութով՝ անոնիկ դարաշրջան, միջնադար, երբ նյութի քազմագույնությունը թույլ չէր ուժին շարութակել գույն հնագիտական դասակարգումները:

Գնահատելով հնագիտական նյութերը որպես պատմական պղյուրներ, անհրաժեշտ է նշել, որ համար առարկայական հուշարձանները շատ պվելի հուսալի և օգյեկտիվ պղյուրներ են, քան այս կամ այն պատմական ժամանակաշրջանի ժամանակակիցների գրավոր պղյուրներում պահպանված վկայությունները: Պատճության համեկողմանի ուսումնասիրության նպատակով հնագիտությունը ուսումնասիրում էլք ոչ միայն գտնված իրերը, այլև շինությունները, որտեղից դրանք գտնվել են, վայրերը, որտեղից դրանք բերվել են, և հնագիտական հուշարձանի միջավայրը: Եվ այս պատճուկ հնագիտությունը դասվում է պատմական հիմնարար գիտությունների շարքին: Թանի որ հնագիտական պղյուրները հանվում են նողի ուկից, հնագիտությունը պահերազոր տեմեռամ են „քանով զինված պատմագիտություն:::

Ինկ ինչպես նողի ուկ հայտնվեցին հնագիտական մեացորդները: Բացի հնագիտեա գտնվող զանմերից, այս կամ այն պատճուկ նողում թաղված թանկարժեք իրերից, մնացած իրերը նողի մեջ են ընկել ուլորովին այլ պատճուններով: Դամքարաններում դրանք անդադրվել են՝ կապված անդ շիրմայան աշխարհի մասին պատկերացումների հետ, ուր այդ նյութերը պետք է ծառայեին չ տիրոջը անդադիմյան աշխարհում: Դամքարաններում գտնված նյութերը կազմում են այսպիս կոչված փակ համալիրներ, որոնց վերլուծությունը կարելոր է ժամանակագրական հետազոտությունների համ և արժեքությունը տեղեկություններ է հաղորդում ավյալ հասարակությունու գույքային և առցիւթական վիճակի մասին, ինկ դամքարանային կտուց-

Ներք Ներկայացնում են նարարտական և շինորարական մշակույթը:  
Նդեւ են դեպքեր, երբ համալիրները կողոպավել են և թանձրժեց իրերը  
տասելուց բացի խափավել է մնացածի դասավորությունը: Այդ ժակ համա-  
լիրները խաթարված են լինում նաև երկրորդական և երրորդական թղում-  
ներով, երբ դարեր կամ հաճախ հազարամյակներ հետո հնագույն դամբարան-  
ների մեջ թաղվում եին ուրիշ նեցեցյալներ: Այս դեպքում հին թղումը  
կամ ծածկում էր հողով, կամ նրա նյութերը հավաքվում եին մի տնկ-  
յունում, իսկ պատված տեղում տեղադրվում էր նոր հանգույցյալ՝ իրեն  
ուղեկցող նյութերով:

Չոր պետի արդ է ամրոցներից, բնակատեղիներից և այլ շինու-  
թյուններից հողի համար շերտի տակից հայտնաբերված իրերի մեկնացանու-  
մը: Ցուրաբանչյուր թակավայրի մնացորդների ամրողիությունը կազմում  
է մշակութային շերտ, որը ծածկում է նրա տակ գռնվող և երկրացանական  
կազմվածք ունեցող հիմնանողը: Կերպինիս հնագիտության մեջ ընդունված  
է „մայր հող, անվանել: Մշակութային շերտը մարդու գործունեության  
անթագույն պատմականորեն կազմավորված շերտավորչած համակարգ է:

Հայտնաբերվող գագառները երբեք իրենց շեին կարող հայտն-  
վել հողի տակ: Հայտնատեղում հնագույն շինությունները հիմնացանում  
կառուցվում եին շթրծած աղյուսակց, որոնք վկանում եին 30-35 տարվա  
ընթացքում, և նրանց տեղում կառուցվում էին նորեր՝ հնագիտական  
հացնելով կավաքլուրներ: Տների տաշ թափում եին մոխրը, երաների  
մնացորդներ /ոսկորներ/, շարդար իրեր /խեցեղեն, ոսկոր, օսք/ և  
այլն: Այս բնակատեղիներց հնագիտական գրականության մեջ կոչվում են  
մոխրե թւուր՝ թելլ կամ թեքե: Դրանց բարձրությունը Սուշանար Շահո-  
յուն հանում էր 30-35 մ: Լեռնային և սահմալեռնային գոտիներում շի-  
նությունները սովորաբար կառուցվում եին թարից կամ թարի հիմքի վրա՝  
աղյուս պատերով այդ պատճուկ ընտեկի կռուցյաները պահելի երեսը  
եին պահանջման: Այդ շրջներում մշակութային շերտի հատությանը  
շատ պետի նվազ է: Հին թարի դարի բնակավայրերի առկայությունը կառ-  
ված է որսորդանավարչական կենցաղի հետ: Այդ բնակավայրերը պայմանա-  
կանորեն կոչվում են կայաններ, որոնք միավորում են ինչպես բացօթյա-  
/Առանի դարի, Արգենի և այլն/, այնպես էլ թարայրային բնակավայրեր  
/Ազորի, Արցախում, Երևանում և Լուսակերտի թարայրները և այլն/:

Նոր թարի դարից սկսած, մեծ խումբ են կազմում շամբացված զյու-  
ղական տիպի բնակատեղիները: Ականձ մ.թ.ա. 3-րդ հազարամյակից, շամբաց-  
ված բնակատեղիներին զուգահեռ տաշանում են , կիկլոպյան,, շարվածքի  
պարիստներով ամրացված բնակավայրեր, որոնք, որպես կանոն, գրականու-  
թյան մեջ կոչվում են կիկլոպյան ամրոցներ և հարաւանը են մինչև մ.թ.  
1-ին հազ. Կեսը: Այս ամրոցներն ունեին տարբեր թունկցիոնալ նշանա-

կություն և ներկայացնում են հատակագծման և շինարարական տեխնիկայի մի քանի տիպ: Դրանց մի մասը անմշակ ձայնաբեկորների շարվածքով ամրացված խոշոր ընակավայրեր են: Հետազյում պատերը դառնում են քաղաքացիության: Գոյություն ուներին նաև ամրոցներ առանց մշտական ընակառիչյան: Դրանք պատառարաններ են, ուր փառնզի պահին հավաքվում էին շրջակայթի ընակությունը և ընտանի կենդանիների հոտերը: Լայնորեն տարածված էին պահակակետ-ամրոցները, որոնց կառուցվում էին լեռնացքներում, լեռնային արոտավայրերում կամ խոշոր ընակավայրերի մոտակայքում՝ թշնամու հարձակումները են մղելու համար: Ավելի ուշ առաջնում են նաև ամրացված քաղաքային տիպի ընակավայրեր՝ զարգացած արհեստավորական արտադրությամբ:

Կանի թագավորության շրջանում անտիկ և միջնադարյան ժամանակաշրջաններին ընորոշ է նոր պարիսպներով պաշտպանված խոշոր քաղաքների առաջցումը՝ քազմաթիվ քաղաքային և նոգեր շինություններով: Նշված ժամանակաշրջանների քաղաքներն ունեին իրենց ընորոշ քաղաքաշենակությունները: Քաղաքների զարգացումը ընականոն չէր, այն համար ընդհատվում էր քաղաքային կյանքի անկումով, մասնավոր ժամանակաշրջանների անցումային փուլերում:

Բազմաթեակ են նաև հայաստանում զոնվող տարերի տիպերի դամբարանները և դամբարանադաշտերը: Հանդիպում են ինչպես տարերի կառուցվածքի, այնպես էլ տարերի ժամանակաշրջանների դամբարանը, որոնք վկայում են դամբարանադաշտերի երկարան գոյատևման մասին: Այս քազմագնությունները պայմանավորված են ինչպես թաղումների էթնիկ պատկանելությամբ, ըրանց նոգերը մշակույթի առանձնահատկություններով, այնպես էլ գույքային և սոցիալական տարբերություններով: Դրանցից ամենահինը վերաբերում է ուշ եեուիթյան և վաղենեուիթյան ժամանակաշրջանին: Որպես օրենք, մինչև վերջերս թրիստոնեական ժամանակաշրջանի դամբարանները չեն հետազոտվում հնագետների կողմից, քանի որ օստ թրիստոնեական առվորույթի դամբարաններում ուղեկցվող նյութ չեք դրվում:

Հայուստեի ըրոնզեղարի և երկաթեղարի դամբարաններն թառ իրենց հատկանիշների քածանվում են քարարկողերի, դամբարանաբելուրների և կրոն-լեինների, չնայած վերջիններս կարող են հանդիսանալ ինքնուրույն /հիմնական/ դամբարանացերով/, այնպես էլ շրջագծել դամբարանուրները և քարարկողերը: Սակայն հանդիպում են կառուցողական շառ ավելի քազմաքնույթ հորինվածքով դամբարանները: Օրինակ՝ մի քանի տասնյակ քառակուսի մետր մակերեսով դամբարանացերը ծածկվում էին գերանի ծածկով և ամրացվում փայտե սյուններով, որի վրա շառ համար լցվում էր դամբարանը: Ամենից տարածվածը տարերի կառուցվածքի քարարկողերն են,

որոնք մեծ դամբանաբրւուրներում վեր են ածվում խոշոր թարք պատերով շարված, հարթ կամ ասիթօնանձն խոշոր թարք սալածածկով դամբանասրան-ներին Միջին թրոնզեղարից սկսած, Հայաստանում առաջին անգամ հանդի-պում են կատակոմբային մեջ դամբանախցերը՝ փորված կավի կամ տուժի շերտի մեջ: Բացի դամբանաների կառուցվածքային մերից, բազմաթիվ են նաև թաղման ծեսը: Տարցեր ժամանակաշրջաններում լայնորեն գործածա-կան եր դիմեկիզումը, երցեմն դիմեկը ենթարկվում էր մասնաշուան, հան-դիպում է նաև ոսկորների փշորւմ: Հուղարկավորումը կատարվում էր խսրի վրա հատուկ կառուցված կավե կամ փայտե հարթակների վրա, թագկա-թոռների վրա, կարասների մեջ, ինչպես նաև հատուկ պատրաստված թրոն-ցե, թարք և կավե դագաղներում, տարեեր դիմեկներում:

Ցուրաքանչյուր այսպիսի ընակավայր, դամբարան, հանք, ոռոգման համակարգի մնացորդ, մոնումենտալ արվեստի նմուշ /ճայռապատճերներ, վիշապներ, քանդակներ, ֆալոսներ, կուտքեր/, հին շենքերի մնացորդ-ներ, մանապարհներ և այլ կառուցյներ, ինչպես նաև նրանցում հայտնա-թերված իրերը և մշակութային այլ մնացորդները պատմահնագիտական հու-շարժաններ են, հետեաքար և այն ժամանակաշրջանի ուսումնասիրման պառ-մական աղբյուրը, եթե դրանք ստեղծվել են կամ շարունակել են գոյա-նել: Նրեմն դրանք անվանում են „, հություններ,, կամ „, արտեֆակտ-ներ,, այդ պատճոուկ „, հազիտական հուշարժաններ,, և „, հազիտա-կան աղբյուրներ,, անվանումները որոշ իմաստով հոմանիշներ են:

Հնագիտական հուշարժանների բացահայտումը որոշակի դժվարու-թյուն է ներկայացնում: Ճիշտ է, նրանց մեջ շատ կան այնպիսիները, որոնք հեշտ է մասնաշել: Դրանց թվին են պատկանում մեծ մասամբ կիելո-յան ամրոցները, հողանարթեցումից խուսափած բլուր-քսակավայրերը, քա-մաթիկ դամբարաններ՝ դամբանաբրւուրներ, թարարկղներ, եկիո շինու-ավերակներ և այլն: Բայց հուշարժանների մեծ մասը ծածկված է հողի հաստ շերտով: Դա համար է նկատվում Հայաստանում /ինչպես և այլ լո-ւնային շրջաններում/, որտեղ ընական գործոնների ազդեցությամբ լանչ-ըից բերված հողը տեղ-տեղ ծածկել է հուշարժանները մի թանի մետրեր՝ հասնող հաստ շերտով: Դա հակառակ պարզ երևում է մասնապարհների շինարարության ժամանակ, ջրանցքների և հիմքերի փորվածքի կտրվածքու-ուր ակնայտ երևում են հին հուշարժանները՝ ծածկված բերովի հողի շերտերով:

Նման հուշարժաններ բացվել են թանական մասնաբարհով /փլկածք, ծենալ, սելավ, հողմանարում/, ինչպես և հողը վարելու կամ շինարա-կան հողային աշխատանքների ժամանակ: Այդպիսի աշխատանքների շնորհի բացվել են այնպիսի արժեքավոր գանձեր, ինչպես լողազի, թարաշամբի.

Նիրակավանի, Լոռի-քերդի Սեծամորի ղամբանաքւուրները, Զբաշենի /օրեգան/, Ալբաւայի, Այրումի հուշարձանները, որոնք հարստացրել են հայ գիտությունն ու մշակույթը վաղ բրոնզե դարից սկսած մինչև մ.թ.ա. 4-5-րդ դարերը և այլն: Հողմանարձան շնորհիկ հայտնաքերպել է ուրարտերեն սեպազիր արձանագրության քեկոր Կարմիր-թլուրում, որից սկսվել են հակայական հայտնագործություններ Կանի թազավորության վերաբերյալ: Արարատի շրջանում կառարված հողային աշխատանքների ընթացքում հայտնաբերվեց լատինատոն մի արձանագրություն, որի շնորհիկ Ծշովեց Հին Հայութանի մայրաքաղաք Արտաշատի տեղը և սկսվեցին անտիկ աշխարհի այդ հոյակառ հուշարձանի սիստեմատիկ աեղումները: Ճանապարհաշինության ընթացքում հայտնաբերվեց Մահատկի մի ջնաղարյան քարայրային պահեց: Այս ցուցակը կարելի է շատ երկար շարունակել, թայց պետք է հակիր ընութագրել նաև հուշարձանների որոնման հարցերը:

Բացի պատմաբար քացվող հուշարձաններից, շատ վաղուց հնագետներ վարում են սիստեմատիկ որոնումներ: Խնաւով այս կամ այն մեջի հուշարձանների տեղադրման օրինացափությունները, հետաքար՝ նրանց գոնվելու հնարավոր վայրերը, նրանք ուսումնասիրում են տեղանքը, հնագործ հներակայրերի այսօրվա մակերեսին գտնվող հին իրեր, ինցեղենիտ աշխատանքի գործիքների քեկորներ, դիտարկում պատերի մնացորդներ և այլն՝ համար ուսումնասիրելով տարածական առանձին շրջանների կամ որոշ շահի տիպի հուշարձանների փնտրելով, այդ ընթացքում գտնում են նաև այլ հուշարձաններ: Հետպայրերի մակերեսից տունց պեղումների հավաքած գոածները եռչվում են վերգետնյա նյութ: Կերպանյա նյութերի ժողովածուները կողմնորոշիլ են հնավայրերի տեղադրությունը, ճայտնակարությունը և գրանցեցած տորածեց օչքրտելու համար:

Հայութանի նտիմանորհղային շրջանի հնագետները փնտրում եին հիմնականում որոշակի ժամանակաշրջաններ կամ տիպեր ներկայացնելով հուշարձաններ: Այսուհետեւ, Ակների /Ուրնեկի/ հայտնի ղամբարանաղաշուում պեղումներ են կատարել Ա.Եղիցյանը, Ն.Մարո, Ե.Թաղայշվիլին Ռեզկին, Լազերում՝ Ֆ.Բայերնը, Սուրյանը, Ֆիլիմոնովը, Ցիլոսիանին, Ուլգորովն, Ռոբրինսկին: Դեբեք գետի պատճանը ուսումնասիրել է թ. ղը Սորգոսե, որտեղ նա պեղել է շուրջ հազար դամբարան: Հայութանի մշակույթի ուսումնակարման գործում մեծ դեր է ունեցել Ն.Մարը, որը քացի Ծնիի փայլուն ախտեմատիկ պեղումներից և Ակներից, ուսումնասիրել է նաև Շիրակի և Գոռնիի մի շարք հուշարձաններ: Նշանակալից է Մրգանչ Լալայանի կատարած հնագիտական աշխատանքը, որը ուսումնասիրել է համարյա ամերող Սեանի պատճանը, սկսել է նաև ինկանի հայտնի Ջյուլթեփի առաջին քլուրի պեղումները և որոնումներ է կատարել Արցախի և Կուրի մասնակիյա շատ հուշարձաններում: Հայութանի հնագիտության մեջ էտական ներդրումներ ունեն

(Նույ Ռ.Վիրթովը, Ա.հվանովսկին, Է.Ռելտերը, Ս.Ճեր-Ավետիսյանը, և.  
(Դադայանը և ուրիշներ:

Խորհրդային շրջանում Հայաստանի հուշարձանների հնագիտական  
ուսումնասահրությունը սկսեց հետամուտ լինել պատմագիտական խնդիրների-  
(լուսաբանմանը և զարգացակ հիմնական երկու ուղղություններով: Մոռշի-  
նը դրսէորդի է որոնման երթուղային գիտարշավները և հետափուզական  
(դեղումների միջոցով և նպատակամդպած էր աշխարհագրական որոշակի ռա-  
(րուծքում գտնվող տարբեր կամ որոշ ժամանակաշրջանների հնագիտական  
(հուշարձանների հնարավորին չափ համապարփակ հայտնաբերմանը, արտաքին  
(նշանների արձանագրմանը և նրանց վերաբերող տառներին նյութերի հայ-  
(թայթմանը: Երկրորդ ուղղությունը ներկայացնում են գիտական մեառնկ-  
(յունից առավել նոստումնալից առանձին հուշարձանների բազմայի սիս-  
(տեմատիկ աեղումները:

Հետախուզական երթուղային առաջին գիտարշավները ղեկա 1920-ական  
թթ. Նախաճենունել է Հայաստանի պատմական հուշարձանների առհանության  
կոմիտեն: Մոռշին նախաճենունողներից էին Բ.Թորամանյանը և Ն.Լիսիցյանը  
Հետախուզական որոնման աշխատանքները տարբեր տարիների ընդգրկել են  
Սևանի ավազանը, Արագածոտնը, Ջանզեղուրը, Լոռին, Կոտայքը, Շիրակը:  
Գիտական առաջին որոշակի արդյունքներ ներկայացնող հետախուզական  
գիտարշավը իրականացվել է 1930-ական թթ. սկզբներին Բ.Դիառը ու Վ.Դիառը պահպանության  
Ե.Բայրությանի, Ա.Զայշյանի և Լ.Գյուլզարյանի կողմից Արագածի լանջե-  
րին և մասամբ՝ Սևանի ավազանում: Այդ, ինչպես և Ս.Բարիխուղարյանի  
հետախուզական աշխատանքների ընթացքում հիմնականում ուսումնասիրվել  
են, այսպես կոչված, կիկլոպյան ամրոցները: Հետախուզական արինե-  
նին կատարված հետախուզական որոնման աշխատանքներից առավելագույն արդ-  
յունավետ էին Հ.Ֆիդազարյանի որոնումները Վայրում, Ս.Շահամինինը՝  
Շամշադինի, իջևանի և Խոյեմբերյանի շրջաններում, Օ.Խնկեկյանի՝ Զան-  
գեզուրում: Այդօրինեակ աշխատանքները նոր որակ են ստացել 1975 թվա-  
կանից, եթե Հայաստանի ԳՅ ինստիտուտները, Պատմության և Մշակույթի  
հուշարձանների պահպանության և օգտագործման վարչությունը և նրեանի  
պետական համալսարանը սկսեցին իրականացնել ընդարձակ հետազոտություն-  
ների ծրագիր՝ Հայաստանի պատմության և մշակույթի հուշարձանների հան-  
րագիտարանային բազմահատոր համանվագի ստեղծման նպատակով: Այդ հետա-  
զոտությունների միջոցով արդեն հայտնաբերվել են մինչև այդ անհայ-  
նագիտական հարյուրավոր հուշարձաններ:

Հնագիտական դշտապային աշխատանքների մյուս ուղղությունը պայմա-  
նակորդ է խոշոր հուշարձանաթմբերի սիստեմատիկ աեղումների իրակա-  
նացման անրածեշառությամբ: Այդպիսի աեղումների նախաճենուման առաջին  
փորձը կատարվել է 1931 թ., չին Վաղարշապատում Ս.Բալանթարի ղեկավա-  
9

բությամբ: 1930-ական թթ. կեսերին հնագետների և մարտարանետների մի խումք Հ.Օքելու ղեկավարությամբ պեղումներ է կատարել Մյերեղում, որը հետազայում շարունակվել է Ա.Հարությունյանի կողմից: Մի խնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի սիստեմատիկ պեղումները սկսվել են 1937 թ. Ա.Տեր-Մկետիսյանի կողմից, իսկ այնուհետև շարունակվել են Կ.Ղաֆարյանի, իսկ այժմ՝ Ա.Քալանի աշխարյանի գլխավորությամբ:

Հետագա տարիներին սիստեմատիկ պեղումները ընդգրկվել են հնագիտական գրեթե բոլոր հիմնական տորաքածանումներին պատկանող տարբեր տիպերի հնագյուղերը Հին թարեղարի /պալեոլիթ/ հուշարձաններ ուսումնասիրվել են Ս.Մարդարյանի /Արտենի կամ Արտին լեռան ստորոտում և Հրազդան գետի միջին հոսանքում/, Բ.Շրիցյանի /Երևանի և Լուսակերտի քարայրներ/ և Հ.Ղազարյանի /Հատիս/ կողմից: Նոր թարեղարի /Խեղութիթ/ և պղնձեթարեղարի /Էնեոլիթ/ կամ խալկոլիթ/ բնակատեղիներ պեղվել են Արարատյան ղաշտում Ռ.Թորոսյանի /Թեղուս, Խաթունարի/ և Գ.Արեջյանի /Աղաքարտուր, Սասին քլուր/ ղեկավարությամբ: Վաղ քրոնզեղարի քազմաթիվ ընակավայրերի և դամբարանաղաշտերի ուսումնասիրման ընազավառում առավելացեա արդյունավետ էին Ե.Բայքուրյանի ու Ս.Մարդարյանի /Շենզակիթ/, Գ.Արեջյանի /Մոխրաքլուր, Խորաքաց/, Է.Խանզադյանի /Քրանովիտ/, Ս.Խասյանի /Այգեան/, Ռ.Բաղալյանի /Կատուռ/ կատարած հնագոտությունները: Կերչին տարիներին Տ.Խաչառյանը /Հատիթ/, Գ.Արեջյանը /Արուճ, Մայիսյան/, Հ.Զիմոնյանը /Կերին Նավեր/, Է.Խանզադյանը /Մեծամոր/, Վ.Հովհաննեայանը /Բարձամբ/ ծավալել են միջին քրոնզեղարյան հուշարձանների պեղումները: Հայաստանի ուշ քրոնզեղարի և վաղ երկաթեղարի փայլուն քաղաքակրթությունը բացահայտվել է Հ.Մանցականյանի /Լճաշեն, Մեանի ավագանի մի շարք դամբարանաղաշտեր/, Հ.Մարտիրոսյանի /Կարմիր քլուրի Նախուրարտական ժամանակաշրջանի բնակավայր/, Տ.Խաչառյանի /Աթիկ/, Ս.Խասյանի /Ասողի քլուր/, Կարմիր քերդ/, Մ.Դևիջյանի /Լոռի քերդ/, Է.Խանզադյանի /Մեծամոր/, Գ.Արեջյանի /Շամիրամ/, Ռ.Թորոսյանի, Լ.Գերոնյանի ու Ռ.Խնկելյանի /Ծիրակավան/, Գ.Միքայելյանի /Մեանի ավագանի ամրոց-ընակավայրեր/ հնագոտությունների շնորհիվ:

Հայ ժողովրդի պահմական զարգացման մեջ իր ուրույն տեղն է գրադարձեցնում ուրարտական մշակությթ, որը հիմնական հատկանիշներով տարբերվում է ինչպես նախորդ, այնպես էլ՝ հաջորդող մշակույթներից: Նրա սիստեմատիկ ուսումնասիրությունը սկսվել է Կարմիր-քլուրի պեղումներով, որոնք կատարվել են 1939-1971 թթ. Բ.Պիտորկանի ղեկավարությամբ: Անիի հնագիտական արշավակեցից հետո Դվինի և Կարմիր-քլուրի որշականմեցերը դարձան հնագետների, հայագետների և արևելյացետների նախառարառության կարևոր օջախներ: 1950 թվականից սկսվել են Երեցունի

ուրարտական քերդաբաղարի սիստեմահիկ հետազոտությունները /Ա.Հովհաննիայան և ուրիշներ/, որը կարերթագույն նշանակություն է ունեցել Նրանի նախապատմության և նրա տնկան ծագման պարզաբանման համար: Հետազոյւմ սկսվել են ուրարտական մշակույթի կարևոր մի թանի հնագյուղերի՝ Արգիշտիխինիւմի /Հ.Մարտիրոսյան, Գ.Տիրացյան/, Օշականի /Ս.Շահայան/, Մրազածի /Ա.Հովհաննիայան, Հ.Ավետիսյան/, Ռուբերի /Ս.Հմայակյան/, Արամուսի /Ս.Շահայան, Հ.Ավետիսյան/ պեղումները:

Մեծ հաջողությամբ է պատկվել Մ.Ք.ա. 6-րդ մ.թ. 8-րդ դարերի հին հայկական մշակույթի ուսումնասիրությունը: 1949 թ-ից Բ.Առաքելյանի ղեկավարությամբ սկսած Գառնիի ամրոցի պեղումները իրենց քննկանոն զարգացումն են ունեցել Հին Հայաստանի մայրաքաղաքներ Արմավիրի /Բ.Առաքելյան, այսուհետեւ Գ.Տիրացյան/ և Արտաշատի /Բ.Առաքելյան/ ուսումնասիրության միջոցով: Այդ խոշոր հուշարձանախմբերի հողոցին մասրամասն պեղվել են նույն դարաշրջանի նաև այլ տիպի հուշարձաններ՝ Շիրակավանում /Փ.Տեր-Մարտիրոսով/, Հացավանում /Գ.Տիրացյան/, Կարմաղյուրում /Ի.Կարապետյան/ և այլն:

Դվինի ուսումնասիրությանը զուգընթաց կատարվել են միջնադարյան բյու հնավայրերի պեղումները: Լոսի քերդի /Ա.Ղարիջյան/, Նալբանդի /Ա.Քալանթարյան/, Կանանավանցի /Գ.Գրիգորյան/, Ամբերդի /Ա.Հարությունյան/, Զաքարիի քերդի /Ե.Աստրյան/, Հին Գետիկի /Գ.Կարախան: ան/ Աղատիկի հովտի համալիրների /Հ.Շահայան/ և մի շաբթ այլ հուշարձանները պեղումներ թույլ են տվել վերակաբմելու վաղ /մ.թ. 4-8-րդ դ.դ./ և զարգացած /9-14-րդ դ.դ. միջնադարի քնակչության կյանքի տարբեր կողմերը, որն ընթացել է երկու և ավելի փոքր եշխանությունների մատադրություններում, Ֆեոդալական ամրոցներում գյուղական քնակավայրերում, և նական միաբանություններում:

Հնագետներին մեծ օգնություն են ցույց տալիս հետազոտման մի շաբթ նոր եղանակներ, այդ բնույթ և օդային հետազոտությունը, որի յիշոցով հեշտանում է ոչ միայն նոր հուշարձանների հայտնաբերումը, ուղղանց հատակածային լուծումը: Այս եղանակը Հայաստանում զետևել է այս օգտագործում Հին գոտել, շնայած այն բանին, որ այն վաղուց օգրոծվել է Կարմիր բլուրի Թաղաքային թաղամասերի ուսումնասիրության ժամանակ: Օղից շատ լավ երկույթ էին փողոցների դասավորվածությունը և քնակելի տների ու թաղամասերի հատակածերը:

Խորհրդային Միությունում, ինչպես և աշխարհի շատ երկրներում օգտագործվում է ստորջրյա հնագիտությունը: Հայաստանում առաջին առ այս եղանակը օգտագործվել է 1960 թ., երբ մի խումք մոսկովյան ջրառույցներ հետազոտեցին Սևանի հասակը՝ Լաշեն գյուղից մինչև Այրիվա տարածքը:

Հայտնաբերված հուշարձանները, որպես օրինք, ենթարկվում են պեղումների: Բնական է, որ մասնագետների ստկավության աստառով չեն կարող պեղվել բոլոր հուշարձանները: Մի մասը անմնազրվում է և վերցվում հաշվառման ու պետական պահպանության, մյուս մասը ենթարկվում է պիտումատիկ պեղումների, դրանցից շատերը շարունակվում են տասնամյակներով, այլ հուշարձաններում կատարվում են հնահանուզական պեղումներ, ծշգրգվում դրանց ժամանակագրությունն ու շերտագրությունը:

Հնագետը պեղումների ցննացքում ճգնում է հայտնաբերված ամեն մի իր շաշափել մերուով և հանկանալ նրա հարաբերակցությունը կողքի իրերի նկատմամբ: Հնագիտական իրերի անդարրությունը և նրանց փոխադարձ հերթականության բացահայտումը պեղումների վարման ամենակարևոր օրինքն է: Մշակութային շերտերի հերթականություններ, որոնց առաջացել են տարբեր ժամանակներում մարդու գործառնեության հետևանքով, կոչվում է շերտագրություն /առատիցութիւն, որը բաղկացած է լատիներեն ծածկ և հունարեն գրություն .,զրաֆոն., քառերից. առաջառու նշանակում է շերտերի նկարագրություն/, որին հնակելը շատ բարդ գործ է, դրա համար հարկավոր են որոշակի զիմելիթեներ և հուշարձանի իմացությունն: Որպես օրինք, վերին շերտերը ստուգիներից երիտասարդ են և ծածկում են նրանց: Եթե հուշարձանը անխաթար է, մշակութային շերտի կտրվածքում երևում է շերտերի հերթականությունը: Կարենք է ոչ միայն ստույգ ֆիցիւլ և թվազրել շերտերը առանձին-առանձին, այլև պարզել նրանց փոխադարձ հարաբերակցությունը և առանձին թվազրել ամեն մի շերտ: Հանդիպում են նաև միաշերտ հուշարձաններ /ինչպես, օրինակ, Նորաբացի քնակավայրերը, Զաքարի եթրդ ամրոց-քնակավայրը և այլն, որտեղ ամբողջ մշակութային շերտը վերաբերում է մի ժամանակաշրջանի: Ավելի հաճախ հանդիպում են զալիս քազմաշերտ հուշարձանները, որտեղ կյանքը շարունակվել է մի քանի ժամանակաշրջան, և նրանցից ամեն մեկը թողել է իր հնարքը: Այդ հուշարձաններից է մի չնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի միջնաբերդը, որտեղ նշամարվում են շարունակաբար /ուշից դեպի Վաղո/ ուշ, զարգացած և վաղ միջնադարյան շերտերը, անտիկ, վաղ երկաթի և վաղ օրոնզերարի շերտերը, որոնց ներկայացնում են շուրջ 5000 տարվա ունիացքում գոյացած տարբեր մշակույթների մնացորդները:

Այգեսնի քնակատեղին ունի զարգացած և վաղ միջնադարյան շերտ անտիկ, վաղ երկաթի, միջին և վաղ բրոնզեդարյան շերտեր:

Եթե կյանքը որևէ որոշակի հուշարձանի վրա երկար ժամանակ ընդհանվում էր, հնագիտական շերտերի միջն որոշ դեպքերում առաջանում էին .,մարուր., միջնաշերտեր, այսինքն քերովի հողաշերտեր, որոնք չեն պարունակում ոչ մի իր, այսպիսի պատկեր շատ ստույգ երևում է Այգեսնի,

Նախիշնենի, ջյուլթեփե 1-ին և Մոկրագլուրի արհետուկն ամող,, բւուր-ցնակպայրերում, երբեմն մենք շինարարեկն հորիզոնի կամ շերտի համառությունը համեստ է մի քանի մետրի, որը շատ դժվարացնում է առույգ ֆիքսման պրոցեսը: Դրա համար կա հնագիտուկն փորձված եղանակ. ավել շերտը փորկում է 20-25 սմ խորությամբ, այսինքն այնքան, որը բառ կարող է փորկել քանով:

Հափաման ծշտության համար նախապես կտարկում է ամբողջ հնագայրի ուելիք հանույթի, իսկ այնուհետև պեղամասի մասնամասն հատակագիծը, որը համապատասխանում է հանույթի ովյալներին: Պեղամասը քածանվում է քառակությունների /2x2 կամ 4x4 և այլն/, ամեն քառակությունը առմանում առույգ ֆիքսվում են բուրք շինությունները և գածենները: Հանույթի ժամանակ լայնորեն օգտագործվում են այնպիսի գործիքներ, ինչպես հարթագիր, թեղողություն և կիարեցելը:

Հնագայրը անհրաժեշտ է քացել մեծ մակերեսով: Սակայն պեղումները վարում են նաև փոսորակներով կամ ոչ մեծ պեղամասերով, բայց այդ եղանակով կարելի է քացանայել միայն հուշարձանի շերտագրությունը կամ լավագույն դեպքում քացել առանձին կտորույցներ կամ հնաբերեցի իրեք: Անհրաժեշտ է ամբողջուին ուսումնասիրել նաև դամբարանները և դամբանաբուրների ամբողջ բոււրքը: Դամբանաբուրների թերու հնարավոր են նաև շերտագրական դիտողությունները: Շերտագրական ուսումնասիրությունները դամբանախցում խիստ հազվադեպ են, այնուև ամեն ինչ թաղված է միաժամանակ, սակայն առ շպես է հնագատացնի հնագիտակն, թափի որ, ինչպես նշվել է, գոյություն ունեն կրկնակի թաղումներ:

Հուշարձանի շերտագրությունը և հնագետի դիտարկումները օգնում են թվագրության ամբողջապես և նրա առանձին շերտերի և գածենների թվագրությանը: Շերտագրությունը օգնում է նաև հուշարձանի հարացերական ժամանակագրության որոշմանը և պարզում է, թե որն է քացված շինություններից կամ գլուխած իրերից ավելի հին կամ նորը: Բայց ամենաքարդ խնդիրներից է քացարձակ ժամանակագրության քացանայտումը: Այլ կերպ առաջ, հնագետը պետք է որոշի, թե երբ է ստեղծվել ովյալ համարելիք կամ գոտածոն՝ կառաւով այն մեր առեղօրությանը: Այսպիսով, հարացերական և քացարձակ ժամանակագրության հանրագումարը կազմում է ցնդհանուրը ժամանակագրական համակարգը, որը ընորոշում է հուշարձանի, դամբարանի, իրեք, այսինքն յուրաքանչյուր ուսումնասիրվող հուշարձանի ժամանակը: Նման համակարգի կազմման և թվագրման ծշպրուման համար պարտադիր պետք է կազմվի հուշյունների ժամանակագրական սանդղակ: Սակայն ոնզամ միշտ թվացը վոր իրերի առկայության դեպքում /դրամներ, արժուագրությամբ իրեք և այլն/ դժմար է ծզգրիտ թվագրել հուշարձանի առթեթիվը, թափի որ իրերը կարող են հայտնվել այդ հուշարձանում շատ ավելի ուշ շընենում /օրի-

նակ, մ.թ.ա. 8-րդ դարի թագավորներ Արգիշտի 1-ի, Սարդուրի 2-րդի արժանազրություններով վահանները, աղավարտները, զավաթները գտնված են մ.թ.ա. 7-րդ դարի Թեյշերայինի ամրոցում:/ Եթե դրանց անգամ համաժամանակյա են իրերին, այնուհանդերձ դրանց՝ հողաշերտի մեջ ամփոփելու ժամանակը անպայման պետք է առըերպի պատրաստման ժամանակից: Անգամ այդ դեպքում տարբեր գործոնների միջև կարող է մի թանի տառ նյակ տարվա տարբերություն լինել: Այդ պատճեռով հնագիտական տասնին գոտածոների ամենաստույզ թվազրությունը սովորաբար ունի 50-100 տարվա մշակություն: Որքան հուշարձանը հին է, այնքան թվազրությունները անմիշ են: Մարդկային ամենավաղ պատմության փուլերի, աօենք պայտեռիթյան շրջանի հուշարձանների թվազրության մշտությունը շափկում է հարյուր հազար տարով:

Գտնված իրերի բացարձակ թվազրության պարզման համար հիմնականում օգտագործվում է վիճակագրական համեմատության եղանակը: Դրանից հետեւ կարենք նշանակություն է ստանում ամենատարածված գտածոների՝ խեցեղենի, քարի, ունկորի ուսումնասիրությունը: Ոչ պակաս նշանակություն ունի նաև մետաղի առարկաների ուսումնասիրությունը, չնայած այդ երերի մի մասը կարող էր կամ ներմուծված լինել: Կամ պատրաստվել շերպած օրինակների հիման վրա:

Գտնված թուրք իրերը բաժանվում են տիպերի: Ըստ մեկի, հարդարման եղանակի, գույնի, զարդանախշերի և այլն: Իրերի ամեն մի խումբ նշված հայականիշերով բաժանվում է տիպերի, ենթարիակերի և տարբերակների: Այս պիտով տիպա միանշանակ կիրառության նման նյութերի խումբ է, որը այլ խմբերից տարբերվում է որոշակի ձևաբանական հատկանիշներով:

Միանման նյութերից, հուշարձանները համեմատվում են այլ տեղերից հայտնի ննությունների, փակ համալիրների հետ, որը շատ հեշտացնում է դրանց ինչպես հարաբերական, այնպես էլ բացարձակ թվազրման գործը: Դիտարկելով տառներին հուշարձաններից՝ դամբարանից, քնակատեղիկց, զանձից գտնված նյութերը կարելի է տառնմասցնել հնագիտական համալիրը: Այսպիսով, հնագիտական համալիր կոչվում է հողի մեջ համաժամանակ ընկած հնությունների հանրագումարը:

Թվազրման համար մեծ նշանակություն ունեն ժամանակակից Ֆիգիկայի նկածումները: Դրանցից ամենատարածվածը ուղղուածիածնային եղանակն է, որը հիմնված է 14 տառմային կշռով ածխածնի թայքայման աստիճանը որոշման վրա: Բացահայտելով ածխածնի թայքայման աստիճանը օրգանական գտածոներում, կարելի է սահմանել ծառի կտրելուց հետո կամ կենդանու մահանալուց հետո անցած ժամանակը: Այս եղանակը տալիս է բացարձակ թվա-

գրություն, երեխմն շատ մեծ տառանումներով:

Առաջին գտածոների կամ համալիրների թվագրության հաստատումը շատ կարևոր է հնագետի համար, քայլ դա նրա միակ խնդիրը չէ: Նյութերի քանակական ազելացման հետ, ինչպես միաժամանակյա, այնպես էլ տարածամանակյա, պետք է ստեղծել ժամանակազրական ամբողջական սանդղակներ, որոնք ընդգրկում են աշխարհագրական ամփոփ տարածքներ, նույնիսկ՝ մայրաքաղաքներ: Այս աշխատանքը հնարավորություն է տալիս մի կողմից մեծ ծշտությամբ որոշել նորանայտ հուշարձանների ժամանակազրական դիրքը, մյուս կողմից՝ ուսումնասիրել են այստեղ գտնված իրենի արտադրության հարցերը, թե գտածոների պատմական տեղաշարժերի հետ կապված ինչպիսները: Այսպես օրինակ, մի ջին և ուշ ըրուզեղարյան մետաղը իրենի ժամանության և արտադրության մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Թողեղում, Կիրովականում, Քարշամբում, Լճաշենում, Լոռից բերդում և այլ հուշարձաններում գտնված իրենի զգալի մասը պատրաստված է հեթական ֆազավորության մշակույթի ազդեցության ներքո: Շատ ավելի վաղ՝ էնեուիթի դարաշրջանի հնավայրերում՝ նախիջնանի թյուլթափի 1-ինում, Թեղուտում, Շամիրամալիիում և այլուր ստույգ նկատվում են հալաֆյան և օքենյոյան մշակույթների ազդեցությամբ պատրաստված իրեր: Այդ առնթները հիշեցնում են հենց հալաֆյան և օքենյոյան խեցեղենը: Այս հանգամանքը մի կողմից օգնել է նշված հուշարձանների թիշ թե շատ ստույգ թվագրությանը, մյուս կողմից՝ տեղական մշակույթի յուրահակույթունների քացանայտմանը և նրա ունեցած կապերի արգարանմանը: Միջնադարյան Դվինից գտնված իրենի մանրակրկիտ քարտեզագրումը նույնական օգնեց վեր հանել տեղական արտադրության առանձնահատկությունները, ներմուծված իրենի նմանությամբ տեղականի արտադրությունը, ինչպես նաև ներմուծված նյութերի՝ սիրիական և քյուզանդական հայտնապահութեամբ:

Իրենի պատրաստման տեղությունը որոշելու համար, քացի տիպաքանական վերլուծությունից, զոյությունը ունեն Ֆիզիկատեխնիկական և քիմիական եղանակներ, ինչպես երկաթի և գունավոր մետաղների սաեկտորալ և մետաղագրական վերլուծությունը, որը թույլ է տալիս պարզել հնագույն իրենի պատրաստման տեխնոլոգիական արտադրության պատմությունը, ինչպես նաև ընթեռած հնարավորությունների դեպքում մշգրան տեղը: Այսպես, Լճաշենից գտնված ունենալի իրենի վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք պատրաստված են Զողի հանքերից առացված հումքից: Այդ նույն եղանակով քացանայտեց, որ Լճաշենի ռազմական զենքը պատրաստված է քարերաբար քրոնզից, իսկ քարը գեղարվեստական արժեք ունեցող քանդակները, ծիսական առարկաների և զարդերի մի մասը գույշված են մետաղական խորածից, որը նրանց տալիս էր արծաթափայլ երանգ:

Հետագա տարիներին ոկտեմբերի հեցեղենի ուստագենեակառուցվածքյին վերլուծության կիրառումը, որը հնարավորություն է տալիք վերանայել ինչպես անոթների պարագաներն եղանակների բազմադարձությաւնը, այնպես էլ դուրս ենիվի պատման արագությունը, որը շատ մեծ նշանակություն ունի ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի ինքարանըության պատմության համար:

Հնագիտական հնագործության կարևորագույն բաղադրամասերից է առանձին հնագիտական մշակույթների բացահայտումը: Բարտեզագրելով բառ ծամանակաշրջանների ընթափայթերի ու դամբարանադաշտերի տեղաբաշխությը, այդ հնագույթերուն հայտնաբերված նարտարանական կառույցների ճեզվերն ու շինարարական եղանակները; Թարից, կավից, մետաղներից, փայտից և այլ նյութերից պարագաներ աշխատանքի գործիքների, զենքերի, զարդերի, կենցղղի առարկաների ճեզվի յուրահատկությունները, թաղման սովորույթներն արագույղու յուրահատուկ մնացորդները, կիրառական արվեստի առարկաներով ներկայացված զեղարվեստական տարբեր ոմերի տարածումը, ոշշարհի հնագետները հանգել են որոշակի եզրակացությունների: Նրանց հայտնաբերել են, որ նշանակած մնացորդների որոշակի հատկանիշներով քննությունը տիպերը, միակցված եղանակով հանդես գալով տարբեր հնագայրերում, զբաղեցնում են աշխարհագրական որոշակի տարածքներ և գոյություն են ունեցել ժամանակագրական նույնանոն որոշակի ասմաններում: Հնությունների տիպարանական այդտիպի ընդհանրությունները անվանվել են հնագիտական մշակույթներ: Համաշխարհային հնագիտության փորձը միանըշշանակ ցույց է տվել, որ գոյություն չունի հիմնական թուղթը հատկանիշներով ինքը կրկնող հնագիտական երկու մշակույթը: Ցուրաքանչյուրը հնագիտական մշակույթ մարդկանց որոշակի ընդհանրության գործունենության արգասիք է և քննութագրում է տպյատ ընդհանրության նմանությունն ու տարբերությունը մարդկանց այլ ընդհանրություններից: Մյսեղից պարզ է դառնում հնագիտական տառների մշակույթների սահմանագաղտման և նրանց փոխառնչությունների ուսումնասիրության նշանակությունը ցեղախմբերի ու յողովուրդների կազմակորման և հետագա պատմության հնագործուման համար:

Եթնիկ պատմության համարքեց վերակազմության համար հնագիտությանը մեծապես օգննդակում է Ֆիզիկական մարդաբանությունը, որը թույլ է տալիք բացահայտել հնագույն բնակչության մարդաբանական տիպերը:

Տնտեսական պատմության հարցերի բացահայտման համար մեծ նշանակություն ունի Հայաստանում լայն տարածում առացած կենդանիների մնացորդների հնակենդանացանական ուսումնասիրությունը:

Բրւլոր այս եղանակները թույլ են տալիս հնագետներին լիովին ուսումնասիրել նյութական մշակույթին ընդհանրապես, իսկ ազգագրության մեջ տարածված գերազարուկների մեթոդի օգտագործման միջոցով հնարավոր է ատելերացում կազմել հնագույղող հուշարձաններում ապրող տեղաբնիկների գարզացման աստիճանի մասին:

Արքեստի առարկաների գտնված նմուշները՝ տարցեր օջախներ, արժանիկներ, հմայիլներ, զարդեր, ապառաջինության նմուշներ /գանձններ, սաղավարտներ, գոտիներ, նվիրառվական թիթեղներ և այլն/, որոնք զարդարված են դրոշմված կամ փորագրված պատկերներով, թույլ են տալիս որոշակի կարծիք ունենալ նրանց տերերի հոգեւոր մշակույթի մասին:

Հնագիտական աղջյուրների հայտնաբերման, մշակման և մեկնաբանման համար հնագետը դիմում՝ է տարցեր գիտությունների՝ երկրաբանության, հնաաշխարհագրության, Ֆիզիկայի, յաթեմատիկայի, աստղագիտության և այլ գիտությունների օգնությանը: Հնագիտական աղջյուրները հիմք են ծառայում հնագիտության հիմնական խնդրի ուսումնասիրության համար, այն է՝ հնարաբակական համակարգերի զարգացման թացանայումը՝ սկսած նախնադարյան համայնական հասարակարգից՝ վերջացրած միջնադարով:

Հնագետները պատմական վերակազմության համար ելնում են այն գաստից, որ նյութական մշակույթի և հասարակական կյանքի միջև գոյություն ունի որոշակի կապ: Այս պատմառով նրանց գգոտում են վեր հանել առանձին ժողովուրդների և ամբողջ մարդկության զարգացման սոցիալական պերոցեսները, որը մարդկության զարգացման հիմնական ռովանդակությունն է, և ապացուցել, որ կարելի է ինքնուրույն դնել և լուծել հնագիտական խնդիրներ:

Հնագիտությունը աշխարհի առաջ թացեց նախօրոք անհայտ հնարաբություններ և պետություններ և հազարմյակներով հնացրեց մարդկության պատմությունը:

Աշխարհագրական միջավայրը հնագույն մշակութային համակարգերի զարգացման և գոյատեսման նյութական անհրաժեշտ պայմաններից է: Հնագիտական հուշարձանների, աեղած իրականության հետազոտության անցակելի մասն է կազմում ուսումնասիրվող տարածքների ընական հարստությունների, կլիմայական և առհասարակ աշխարհագրական պայմանների ըննությունը:

Դասագրքում Ներկայացվող հնագիտական մշակույթների, հայ ժողովրդի պատմական զարգացումը ընթացել է Հայկական լեռնաշխարհում, որը Ֆիզիկա-աշխարհագրական տեսակետից մի առանձին տարածույթ է /ուղղոն/, միասնական լեռնային երկիր՝ ծալբավոր, ծայբաշեկորավոր լեռների, հրացնային սարանարթերի ու զանգվածների, միջլեռնային զոգաճովիտների ու լճային զոգավորությունների, լեռնազագաթների ու գետանվատների բարդ համակարգերի ամբողջությամբ: Հայկական լեռնաշխարհը Աւարական-Հիմաւ-

յան լեռնային կառուցվածքների համակարգի օդակներից և զրավում է ճավրո-Անդրկովկայան կենտրոնական շրջանը՝ Այն ընկած է հրանտկան և Անտուլիական քարքարավանդակների միջև և զբաղեցնում է հյուսիսային լայնության  $36^{\circ}40'$  -ից մինչև  $42^{\circ}08'$ , արևելյան  $36^{\circ}$ -ից մինչև  $47^{\circ}32'$  ընկած տարածությունը, 344-780 քառ կմ ընդհանուր մակերեսով։ 'Հայկական լեռնաշխարհի հյուսիսային առնմաններն անցնում են Աև ծովի հարավային ափով և Թոքք Կովկասի հյուսիսային լանջերով։ Հյուսիս-արևելյում՝ Թոքք Կովկասի հյուսիսարենելյան լանջերով, արեվելյում՝ Կարսու զետի հովուով /Մրացօի աջ վտակը/, հարավ-արևելյում՝ Խարա-Դաղի, Միջոկ-Դաղի լեռների հարավային լանջերով և Ուրմիոյի գոգավորության արևմույս համաձում։ Հարավում Հայկական լեռնաշխարհի ցեղական առնմանները համարվում են Քրդասանի լեռները և Հայկական ճակրոսը։ Մրեմայտն առնմանները ցցուն չեն ընդգծված և ոչ մեծ զոգավորությունների գծով /Ամիկյան, Սարաշի, Կիզիլ-Իրմակի, Գայլ զետ/ վերին հոսանքի և պետի հյուսիսի՝ Եշիալ-Իրմակի ստորին հոսանքի գոգավորություններով տարհանարք երիցվում են Անտառուիական քարքարավանդակներն։ 'Հայկական լեռնաշխարհը կոնկրետ օքնողքածիկ և ժետքանական հասկացություն է և իրենից ներկայացնում է միտսական քարքարավանդակային երկրամաս։ Վերջինիս ռելեֆը ժետավորվել է երրորդական-չորրորդական շրջանում և համարվում է համեմատաբար երիածարղ գոյացում, որի առնաններում երկրակեղենի շարժումները դեռևս ավարտված չեն։ Հայկական լեռնաշխարհի լեռնային համակարգերի հիմնական միավորը թիր և կորուված լանջերով, քարքարագաբթ, Ֆաված լեռնաշղթաներն են, որոնցում առանձնանում են հետեւյալ ուղղանայաց գոտիները՝ ցածրադիր /մինչև 1500 մ բարձրության/, համեմատաբար բարձր /1500-ից մինչև 2800 մ/ և բարձր լեռնային /2800-ից պակելի/։

Հայկական լեռնաշխարհը Սոտչավոր Սահայի հոշորագույն զետերի ջրագծանն է։ Այստեղից Մեջզօր տոնող աճենային գետը Նփրատն է /2700կմ/, որը հսկայական լեռնաշխարհի տարածով հոսում է 600 կմ։ Այն զոյտնում է երկու զետերի միախառնումից՝ բռւն Նփրատ /այժմ Կարա-սու/ և Արածանի /այժմ Մուրաղ/։ Տիգրիս կամ Դդկան զետն ունի 1950 կմ երկարություն, որից 540-ը՝ լեռնաշխարհի սահմանաներում։ Արածան ունի 1072 կմ երկարություն և մեծ մասամբ հոսում է լեռնաշխարհի տարածով։ Հյուսիսում Հայաստանը եզերվում է Կուր զետով։ Աև ծովը թափվող խոշոր զետերից են Ծորոխը և Գայլ զետը։ Հայկական լեռնաշխարհի զետային ցանցի մեծ մասը տելավագեր է, արագահոս և սավարկության համար պիտանի չե։ Հայկական լեռնաշխարհին թնորոշ են միջյանց հատվածը բարձունքների միջև գոյացած։ զոգավորությունները՝ Արարատյան, Շիրակի, Ալաշկերտի, Մանազկերտի, Մուշի, որոնց մի մասը զբաղեցնում են լմերը։ Արան-

ցեց առավել խոշորներն են Ռւբիկան, Կանք և Սկանք:

Ռւբիկա /Կապուտան, Ռեզայե/ լիմբ գրադացնում է Հայկական լեռնաշխարհի և հրանտական ցարքը պատմակի միջև ընկած գողավորության մեծ մասը: Գտնվում է 1276 մ բարձրության վրա, հայելու մակերեսը՝ 578 հազար քառ. կմ, խորությունը՝ 15 մ: Լիմ ջուրը արտակարգ աղի է: Լիմ է թափվում 12 գետ: Կերչինս ցածրադիր ափերը շատ նախառավոր են երկրագործության համար: Հնուց ի վեր լիմը օգտագործվել է նավարկության համար:

Վանա լիմը գտնվում է 1720 մ բարձրության վրա և գրադացնում է 3690 քառ. կմ տարածեք: Նրա ջրերը պարունակում են մեծ քանակությամբ սոլոս, որի պատճենով այն ոռոգման և խմելու համար պիտանի է: Լուս ապրում է ձկան մի տեսակ՝ տառենթ, որը հնուց ի վեր արդյունահանվել է: Լիմ արևելյան և հյուսիսարևելյան ափերը մեղմ կլիմա ունեն և հարմար են շրջակա գետերի ջրերով ոռոգելի երկրագործության համար:

Սևանա լիմը գտնվում է 1916 մ բարձրության վրա: Նրա մակերեսը 1416 քառ. կմ է /Մինչև լիմ մակարդակի արհետական նվազումը/: Լիմ ափերը երիզակած են քարք լեռնաշղթաներով: Սևանա լիմ է թափվում մոտ 30 գետ ու գետակ, նրանից սկիզբ է առնում միայն Հրազդանը:

Հայկական լեռնաշխարհին ընորոշ են կլիմայական հակադրություններ, ուր հերթափոխվում են կլիմայի ըունը տիպերը՝ մերձարևադարձայինից մինչև հավերժական ժյուն և սպոռայց: 25ուն շափավոր ցուրտ է: Հունվարի միջին ջերմաստիճանը տառանվում է -5-ից մինչև -9 սահմաններում, նվազագույնը՝ -35: Լեռներում տեղումները հաշում են մինչև 500-700 մ.մ., իսկ ցածրադիր վայրերում՝ 150-300 մմ: Գարունը պարունակում է, անժրևային, ամառը չոր է և տար:

Հայկական լեռնաշխարհի ըունականությունը շատ հարուստ է, որտեղ պայմանավորված է ույելիթի, հողի և կլիմայական պայմանների քազմազնությամբ: Վերջինս գտնվում է երկու իրարից խիստ տարբեր քուսաքանական-աշխարհագրական երկրամասերը՝ խոնավ և անտառու Վրկատա-Պոնտուկա և շոր ու անտառագուրք հրանտականի միակցման վայրում: Մինչև 2000-2200 մ քարձրության վրա, լեռնալանջերին, հանդիպում են անտառներ /կաղնի, համար, սոմի, առանձին պուրակներով/ կեշի և լորի/: Արանցից ավելի քարձր՝ 2200-2700 մմ-ի վրա, ամուս են թփուտներ, որոնցից քարձր ժայռեր են կամ ալպիական մարգագետիններ: Հայկական լեռնաշխարհի ցածրադիր հովիտները թուփականին թերթաքեր են և նախառել են երկրագործության զարգացմանը, իսկ քարձր լեռնային մարգագետինները՝ անտառապահության զարգացմանը: Հայկական լեռնաշխարհի ընդերքը հարուստ է

օգտակար հանածոներով։ Հայտնի են պղիսճ-մոլիբդենային /Քաջարան, Ազգարակ, Լիմք, Հանքավան և այլն/, պղնձի /Մասնեռւլի, Ալավերդի, Շամփուղ, Ղափան, Գետաքեկ և այլն/, ոսկու /Զող, Մեղրածոր, Քաջարան, Հասանկալա, Վանա լճի ավազան և այլն/, կապարի ու ցինկի /Ախթալա, Ղազմա, Պրիվոլնոյե/ հանքավայրերը։ Երկաթով հարուստ են Մուշի, Բիթ-լիսի և Վանի շրջանները, ինչպես նաև Ուրմիայից արևմուտք ընկած լեռները։ Կապարի, պղնձի և երկաթի հարուստ պաշարներ կան Շշոտունյաց լեռներում, որոնք պանդաքար կոչվել են „կապարանատաց և երկաթանատաց լեռներ,,,: Երկաթի, պղնձի և արծաթի հանքերով հայտնի է Սև-զեղ-տուն գավառը Աղմանիքում։ Հնագույյն ժամանակներից Հայկական լեռնաշխարհը և հարակից շրջանները եղել են մետաղի արդյունահանման խորշորագույն բնույթուններ և համարվում են մետաղազործության սկզբնական օրգաններից յեկը։

Լեռնաշխարհի տնտեսական կյանքում կարևորագույն դեր են ունեցել քարքարովի հարթավայրերը, հովիտներն ու զողավորությունները, որոնք հնագույյն դարաշրջաններից եղել են երկրագործության կենտրոններ։ Արածանիի գետային ավազանում ընկած են բազրիկանդ, Հանք և Տարոն գավառները կազմող դաշտերը, Արածոսի հովտում՝ Բասենի, Ծիրակի, Նրասիսամորի սարանարթերը, որոնք հացաքույսերի մշակման համար բարենապատ պայմաններ ունեն։ Հայկական լեռնաշխարհի ընտառամական շրջաններից կարևորագույնը Արարատյան դաշտն է։ Մաս լեռնաշխարհի առավել արգավանդ հատվածն է։

Հայկական լեռնաշխարհը, շրջապատված լինելով քարքը լեռնաշղթաներով, հարեւան երկրների հետ հաղորդակցվում էր մի քանի լեռնանցքների միջոցով, որոնք ին հայերի մոտ կոչվում էին „զորունք,, „կապան,, „պահակ,, և այլն։ Տիգրիսի ակունքների մոտ Հայկական Տավրոսի ընտառնեց հարավից կտրում է լեռնանցքների մի ամբողջ համակարգ, որոնցից հիշտակեւի են Զորապահակը, Կրերաց լեռնանցքը Կորդվաց լեռներում։ Վասպուրականում հայտնի են Կոտորի և Սուրբ Խաչ անցքերը։ Հայտնի են Դրույք Հայոց և Դրույք Կասպից լեռնանցքները /Խարաբաղ 2/։ Փոքր Կովկասում հայտնի են Դուռն Փառոսի /Թատանախաչ/, Սոլյո-Բերդ-կունքի, Շահապունքի /Բոնակոթ/ անցքերը։ Քարքը Հայքի և Հայկական պարի միջև հայտնի է Գայլախազուտ, Աղտամոր, Չոր և „Կղերսութե,, կոչվող միմյանց հաջորդող լեռնանցքների շարանը։ Նշված լեռնանցքներով անցել են ին աշխարհի ուղղմասարատեզիական ու միջազգային քարավանային առևտորի մասնապարհները, որոնց իշխելու համար հարեւան պետությունները արյունահեղ պատերազմներ են մդեւ, և այդ պատերազմների թատերացեմը մշտապես լինում էր Հայաստանը, որի ուղղմասարատեզիական նշանակությունը շատ մեծ էր։

## ԾԱՄԻ ԴԱՐ

Քարի դարի հնագիտության պարզերացման հիմքը թարք տարքեր ծնկերով մշակելու տեխնիկան է. այն իր ամբողջ գոյատևման ժամանակաշրջանում մնում է գործիքներ պատրաստելու հիմնական հումքը:)

[Քարի դարը մի դարաշրջան է, որի ընթացքում ձևավորվեց մարդը և հարյուր հնագրավոր տարիներ շարունակ օգտագործեց միայն թարք գործիքներ: Այն բաժանվում է երկու անհնավառ մասերի. հին թարի դար՝ պալեոլիթ /հունարեն „պալյայառու,, – հին և „լիթոս,, – թար թառերից/ և նոր թարի դար՝ նեոլիթի դարաշրջանը հարյուր անգամ երկարաւան է նեոլիթից:]

Պալեոլիթի հնագիտությունը՝ պալեոլիթագիտությունը, հնագիտության մի յուրօրինակ բաժին է, որը բավկանին հստակ տարգրավում է ավելի ուշ դարաշրջաններ ուսումնասիրող այլ բաժիններից:

[Պալեոլիթագիտության տարրեան հսկայական ժամանակահատվածների ուսումնասիրությունն է, որտեղ հնագետը գործ ունի ոչ թե դարերի, հնագրամյակների, այլ մի հիոնավոր տարիների հետ: Նման հսկայական ժամանակային հեռավորության պատճուռով հնագիտական հուշարձանները, ինչպես և պալեոլիթյան գտածոնները մեզ են հասնում ոչ մեծ թանակությամբ, այն էլ խիստ քեկորային ժևով:]

Պալեոլիթյան գտածոններից մի շարք օրինակներ, մասնավորապես, փայտե, կաշվե առարկաներ չեն պահպանվել կամ էլ հանդիպում են հազվադեպ: Քանի որ պալեոլիթը նախորդում է ներկայիս ժամանակաշրջանին, իսկ բազմաթիվ կենդանիներ և քուսական աշխարհի տեսակներ շատ վաղուց անհետացել են, ուրեմն առավել արդիական է պալեոլիթագիտության անմիջական կապը այլ, առաջին հերթին չորրորդական ժամանակաշրջանի թանգան գիտությունների՝ քուսաքանության, հնէաբանության և սեղմենտաբանության /հստվածքային պատրների ձևավորում/ և այլնի հետ:

Կերպարես, Պալեոլիթյան մշակույթն իր իսկ ամբողջականությամբ հայտամանակայաց աշխարհում թացահայտվում է որպես առավել միաբնույթ, թան ուշ ժամանակաշրջանի մշակույթները:]

/Հին կամ վաղ /ստորին/ պալեոլիթը ըստ սկզբնական տիպաքանության ստորաբաժանվում է հնեւյալ դարաշրջանների՝ մինչշելյան, շելյան, աշելյան, և մուստիերյան: Կերին կամ ավելի ուշ պալեոլիթը սկսվում է մ.թ. ա. 40-35 հազ. տարի առաջ՝ ստորաբաժանվելով հետևյալ դարաշրջանների. օրինյակի, սոլյուտը, մաղլենյան ու ագիլ-տարդենուադյան: Նրբեմն,

թացի ստորին և վերին պալեոլիթից, առանձնացվում է նաև մի ջինք, որին վերագրվում են աշելյան, մուստիկերյան հազիտական մշակույթները: Այդ ժամանակագրությունը կազմված է ըստ ֆրանսիայում կատարված համապատասխան հայտնագործությունների և դիտական շըշանառության մեջ է դրվել Ֆրանսիացի հնագետ Մորտիլյեի կողմից /օրինյակի դարաշրջանն ավելացվել է նրանից հետո/:

Գիտնականները, պահանջով Մորտիլյեի՝ պալեոլիթի հիմնական ժամանակագրական սխեման, վերջին տասնամյակներում համառորեն աշխատում են ծցտումներ մտցնել պալեոլիթի մշակույթի ժամանակագրության և դասակարգման մեջ, քանի որ այն բավականին էական փոփոխությունների է ենթարկվել: Սյստեմ, ամենավաղ պալեոլիթյան դարաշրջանը ներկայումս ընդունված է կոչել օլդուվա /նախորդ ժամանակագրությամբ՝ մինչշելյան/: Համայն օգտագործվում է „գետաքարերի մշակույթ,, մենք, որին հաջորդում է աշելը /նախորդ ժամանակագրությանը համապատասխանող/ և մուստիկերյանը: Մեկ այլ խումբ հնագոտողներ պալեոլիթի եռանդամ քածանման կողմնակիցներ են. նրանք այդ ժամանակաշրջանի վաղ կամ ստորին դարաշրջանները օլդումայից հասցնում են մինչև ուշ աշելը ներառյալ, իսկ մուստիկերյան ժամանակաշրջանը առանձնացնում որպես մի ջին պալեոլիթ:

Սուպել ենթաքածանվածությունը ուշ կամ վերին պալեոլիթի համար, ի տարբերություն ստորինից, ունի միայն տեղային ընույթ: Օրինակ կարող է ծառայել Ռուսաստանի հարթավայրերի, Ղրիմի, Կովկասի և այլնի ուշ պալեոլիթը, որն ունի որոշակի փուլեր, սակայն դա ընդհանուր չէ ամշող ԽՍՀ տարածքի կամ էլ ամեռղջ աշխարհի ուշ պալեոլիթի համար: Ներկայիս գիտական ոլորտներում կարելի է հաստատել, որ ամենուրեք ներկայացված ուշ պալեոլիթի ժամանակագրության ենթափուլերը, որոնք մի քանի տասնամյակներ առաջ համարվում էին օրինյակը, սոլյուտրեն, մաղլենյանը և այլն, իրականում ըստակայում են, քանի որ դրանք ընորոշ են միայն Ծվրոպայի որոշակի շրջաններին:

Սյստեմ, Կովկասի ուշ պալեոլիթի մշակույթն իր ողջ թագմագանությամբ շատ որոշակի ընդհանուր գծեր ունենալով. հանդերձ, գտում է դեպի Մերձակոր Արևելքի մշակույթը: Կովկասի, Զագրոսի, Լեռնատի հուշարձաններն ակնհայտ նմանություն ունեն և կարող են միավորվել այս մշակույթի ինքնատիպ զարգացածություն ունեցող առաջավորասիական շըշանում: Այն տարբեր վում է հարավում՝ հյուսիսաֆրիկյան, արևելքում՝ միջնասիական և հյուսիսում՝ հարավում սահմանային մշակույթներից:

Վերջին տասնամյակների հրաշալի հայտնագործությունները թափականին հարստացրին մեր գիտելիքները մարդու ծագման մասին, որի սկզբ դրվել է 18-19-րդ դ.դ. մի շաբթ քնագետների կողմից: Դեռևս նարև լիննեցը

մարդուն դասում էր կենդանական աշխարհի համակարգը՝ միացնելով նրան այն ժամանակ հայտնի կապիկների հետ, առանձնացնելով կաթնասունների խմբում որպես պրիմատների տիպ /լստիներեն, „առաջին,, քաղից/:

Կապիկների համակարգված և համեմատական անառողիայի խոր հետազոտությունները, ինչպես և 18-րդ դ. երկրորդ կեսին, 19-րդ դ. մարդու անառողիային վերաբերող աշխատությունները հնարավորություն ընծերեցին թուան Հեքստիին անելու հաջորդ թայլը, որը հանգեցնում է մարդու և մարդանան կապիկների նմանությանը միենույն համակարգում:

Դեռևս Զալեզգ Դարվինը ի մի է բերել գիտությանը հայտնի ողջ պաշտը անթրոպոգենեզի ընազավորում և համոզի կերպով ցույց տվել կենդանական էակի անցումը մարդուն՝ մարդացումը: Մակայն մարդու հիմնական տարբերությունը կենդանական աշխարհից հանգում է ոչ կենսառանական գործունիք:

Փ. Էնգելսը ցույց է տվել, որ մարդացման պրոցեսը տևել է քավականին երկար: Որպեսզի մարդու նախնին սովորեր պատրաստել աշխատանքային գործիքներ, պետք է ձերքագտուի զազանային վիճակից, մասնավորապես, կանգներ երկու ոտքի վրա:

Սուաչընթացն այնքան դանդաղ է ընթանում, որ անցան հարյուր հազարավոր տարիներ, մինչև մարդը կարողացագ պատրաստել պարզունակ թարե աշխատանքային գործիքներ:

Ներկայումս Հին աշխարհի տարբեր շրջաններում հայտնի են երրորդ կան ժամանակաշրջանի վերջին մեծ քանակությամբ մարդանան կապիկների գտածոներ: Մարդուն տապակել մոտ է կանգնած, այսպես կոչված, դրիոդիթեկների խումբը, որոնց մնացորդները գտնվել են ուշ երրորդական ժամանակաշրջանի տարբեր շրջաններում, յասնավորապես, Արևմտյան Ծվրապայուն, Աֆրիկայում և Ասիայում: Այդ կապիկների մեջ առանձնանում են մի քատականեր, որոնք ունեն հստակ ժեպառնական ինցնասիպություն, դա է է տվել դրանց նույնացնել մի թարձր կարգի կատեգորիայի մեջ: Դրիոդիթերը ներն իրենց շափերով հիշեցնում են ժամանակակից պավիաններին և շիմակ գեներին: Մրանց քնորոշ ժեպառնական հատկանիշներից պետք է առօննի ցնի ժանիքների համեմատաքար փոքր լինելը և կտրիչ ատամների առավելությունը, ինչը և համարվում է առաջընթաց դեպի մարդացման մանակարհը, եռ

1-ին շերտի կոպիտ խոհանոցային խեցեղենը, որ թվագրվում է մ.թ.ա. 20-19-րդ դ.դ., շարունակում է զոյատնել Ավերին շերտերում առանց որևէ որակական հոփախությունների: Մնացած խեցանոթները նույնական են 2-րդ և 3-րդ շերտերի խեցեղենին: Այն ներկայացված է հիմնականում սև փայլեցրած խեցեղենով, որը 1-ին շերտի 2-րդ խմբի խեցեղենի զարգացած և կատարյալ փուլն է: Հանդես են գալիս մինչև 65 սմ քարձության խոշոր անոթներ: Հատկապես նրբանում է մանրածավալ սպասքը, որը երեխն ունենում է կրկնած նստուկներ: Շուրջերի տակով անցնում է հորիզոնական լայն ակոս: Խախորդ փուլի համեմատությամբ նշանակալի կորեն լավանում է սկացման և հատկապես անզոքների վայլեցման որակը: Կերին շերտերի խեցեղենն ունի սև փայլեցրած, ազագային, մակերես: Քայլ կավի վրա սուր գործիքով

արված գծագրղին փոխարինում է ատամնավոր ։ Թայլող-դրոշմիջք։ Զարդա-նախերը բազմազան են և բաղակացած են կամարածն գծերից, հորիզոնական գարղագոտիներից, ներգծված կիսաշրջաներից և օվալներից։ Հանդիպում են գծված շեղանկյուններ, զիգզագաձև գծեր և այլն։ Կերչիններին շա-մու Խեցեղեն հայտնաբերվել է Գեոյթեփել թլուրում, որն ընկած է Ու-գերլիկից 10 կմ հյուսիս-արևմուտք, Թողոքյան դամբանաբելուրներում, Սամթավրոյում և Պրինեփիում /հրավային Օսեթիա/։ Ինչ վերացերում է Հայկական լեռնաշխարհին, ապա Նման խեցեղեն լավ հայտնի է Մուխանաթթա-փայի Կիրովականի, Այրիվանցի, Ցամաքաբերդի, Լճաշենի և այլ հնավայրե-րից։

Կերին երկու շերտերում սև փայլեցրած խեցեղենի հետ հանդիս է գմ-լիս գունազարդը, կազմելով Ուգերլիկիթեփելի խեցանոթների 3-րդ խումբը։ Մյու միազույն է, արված սև ներկով՝ կարմիր հիմնազույնի վրա։ Գունա-զարդը արվում է շուրջի վրա և անոթի վերին հատվածում։ Այն արված է բավականին անփույթ և իրենից ներկայացնում է մի թանի զուգահնու ու-ղիղներ, ալիքածն և զիգզագ գծեր, թեք ստվերագծված շեղանկյուններ։ Մեկ ներքում անոթի ուսին, կարմիր անզորի վրայից արված է սպիտակ ան-գործի լայն գոտի, որի վրա սև ներկով զարդանախշ կա։ Զարդարման այս եղանակը առկա է նաև Մյօկեանի խեցանոթների թեկողներից մենիկ վրա, միայն այն տարբերությամբ, որ այստեղ սպիտակի փոլարեն հիմնազույնը մարմնա-զույն է։ Ուգերլիկի խեցանոթների վրա նկատվում են այնախսի ավանդա-կան գծեր, որոնք ծաղկում են միջին բրոնզի դարաշրջանում և ուշ բրոնզի դարի սկզբում։ Ինդիս գալով այնախսի հայտնի հուշարձաններում, ինչպիս-սին են Թոների, Կիրովականի, Լճաշենի, Լոռի-բերդի հարուստ դամբանա-զույն է։ Հատկանի հուաքրեթը է վերին շերտերում նստուկով մանրա-ծավալ կտումների հանդիս գալը, որը գիտվում է որպես հաստատուն մետա-դական ճեերի արտահայտություն խեցեղենում։ Այդ տումով հետաքրքրու-թյուն են ներկայացնում Կիրովականի, Թոների ոսկյա և արծաթյա անոթ-ները /ինչպես ծիծենակացերդի կավե գավերը/։

Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկասի միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի ուսումնասիրության համար բացառիկ կարելոր նշանակություն ունեն Հայկական լեռնաշխարհի հյուսիսային ծայրամասում ընկած Թոներ-յան դամբանաբելուրներու։ Թոներյան դամբանաբելուրը, որը պեղել է Բ.Ա.Կուֆտինը 1936-47 թ.թ., ունի մինչև 5 մ բարձրության լիցք և խոշոր դամբանախցեր։ Այսպես, նո՛ 36 դամբանախցի դամբարանարանը ուներ 175 քառ. մ մակերես։ Խոշոր քարերով նրա պատերը շարվածքը պահպանվել է 4 մ բարձրությամբ։ Որոշ դամբանաբելուրների հիմնառողային դամբարաննե-րը /նո.10/ ունեին 8 մ խորություն, չհաշված լիցքի բարձրությունը։



Աղ. 38. Միջին քրոնակի դարաշրջանի խցեղեն Հարիմից:








Նո. 17 դամբանասրահի շափսերը հասնում էին՝ երկ. 14 մ լայն. 7,5, խոր. 6 մ: Հիմնահողային դամբանախցերը հածախ մինչև 3 հազ. քառ.մ մակերեսով թմբի նկատմամբ արտակենտրոն տեղադրություն ունեին: Նման շափսերը և տեղադրությունը բացադրում են, թե ինչու Թոեղթի բազմաթիվ դամբանաքարեւուրներ, ի տարբերություն մյուսների, մեզ են հասել անձեռնմօխելի վիճակում: Թոեղթի միջին քրոնգեղարյան դամբանաքարեւուրներն առանձ նաև ունեն են բազմազան թանկարժեց մետաղների՝ ոսկյա, արծաթյա զավաթների, հաղարանների առարկաների, բազմազան գինանշանների զարդարման, ոսկյա շրջանակների, փայտյա իրերի ոսկյա երեսպատճերի առկայությամբ:

Թոեղթյան դամբարանաքարեւուրների գույքին ընորոշ գծերից մեկը զենթի հազվագյուտ լինելու է: Այստեղ գտնվել են մի թանի վանակատե և մեկ կայծքարե նետասւաք, մեկ խողովակաթառ նիզակ և զաշույների երեք շեղե մեծեր, արծաթե, երկուսը՝ ըրուզի: Քննարկվող դարաշրջանի Թոեղթյան դամբարանաքարեւուրների թաղումներու իրենց ընույթով շաժանվում են երկու տիպի՝ հիմնահողային դամբանախցերով և խուց չունեցող: Երկուսն էլ նախատեսված են անհատական թաղումների համար: Երկու տիպի դամբարանների թմբերը բաղկացած են խոշոր քարաքենորներից և գետաքարերից:

Երեսմն առանց խօսի դամբանաքարեւուրների լիցքը կարծես թե շերտավոր կազմված ունի: Այն է՝ ստորին շերտը քաղկացած է խոշոր քարերից, որոնց վրա լցոված է կրաքարի խիճը, իսկ վերին լիցքը կազմված է միջին մեծության քարերից:

Զգված քառանկյունու տեսքով հիմնահողային դամբանախցերը կողմեռովզած են արևելքից արևմուտք: Խոշոր դամբանախցերը հատակներն, ինչպես չյուսխային Կովկասի Մայկոպյան մշակույթում, պատված են խիրով: Դամբարանների զգալի մասը ունեն հիմնահողային խուցի թթությամբ իջնող դամբանամուտք՝ „դրոմոս“: Հիմնահողային դամբարան-իջցերը ծածկվել են զերանաշարքով, որի վրա լցովել է դամբարանաքարեւուր կազմող թումբը: Քանի որ կենդանիները ոսկորները լավ էին առանակել, իսկ մարդու կմախքի ոսկորները չեն գտնվել, կարելի է ենթալրել, որ դամբարանից դոււս կատարվել է լիակիքում, իսկ մոխիքը սփովել է դամբարանում, որը լավ կապում է խեթական թագավորների և լիակիքաման ծիսակարգին: Ինչպես երեսմն է, հանգուցյալի անյունը երկվել է փայտյա սայշով, որոնցից մեկը գրեթե ամբողջությամբ պահպանվել է Մարտի-Ալիշա վայրում անդկած

29 դամբանաքարեւուրում: Մնացած դամբանաքարեւուրներում խցերի հատակներին պահպանվել են ինչպես անիվների թողած հետքերը, այնպես էլ անկվների փայտյա մնացորդները: Սյստեղ երեսմն հանդիպում են նաև ցերել կմախքի մնացորդներ և լավ պահպանված զպնքեր: Այսիսի տապակորությունն է ստեղծվում, կարծես թե դրվել են երկու ցուլի մորթիներ, որոնք այնպես են մշակել, որ գլուխը և ոտքերը մնացել են մորթու վիճակ:



26



29

29

Ի ապրերություն հիմնահոդային դամբանախցեր ունեցող դամբարանների, ստորգետնյա դամբանախուց շունեցողները կտուցվում էին նողի մակերեսին և ունեին գրեթե նույն չափերը: Սնկասկած, սրանք նույնական գերանածածկ են եղել, որի վրա թարձրացել է դամբանաթը լուրջը: Ինչպես երկում է, սայլերի հետ մեկտեղ այսաեղ դրվել են նաև փայտյա մահիմներ, որի մասին է խոսում դամբարաններից մեկում մահիմները երեսպատող ոսկյա թիթեղը:

Նրկու տիպի դամբանաթը լուրներից գտնված խեցեղենը ներկայանում է զլխավորապես անկանթ և երկանթ խոշոր սափորներով, որոնք բայց թրծման ընույթի, արտաքին մակերեսի հարդարման և զարդանախշերի, թաճանվում են մի թանի խմբերի: Առանձնահատուկ խումբ են կազմում գունազարդ անոթները, որոնք իրենց հերթին ստորագրածանվում են սև գունազարդով կարմիր անգործապատ և սև, գորշավուն կամ դարչնազույն գունազարդերով սպիտակ անգործապատ անոթների, որոնք զարդարված են ալիքանախշով, շեղանկյուններով, ալիքան գծերով սովորագծված ուղղանկյուններով, թռչունների պատկերներով, կիսաշրջաններով, շրջանակներով և այլն:

Այս խեցանոթների հետ մեկտեղ հանդիպում են սպիտակ, ագուցված զեզարդով՝ սև փայլեցրած անոթներ: Այս անոթների զարդամոտիկները կազմված են ուղղագծերից, պարույրներից, շեղանկյուններից, շախմատին դրոշմիչով արզած նախշերը:

Թուղթյան խեցեղենի երրորդ խումբը կազմում են խոր կորովածքներով արզած, երկրաշափական զարդանախշերով, կոպիտ խեցեղենը և սև փայլեցրած խեցեղենը, որ զարդարված է ակոսավոր-ուռուցիկ զարդագոտիններով:

Թուղթյան դամբարանաթը լուրներում խեցեղեն արտադրանքի հետ մեկտեղ լայնորեն ներկայացված են մետաղե իրեր՝ հիմնականում զարդարանքի թանկարծեք առարկաներ և տարբեր անոթներ: Մըանց թվում հարկ է նշել թարձր, սնամեջ ոտրով շթեղ թրոնգե սկանակը, ոսկը և արծաթե թասերը, դրազման միջոցով սյուժետային հորինվածքներով զարդարված արծաթե գավազը և դույլիկը:

Գտնվել է նաև թարձրորակ ոսկյա զավաթ, որը զարդարված է ապահայով, լարանյուսով և ագուցված բազմազույն թարերով: Բացի նշանակած անոթներից, գոնվել են նաև ոսկյա մանյակների մեծ թանակությամբ դետալներ, ազաթե կուլուններ, մարմարներ, տարբեր թիթեղներ, խողովակածն ու լուսներ, շքասեղներ, կենդանիների արձանիկներ, ոսկյա զինանշանների դետալներ, տարբեր կախիկներ, իրերի շրջանակներ և այլն: Կիրառական արքեստ անկրկնելի նմուշներ հանդիսացող այս իրերը ոչ միայն հաստատագրում են զարգացների անգերազանց պրոֆեսիոնալիզմը, այլև ցույց են տալիս միջին թրոնգի դարաշրջանում հասարակության ներսում

եղած հսկայական սոցիալական և գույքային շերտավորման առկայությունը: Թվագրված իրերի շարժում բացադիկ տեղ ունեն հարուստ զարդարված արծաթյա զավաթը և դույլը: Գավաթը կւորացող հառակով, լայնացող սնամեջ նստուկով, գլանածէ անոթ է, որի իրանը պառում են դրոշմագարդ երկու զորիները. դրանցից վերինում պատկերված է խթոնին հազար ձեռքերին մեծ զավաթներ պահած՝ զայլի դիմակով 23 մարդկանցից կազմված մի թափոր՝ դեմքով ուղղված առանց թիկնակի աթոռին նստած մարդը, որի հետեւմ պատկերված է ծառ, իսկ առ չկում եռոտանի գոհասեղան է, բարձր մոնթեր և երկու երկարապոչ կենդանիներ/շներ/: Մտորին զարդարուած վրա պատկերված են իրար հատուից հաջողաբար գնացող որդ և էզ եղջերուներ, եղնիկներ ծիշտ նույնախիսի եղջերուներ և եղնիկներ են պատկերված արծաթը դույլի զարդանախշերում: Դույլի վերականգնված հատվածը ամբողջուն պատված է տեղական որսորդական ֆառւնայի տարեր ներկայացուցիչների պատկերներով՝ այժերով, կիսարևներով, այծյամներով, երկու տեսակի վարազներով: Պատկերված կենդանիներից մի քանիսը խոցված են նետերով:

Սա ցույց է տալիս, որ այստեղ պատկերված է որսորդական տեսարան:

Միջին ըրոնզի 2-րդ փուլի նյութեր հայտնաբերվել են նաև Էլատի դամբարանաղաշտում: Այստեղ գտնված գունագարդ անոթները ներկայացված են կարմիր, անզորապատ մակերես ունեցող խոշոր, լայնաբերան սափորներ ըստ որոնց վերին մասը զարդարված է գույզ զիզագներով, ուղղահայց թեր զծերով՝ ստվերազեկած շերեփանման, եռանկյունածն զարդանախշերով, բազմաշատ եռանկյունիներով, ցանցաղաշ և ջրային թույլունների պատկերներով: Գտնվել են նաև ծաղկաշղթաներով, շամփատածն զարդերով, ստվերազեկած եռանկյունիներով, շրջանակներով և նախշազարդված գունազարդ թղղղաններ: Բացի գունազարդ անոթներից, գոնկել են նաև շազանակազույն, վայլեցրեծ մակերեսով խոր թթեղան /մեկը՝ ըռնակով/ և գորշ, խոշոր հիղրաններ:

Միջին ըրոնզի դարաշը ջանի եզակի հուշարձան է նաիրին շրջանի թուրաշամք գյուղի մոտ /1987 թ. պեղված խոշոր դամբարանը, որը 80 մ առ բարձրությամբ թարե լիցքով դամբանաբերուր է: Թաղումը կատարվել է մայր հողի մակերեսին, որի համար ընական, ոչ բարձր թմբի վրա մեղրված, խոշոր թարերով ուղղանկյուն թաղման հրահարակ է պատրաստվել, այն երկայնական առանցքով ուղղված է արևելքից պատմուած: Հատակը պատվել է կտորով, որի վրա էլ սփովել է դիակիզված ամյունը: Թաղումը ուղեկցվում է շատ հարուստ գույցով և գոհաբերված խոշոր և յանը եղջերավոր անասուններով, վայրի կենդանիներով և թոշուններով:

Ուղեկցող գույցը ներկայացված է գոտածների հանկար խմբերով:

Ձենքը՝ 1/ Կարճ լեզվակով, եռանկյունածն շերով ըրոնզի դաշտուն կեզակի վրա բռնակի ամրացնելու համար անցը է արված:


2/ Կիատուսնամեւ սայրով և հինաժողով արծաթյա սակր: 3/ Զրահաշապիկ երկու կոմպլեկտ, որոնցից յուրաքանչյուրը քաղկացած է փորք պահանող ուղղանկյուն թիթեղից և մամլապատ կետազարդով ու գործվածքին կոմկաշվե հիմքին կարելու համար անցքերով երկու խոշոր զրահակոնակներից:

**Սպասություն** 1/ Թաղման հրապարակի կենտրոնում, երեք ոչ մեծ քարերի վրա դրված եր ցածրադիր իրանով, Նեղ-ճպվող զգով երկանթ կաթսա, որի մեջ գտնվեցին թոշնի ոսկորներ և թաղման հրապարակի ծածկի գերանի մնացորդներ: 2/ Խեցանոթներ, որոնք ենրկայացված են քաց զույնի աստառով, սև փայլեցված և անփայլ մակերեսով անոթներով՝ զարդարված զծազարդով, կետազարդով և զծիներով:

**Հշշանության նորմայացնեցնեցք:** Բացի արծաթյա սակրից, սրանց թվին է դասվում զինանշանի զավագանի զագաթին ամրացվող ըրնոզե սկավառակը: Մո ունի մի փոքրիկ /կոտրված/ լեզվակ, որի վրա զավագանին ամրացնելու համար անցը է արվել: Ընդ որում, այդ զավագանը պատվել է ոսկյա պարու բան լարերի զալարներով:

**Զարդարանց:** Գտնվել է երկու մանյակ: Առաջինը քաղկացած է լեռն յին քյուրեղատակու, սարդիկնի, կարնեոլի, ինչպես նաև մեծ քանակությամբ ուռուցիկ, մանր ոսկյա ուլունքներից: Մանյակի կենտրոնում կան խոշոր, հարթ, ծվածե հողկած սարդիկնիքն են երկու խոշոր, գլանածե, ոսկյա ուլունքներ, որոնք պատրաստված են քարակ թիթեղից և զարդարված են մամլապատ զարդով: Մյստեղ գտնվել են նաև զանգվածե ոսկյա թիթեղից երկու մարմաններ: Մրանց արտաքին երեսը զարդարված է լարանյուս զավագող պարույրներով, որոնք այնպես են գողվել թիթեղին, որ պարույրների յուրաքանչյուր զալարը, դեպի կենտրոն աստիմանաքար քարձրանալով, ստեղծում է պարույրների կոն: Հակառակ կողմում կան խողովակածե երկարավուն հանգույցներ՝ թելի անցկացման կամ հիմքին խըլու համար: Երկրորդը քաղկացած է ուռուցիկ, մանր ոսկյա ուլունքներից, սև զիշերից արված և կապույտ շաղախից ուլունքներից: Գտնվել են նաև քրնոզե և արծաթյա շքանիշներ, որոնք գնդածե գլեթիկների տակ, դողերին ունեն անցը: Մրդուզարդի իրերից հարկ է նշել նաև զավագող պարույրով, զարդարված շրջանածե ոսկյա կաթիկը:

Բացի նկարագրված իրերից զամբարանում գտնվել է երկու զավաթ: Մեկը պատրաստված է ոսկյա թիթեղից և ունի ներքեւում նեղացող, գլանածե իրան և ոսկյա նրբաթիթեղ երեսապատի մեջ տոնված քրոնզե սկավառակը մեջ նստում: Շուրջը մկան է դեպի դուրս: Գավաթը զարդարված է դրոշմով արված զտիներով, որոնք կտօմում են իրար՝ մեջ սակերագծված անկյունների տեսքով ուռուցիկ շար:



Աղ. 40. Միջին բնուզգի դարաշրջանի գառաներ  
էլուսից, Կամոյից:

Նրկրորդ գավաթը պատրաստված է արծաթից և ունի վերը նկարազըր-  
ված օրինակի ձևը, սակայն ավելի քարքար նստուկով: Գավաթի ընդհանուր  
բարձրությունը 13 սմ է, նստուկի բարձրությունը՝ 2 սմ, իսկ վերին  
մասը տրամագիծը 10սմ է: Գավաթն ունի 6 զարդագրած, որոնց վրա դրշ-  
մբված են տարբեր պատկերներով ստեղծված տեսարաններ: Վերին /առաջին/  
պատկերազնուում ներկայացված է վարազի որս: Որս է անում նետ ու ա-  
ղեղով նետածիզը: Որսի դրվագին մոտենում է առյուծների և ընծառյուծ-  
ների շարանը, որոնցից երկուում նարձակվում են վարազի վրա: Նրկրորդ  
զարդագրուու վրա պատկերված են „արքայական խնջույք“, ծիսական տեսա-  
րանը, գինված ջոկատներ և մարտի տեսարաններ: Եթորդ զարդագրուին ներ-  
կայացնում է ընդդիմամարտող կողմերից: Մեկի հաղթանակ, ավարի գրա-  
վում, գերիների մահապատիճ, ալեքորիկ տեսարաններ /„հոշոտում,, և  
այլն/: Չորրորդ զարդագրուու վրա պատկերված է առյուծների և ընծառ-  
յուծների իրար հաջորդող շարան: Հինգերորդ զարդագրուու /նստուկի գր-  
քարդը ներկայացված է նետածն վերջույթներով, երեսունութ թերթա-  
նի վարդյակով: Կեցերորդ զարդագրուին /եզրագծում է նստուկը/ պատկե-  
րում է առյուծների և ընծառյուծների „հերալդիկ“, դիմակայությունը:

Ամյուսը թաղելուց և ուղեկցող գույքը տեղադրելուց հետո թաղման  
հրապարակը, ըստ ամենայնի, ծածկվել է զերաններով: Կերանները դրվել  
են հրապարակի լայնորով, հյուսիսային պատից դեպի հարավյայնը: Այդ են  
վկայում կաթսայի մեջ գտնված գերանի մնացորդը և նրա ուղղվածությունը:  
Թաղման հրապարակի շուրջը /պատերից դուրս/, շատ տեղերում նկատ-  
վում են ծիսական գոհաքերության հետքեր: Հուղարկավորության և թաղ-  
ման ծիսակարգից հետո լցուի է եզրերում ցածրացող դամբանաթումքը:  
Դամբանաթմբի կենտրոնական, ամենաքարձը մասում կանգնեցվել է ֆալտ-  
ակ թանդակ: Կերանածածկի փուլու հետևանքով հետազյում դամբանաթումքը  
փլկվել է թաղման հրապարակի վրա: Թաղման ծեսի և գույքի ուսումնա-  
սիրությունը հսարավորություն է տալիս թարաշամբում անդամ պայ-  
մանաքը լուրք վերագրել միջին քրոնզի դարաշրջանի Թթեղը-կիրովականյան  
մշակույթին, այն թվագրելով մ.թ.ա. 2-րդ հազ-ի 1-ին թառորդով: Հարկ  
է նեխը, որ թարաշամբի դամբանաթմբը Սննդկովկասի տարածքի ամենահա-  
րուստ թաղումների թվին ե դասպում: Այն, ըստ ամենայնի, վաղ պետակա-  
նությանը ընորոշ քազմաթիվ զծերով, խոշոր ցեղային միության առաջնոր-  
դի թաղումը: Բացարիկ գիտական հետաքրքրություն է ներկայացնում ար-  
ծաթե գավաթը, որի վրա դրվագված տեսարանները հսկայական լրասովություն  
են պարունակում միջին քրոնզարյան շայաստանի հոգևոր և նյութական  
մշակույթի ուսումնասիրության մասին:

Միջին քրոնզարի վերջին փուլի առաջնակարգ հուշարձան է Բ.Բ.  
Պիտորովսկին կողմից 1948 թ. պեղված Կիրովականի դամբանաթմբը:

Երեսուն թառ. և մակերեսով, Յ մ խորությամբ Ֆիմնահողային պատերով դամբանախուցը ծածկվել է զերտան սյուների վրա հենված սալաքարերով։ Դամբարանում դրվել են կետագարդերով զարդարված, աև փայտլեցրած և կարմիր հիմնագույշնով, սև գունագարդումով տնօթների։ Անթթների մոտ գտնվել են ոսկյա թաս և արծաթյա 4 անոթներ՝ դույլ, զավաք և կանթավոր երկու քածակ։ Դամբարանի կենտրոնում, բրոնզե գամերով և արծաթյա թիթեղներով զարդարված փայտյա մահմի վրա, ըստ երկուլյթին սփովել է դիմակիզական ամյունը։ Այստեղ գտնվել է ոսկյա և սարդիլոնն ու լուսեներով հարուստ մանյակ։ Առանձին հետաքրքրություն են ներկայացնում պիրովականի դամբանաքըլուրից գտնված աշխատանքի գործիքները և զենքը։ Մրանց թվին են պատկանում սակր-կացինը, հարթ կացինը, դուրք, քրոնզե կերիկը, երեք դաշույններ և նիզակի ծայրը։ Այստեղ գտնվել են նաև խոշոր քրոնզե կաթսան։

Կիշովականի դամբանաքըլուրի ոսկյա թասը պատրաստվել է միաժույղ ոսկյա թիթեղից։ Նրա լայնացող մասում, երկու զարդագոտիների միջակայրում, դրոշմով արված են երախները բաց, զույգ-զույգ, դեմ-հանդիման վեց առյուծների ուռուցիկ պատկերներ։ Իր ճեներով պայս օրինակը հիշեցնում է Թոեղի 7-րդ դամբանաքըլուրի անզարդ թասը, իսկ նման ոճավորված առյուծների պատկերներ կարելի է տեսնել Թոեղի 15-րդ դամբանաքըլուրի ոսկյա ։ Յմբուկին, վիա: Կենդանիների պատկերագրման ոճը շատ լավ աղերսվում է խեթական մշակույթի որոշ հուշարձանների հետ։

Ոչ մեծ արծաթյա թասը զարդարված է շուրջից կփսված կիսաշշաներով, որոնք հիշեցնում են Լաշենի և Ռազերի կթեփեի 2-րդ շերտի անոթների զարդամուտիկները։ Շատ հետաքրքիր են կիշովականի դամբանաքըլուրի երկու արծաթյա զավաթները և դույլը, որոնց տանձնանում են բունակների բարձր դիրքով և աղերսվում են Ոսկեպազի գունագարդ զավաթների բունակների հետ։ Նշված իրերի բունակների, ինչպես և զավաթների ճեները իրենց զուգահեռներն ունեն խեթական շրջանի Թոքք Սսիայի և հունական խեցանոներում, ինչպես նաև Ալաշա-հոյուկում և Թոքք Սսիայի պրամտյան շրջաններում։ Արծաթյա դույլի իրենց ճեներով աղերսվում է Թոեղի 16-րդ դամբարանի և Ալաշա-հոյուկի զավաթներին, որնակի և հառակի ճեներով՝ Վաֆիոյի /Հունաստան/ գավաթներին։ Գտնված քրոնզե երերը իրենց զուգահեռներն ունեն հայաստանի 8 անդրկովկասի աեղական պրաղրանքի նմուշներում։ Այստես, ասիմետրիկ քրոնզե սակրը, որը անդրկովկասայան ուշ քրոնզի դարի սակրերի նախառիան է, աղերսվում է նավուրի /Հայաստան/ Գրմա-զելեի /Արաստան/ և Խորեջի /Դաղստան/ սակրերի հետ։ Այս նույն հավաքածուի տափակ կացինը՝ համեմատաբար կարծ, կիսակւոր աշխատող սայրով, նույնառ կառող օղակ է վաղ եթոնականի մասունքում։




զեղարի տափակ կացինսերի /մերձերևանյան գանձը/ և ուշ ըրոնզի դարում մեծ տարածում գտած նմուշների միջև: Ցրոնզե խողովակածառ դրւը նույնպես իր բազմաթիվ զուգահեռներն ունի Լմաշենի, Սևանի, Տուլորսի ուշ ըրոնզեղարյան դամբարաններում: Լավ է պահանվել աղնձե թիթեղներից պատրաստված կաթսան: Այն ունի կլորացող հատակ, մի փոքր նեղացող իրան և շուրջին ուղղանայաց ամրացրած քարձը երկու բունակները: Կաթսայի հետ զտնված խողովականթառ ըրոնզե կերիկը, անկասկած, ծառայել է կաթսայից միս հանելու համար: Դամբանաբելում գտնված երեք դաշույնները արխայիկ տեսք ունեն: Բոլորն եւ տերեածն են: Ցրանցից մեկը ուսին ունի երեք անցք՝ կոթոնի աւրացնելու համար, մյուս երկուսն ունեն լեզվակներ: Նման դաշույնները լայն տարածում ունեին Միջազգային, Կիլիկիայում, Փոքր Ասիայում, ինչպես նաև Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում: Ինչ վերաբերում է խողովականթառ Նիզակին, ապա այն շատ լավ աղերսվում է Թոնեղի, Լաշտենի, Հառիմի, Նովիի, Կվասաթալիի, Ավազալուրի և նման հայտնի հուշարձանների այդօրինակ նմուշներին, որոնց վրա նույնպես նկատելի է փոքրասիական օրինակների ազդեցությունը:

Այլ գտածոների թվում հատկապես տանձնանում են սկավառակածներ, խողովակածն ուլունքներն ու քածանարարները, ինչպես նաև հրաշալի հըղկված զնդմծն սարդիկոնն ուլունքները: Գտնվել են նաև մեծ քանակությամբ ոսկյա նրբաթիթեղի քեկորներ, որոնցով բատ երկույթին երեսապատել են փայտյա զարդառութերը: Ինչպես տեսնում ենք, Կիրովականի դամբանաբելի իրերի որոշ մասը պատրաստվել է փոքրասիական արտադրանքի մերի ազդեցության ներքո: Կիրովականի դամբանաբելուրի խեցանոյնելի մերում, ինչպես նաև Հայաստանի և Անդրկովկասի այլ հուշարձանների նյութերում հանդիպում են փոքրասիական-էգեյան արտադրանքի մերը կրկնօրինակներ, ինչպես, օրինակ, Թոնեղի անոթների հորիզոնական ունկեցը կամ Կիրովականի սև հիդրիաների մեանդրե զարդերը: Բոլը այս իրերը տեղական ծագում ունեն, թայց անկասկած է նաև այն, ու ըրոնզագործ և խեցեգործ վարդեատները ծանոթ են եղել փոքրասիական արտադրանքի մերին:

Միջին ըրոնզեղարի վերջին է վերաբերում Շամշադինի Արծվաբերդ /Ղրղի/ գյուղում 1964 թ. բացված դամբարանը: Դամբանափոսք ունեցել է մի փոքր կլորացող անկյուններ, իսկ Նրա-Վերին եզր՝ շարված էին գետաբարերությունների համարանակները: Դամբարանի հատակը պատված էր վառված հողով և մոխրով, այսինքն՝ դիակիզումը կատարվել է դամբարանի ներսում: Այստեղ գտնվեցին երեք խոշոր, անկանթ գունազարդ սափոր, սև, նմանօրինակ սափորի քեկոր, մեկ քածակ և մի քանի այլ սև անոթների քեկորները: Բացի հազարական նյութերից, գտնվեցին 5 խոշոր երշերավոր անասունների կմախթի

15 ոսկորներ և մեկ գանգ, երկու մանր եղջերավոր անասունի ոսկորներ, 4 միու կմախթի յոթ ոսկորներ, երկու շան ոսկորներ, 6 եղնիկի վեց ոսկորներ, որ վկայում է այն մասին, որ այստեղ թաղվածը ունեցել է մեծ հոռ և եղել է որպրդ: Գունազարդ անոթները պատված են կարմիր անգորդվ, որի վրա սև ներկով արվել է բարդ զարդանախչ՝ թագմածն՝ գիգանտազարդերով, որոնց միջև եղած դատարկ տարածությունները զարդարվել են ալիքանախշով, թուշունների պատկերներով և սկավառակներով: Թոեղերովականան մշակութիւն վերագրող նման խեցանոթներ հայտնի են Թոեղերից, Կիրովականից, Գառնիից, Նախիջևանից, Կարմիրգյուղից /Կամոյի շրջան/ և մ.թ.ա. 18-16-ըդ դ.դ. Ցագարվող մի շաբթ այլ հուշարձաններից:

Միաժամանակ, նույն մշակութային շրջաններին վերագրվող նյութեր են գտնվել 1962 թվականին, Եջմիածնից մի թանի կմ հարավ գոնվող Խարուսարի գյուղը տանող մասամբ հանձնված պեղված չորս դամբարաններից: Դամբարանների մեջ հարավոր է վերականգնել պեղված առանձին դամբարանի օրինակով, որը մեծ քառակուսի հիմնարկության խուց /պատերի երկարությունն ու լայնությունը 2,4 մ է/, որի ծածկը չեր պահպանվել: Կմախքը գտնվում է խցի կենտրոնում, ջարդոտված կավանոթների տակ: Գույքը քաղկացած էր սև, կարմիր անգորապատ և գունազարդ տարեթ անոթներից, որոնք իրենց մեջ պահպան ունեն Կիրովականի դամբարանի նյութը թերին: Իրենց մեջ վերոհիշյալ նյութերից չի տարբերվում նաև վանական նետառալաքները, մասն ուլունքները, ազաթի և սարղիոնե հրաշալի հղկած ուլունքները, ըրոնզե դաշույնը, որի վրա պահպանվել են փայտյա պատյանի հետքեր: Խցի մեջ առաջինը չի տարբերվում և 5-ը, որն ընկած է նրանից 5 մ հարավ: Այստեղ ըացի թաղվածի կմախքից գտնվել են նաև ցլի կամինի մի մասը, մեծ քանակությամբ կափանոթներ, որոնք ներկայացնած են կարմիր անգորապատ, սև հիմնազույնով, բարձր վզով, երթեմն բերանները ծածկող քարե կափարիչներ ունեցող սափորներով, սև կարմիր քեղաններով, մեծ, կարմիր անգորապատ հիղըիայով: Բացի կափանոթներից գտնվել են և և 11 վանական նետառալաք, ըրոնզե լեզվակավոր դաշույն՝ դաշունակալի համար օղակներով: Նույն ժամանակի գտածներ հայտնաբերվել են 1900 թ. Է.Ռ.Ռ. յոսլերի կողմից Կարսի մարզի Զարիշաս գավառի Փոքր Պարզետ գյուղում: Այստեղ գտնված սև փայլեցրած անոթների բեկորները զարդարված են ժապավենան գոտեզարդով և եղանակունիներ կազմող կարմ գծիկներով, որոնց վրա պահպանվել են սպիտակ ազուցվածքի հետքեր և իրենց գուզանեռներն ունեն Կիրովականի, Թոեղերի և այլ համաձայնակայա հուշարձաններում:



Աղ. 41. Միջին քրոնակի դարաշրջանի խեցեղեն էլասոնից:

Միջին ըրունգեղարի Յ-ըդ ՓՄԷԼԻ ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն Ս.Հ.ԴԱԵ ջանի կողմից լոռի-թերդում կատարած պեղումները: Այստեղ պեղվել են ինչպես դամբարաններ, այնպես էլ մի քանի կացարան: Այդ խոշոր բնակատեղին գտնվում է լոռի-թերդ գյուղի դիմաց, Ստեփանակերտից Յ կմ հեռավորության վրա, Սիսիանա գետի ձևի, քարձրադիր ափին: Նինություններից մեկում կատարված պեղումները ցույց տվեցին, որ այն քաղկեցած է 4 միացված սենյակներից՝ կազմելով 280մ<sup>2</sup> մակերեսով խոշոր համալիր: Արտաքին պատերի հաստությունը 2,5 մ է, իսկ միջնապատերինը՝ 1,2 մ: Արևելյան պատի կենտորնական մասին արտերին կողմից հարում էր կիսակլոր, քարերով լցված մի տարածք, որն, ըստ երևույթին, ծառայել է որպես քեմահարթակ: Այսողությունը պեղվել է միայն մեկ սենյակ: Արա հատակին գտնվել են տարեք կավանոթների, պշտառանցի գործիքների՝ աղորիթների, սանդղակերի, սրոցների, կոկիչների, թերեւների, մասգաների վանական ներդիրների քենորներ և եռանկյունածն վանական ներառական ներառական ներառական գործություններ, որոնց եզրերով լավ մշակված են, իսկ հիմքում ունեն փոսիկներ: Թեցանոթների քենորները սև, փայլեցված են, զարդարված դրոշմազարդով: Դուրզի անկի վրա պատրաստված զնովածն կունենարի, նըրախնեցի գավերի այս քենորների զարդարանշաբանը կազմված էին զարդաշերտերից, անկյուններից, մենադրներից և ուղղի գծերից:


Գտնվել է կետ-գծերով արված այլի բանախում գարդարված զավե քենոր:

Բնորոշ զարդարանշաբանը նման խեցանոթները հանդիպում են միջին ըրոնցի քազմաթիվ հուշարձաններում՝ Լմաշեն, Հառիճ, Կեթի, Ուզերլիկթեքե և այլն ու թվազրպում մ.թ.ա. 17-15-ըդ դ.դ.-ով: Բացի ամրոցի պեղումներից, այսաեղ քացվել են տարեք դարաշրջանների դամբարաններ, որոնցից 6-ը վերաբերում է միջին քրոնից դարաշրջանին: Արա երկարությունը հասնում է 5,5 մ-ի լայնությունը՝ Յ մ-ի: Այն ունեն եռաստիճանների մեջ թաղ և ծածկված էր խոշոր սալաքարերով: Խուզք մեկ անգամ ևս թաղում կատարելու համար օգտագործվել է մ.թ.ա. 7-6-ըդ դ.դ.-ում, որի պահմառով հիմնական թաղումից պահանջվել են թիշ քանակությամբ իրեր, ինչպես նաև միերի գանձեր և վերջույթներ, որոնք դրվել են հարավորեւլյան պատի անկյուններում: Խցի հենց այդ հատվածում էլ պահանջվել էին ըրոնզե կաթասն, կեռիկը և ամբողջական քրեղանը: Մնացած կավանոթները, բացի մի գավաթից, ջարդոտված վիճակում սփռված էին խցի հատակին: Խեցեղենը ներկայացված է միազույն գունազարդումով, ինչպես նաև սև, փայլեցրած և գորշ, անփայլ անոթներով: Գունազարդ անոթներից պահանջվել են խոշոր հիդիայի և կճումի վզի մի մասը և շուրջերը: Կարծ գծիկների, ալիքանախչի, հորիզոնական գծերի և ժանյակների տեսքով զարդարանշաբանը պահանջված է սև սերպով և աղերսվում է կիրովականի, Քռեղջի, Շշմիածնի, Փոքր Պարգետի զարդարանշաբանին: Աև, փայլեցրած խեցեղենը ներկայացված է


մեծ կառւների, քարքը վզով սափորների բեկորներով՝ գարդարված գույց տկոսներով, ծեփածո շրջանակներով, ցանցալաշտով սավերագծված շեղանկ-յուններով, այլիքամեն զարդածներով և այլն, որոնք արված են սեղմու-մով, տապանադրումով, ինչպես նաև փայլանախշով, որը մեծ տարածում է ստանում ուշ քրոնզի դարում։ Նման զարդածներ ընորոշ են Կիրովականի, Լաճենին, Աւգուստիկթեփի միջին շերտերին, Սուլխանաբերձափային, ուշ Կարմիր շերդին և միջին քրոնինդարյան այլ հուշարձանների։ Բննարկվող դամբարանի մետաղական իրերը ներկայացված են աղնճե կաթսայով և Կիրո-վականյան նմուշը կրկնող ըրոնց կերպով։

Պատահականորեն քացված այս դարաշը ջանի դամբարաններից հարկ է հիշատակել երկուսը: Սրանցից մեկը քացվել է 1966 թ., եղեռնի զոհների հիշատակին կառուցվող հուշարձանի շինարարության ընթացքում: Աև խեց-նորմների մի այլ հատաքարտից խումբ են կազմում նոր Բայեզօնում /համո/ 1956 թ. ավերգած դամբարանի նյութերը: Այն բաղկացած է կետ-զծերով՝ արգած, սպիտակ, ազուցված զիգզագներով զարդարված, սկ. փայլեցրած երկու սափորներից և չորս խոր քրեղաններից, որոնց նույնական զարդարված են զիգզագանախշով: Այս դամբարանում գտնվել են նաև հնդկական թևոյ-զի կիսակեղեկի տեսքով չորս քրեղաններ, որոնք Հայաստանում հանդիս են գալիս մ.թ.ա. 3-րդ հազ-ից: Այս անոթները զարդարված են անկանոն տեղա-դրված խազագծերի փնջերով: Նմանանք երկգույն, գունագարղ բրեղաններ գտնվել են նոր Բայեզօնի մեկ այլ ավերգած դամբարանից: Սրանցից մեկը զարդարված է քաց դեղնավուն հիմնազույնի վրա կարմիր և սև ալիքանախ-շերով, մյուսները՝ սև և կարմիր գույներով արգած երկշար եռանկյունի-ների շերտով, բրոնց տակով անցնում են կարմիր և սև գույնի ուղղանա-յաց պարույրներ ունեցող ալիքանախշեր: Մեկ այլ հնտաքարտից գունազարդ անոթների խումբ հայոնի է ծրբանի Հյուսիսային ծայրամասի՝ Սևանի և Թանաքեռ տանող Ծանապար հների հատման մասում, շինարարական աշխատանք-ների ընթացքում ավերգած դամբարանից: Հիմնահողային դամբանախցում քացի ամյուսնի մասցորդներից գտնվել են գունագարղ սափորներ և մի քա-նի քրեղաններ, որոնցից մեկը նույնական պատված է գունագարղով: Վեռ կարմիր անզորապատ սափորները զարդարված են շերտոններով, հորիզոնական գծերով, ալիքանախշով, իսկ անոթների շուրջերը՝ սև ներկով արգած կարմ-իքիներով: Այս անոթների համար մեկտեղ գտնվել է եռանկյունաձև, լեզվա-կազոր դաշույն: Այս համալիրի գտածոները իրենց տեսքությամբ պահպան ունեն թողերի և հատկապես Կիրովկականի նյութերում և թվազրում են մ.թ.ա.

Միջին բրոնզեդարի ավարտական փուլին է վերաբերվում Արուճի 3 դամբանաբերությունը, որը թվագրվում է մ.թ.ա. 16-15-ը դ.դ.-ով: Այստեղ որպես առաջնահատ կառապիկ է ընդունված քարարձակ ։ Քամեարանում



Աղ. 42. Միջն բրոնզի դարաշրջանի գավառներ Նկ. 1-7,  
11 Արծվաբերդից, Նկ. 8-10, 12 Դիլիջանից:



Աղ. 42. Միջն բրոնզի դարաշրջանի գավառներ, Նկ. 1-7  
11 Արծվաբերդից, Նկ. 8-10, 12 Դիլիջանից:

գունվել են կարմիր հիմնագույնի վրա սև և սպիտակ ներկով արված գունա-  
զարդ խեցանոթներ և մեկ եղակի բազմազույն զարդանախշով, սափոր, որի  
վրա պատկերված է կարմիր եղինջիկի վրա սև գայլի հարձակումը: Գունվել  
են նաև բրոնզե զույգ, նետասլաքներ, բրոնզե անոթի քեկորներ և ու-  
լունքների մաս կազմող ոսկյա հատիկաշար ցանցի մեջ առնված վանակած  
գլուխածել կրծքազարդեր:

Միջին բրոնզեդարի վերջին են վերաբերում նաև Հառիմի դամբարա-  
նաշաշտի մի քանի դամբարաններ: Դրանից է № 44 դամբարանը: Այստեղ  
գտնված սև և դեղնավուն խոշոր սափորները, զարդարված սանրատամ դրոշմի  
չով արված նախշերով, ավելի կատարյալ մեր ունեն: Զարդամոտիվներում  
զերակշռում են նախորդ փուլի համեմատ ավելի ճգված եռանկյունիները,  
որոնց մի մասը ստվերագծված է կետ-զծերով: Հանդիպում է նաև զիգզագա-  
ծել նախշազարդը: Մետաղյա գույցը ներկայացված է շեղանկյուններով զար-  
դարված խողովականիթառ նիզակով: Գունվել է նաև բրոնզե փոքրիկ խողովակ  
և շթասեղի նմանվող իր: Մետաղյա իրերի այս ոչ մեծ հավաքածուն, որն ան-  
կանած տեղական ծագում ունի, լավ աղերսվում է Լմաշենի № 40 դամբ-  
րանի նյութերի հետ, իսկ բրոնզե նիզակը իր զուգանեռներն ունի Հայաս-  
տանի և Անդրկովկասի այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են Կիրովա-  
կանը, Թուղթը, Արումը, Կվասիշալին, Նուլլին, Սզնաբերդը /Ազնաբյու-  
րօթ/: Նման նիզակներ հայտնի են նաև Ռաս-Շամբայից, Գագայից, Անգիո-  
յից և Ալիշարից: Մետաղյա իրեր են գտնվել նաև Հառիմի № 78 դամբ-  
րանից: Այստեղ գտնված համեմատաբար նեղ հատակով խացանոթները աղերս-  
վում են Թուղթ-Կիրովկանյան ավելի ուշ շրջանի նյութերին: Գունվել են  
նաև մեծ քանակությամբ խոշոր և ոչ մեծ, լավ մշակված վանական նետա-  
սլաքներ, որոնց զուգանեռները հայտնի են Լմաշենից և այլ հուշարձան-  
ներից: Հատկանի անհրաժեշտ է նշել այստեղ գտնված շրջանակավոր դաս-  
տակով դաշտույնը և լեզվակ ունեցող դուրը: Կադ փուլի շրջանակավոր  
կոթառով դաշտույնը հայտնի է Կարմիր կանքից: Վերջինս հազիտական զրբ-  
կանության մեջ հայտնի է որպես „Առաջավորասիական,, տիտի դաշտույն և  
լայն տարածում ունի Առաջավոր և Փոքր Ասիայում, Հայկական և Իրանական  
լեռնաշխարհներում, Անդրկովկասում և Նրանց հարևան շրջաններում: Բրոն-  
զե դարբը նույնպես Հայաստանի լեզվակավոր գործիքների առավել վաղ  
օրինակներից է: Հառիմի այս համաւելիցը համատեղում է միջին բրոնզի  
դարաշրջանի երկրորդ և պվարտական փուլի մի շարք հատկանիշներ և թվա-  
գրությունը է մ.թ.ա. 17-16-րդ դ.դ.-ով: Հառիմի դամբարանադաշտի մնացած  
դամբարանները /դամբ. 11, 16, 20, 24, 65, 67 և այլն/ նույնանուն վերա-  
բերում են միջին բրոնզի պվարտական փուլին, թեև կան համալիրներ,  
որոնք թվագրվում են մ.թ.ա. 18-15-րդ դ.դ.-ով: Խեցեղենը ներկայաց-

ված է նեղպիզ ստփորներով, հիդրիաներով, կոմուժներով, թրեղաններով, մեծ հետաքրքրություն ներկայացնող անոթ-կիւիկով: Այն տառաստված է գուրգի անկի վրա և ուսի բարձր կանթեր: Ուշագործ է կիւիկի կանթերի մեջ, որը հիշեցնում է Կիրովականի արծաթյա թասի կանթը: Նման մեկ խացանոթներ հանդիպում են Լաճենի 6 և 46 դամբանաբլուրներում, ուր վերջինս ուղեկցվում է սանրատամ դրոշմիջով զարդարված անոթների հետ: Անոթների այս խումբը կրկնում է փորբասիական մեերը և համախակի է հանդիպում այնահիս հուշարձաններում, ինչպիսիք են Ալիշարը, Ալաշա-հույուկը, Բողազոյիքի, ուր կրանք ունեն նստուկներ և այլն: Այս փաս-տը նույնահան խոպում է փորբասիական աղջեցության մասին:

Բացի խեցանոթներից Հարիմի թեսարկվող դամբարաններում գտնվել են նաև փոքր, վանակատե հետասաւաթներ՝ հիմքում ուղղանկյուն կտրվածք-ներով, օրոնզի հերուն, իւիկի թարե գլուխ և այլն:

1968 թ. Աշտարակի շրջանի Ռակվազ գյուղի մոտ պատահականորեն բացվեց ոչ բարձր թարահողային թմբով մի դամբանաբլուր: Հատակազդում ուղղանկյուն, կլորացող անկյուններով, 3,2 x 2,0 չափերի հիմնահողային դամբարանիցի ծածկը չէր պահանվել: Թաղումից հետո խուցը լցվել է հողով և թարերով: Խցի խորությունը 1,6 մ է: Գրանցվել է դիակիպված թաղում: Դամբարանում գտնվել է 40 խեցանոթների մի շատ հետաքրքրի հա-վաքածու: Մրանցից մի թանիսը ջարդվել են նախապես, մինչև խուց դնե-լը /գտնվում էին տանձին բեկորներ/: Անոթները ծեռածեփ են, լավ թօրծված, բարակ պատերով և ներկայացնում են հնակյալ տիպերով. 1/ Կարմիր հիմնագույնով հիդրիաներ՝ սև, միագույյն գունազարդով զարդարված: Զար-դամուկիվները ներկայացված են գիգազաներով՝ ստվերազծված շեմպոններով, օճազալարներով և շրջանակներով, որոնք ներկայացնում են երկնային մարմինների սիմվոլները: Կան նաև առանց զարդանախշերի հիդրիաներ: 2/ Կարմիր հիմնագույնով երկու խոշոր ստփորներ, որոնք զարդարված են շերոնների երկու շարքով և արածիչների պատկերներով: 3/ Շուրթերի տակ գունազարդով պարզած երեք կամ չորս համակենտրոն կիսաշրջանների ծաղկաշղթաներով զարդարված խոր թթեղաններ: Միզույն զարդանախշով անոթների այս խումբը իր գուգանեռներն ունի թուեթի, Կիրովկականի, Ելտահի, Գառնիի, Ազնաբյարի, Աղավնատան դամբանաբլուրներում և թվակը-վում է մ.թ.ա. 17-16-ըր դ.դ-ով: 4/ Կարմիրավարդագույն մակերեսով խոր-թասեր, որոնք ներկայացզած են Հայատանի և Սնդրկովկասի համար ոչ սո-վորական մեերով: Անոթները փայլեցված են և, բացառությամբ սև գծիկնե-րով զարդարված շարթերի, մնացած մասերում զարդանախշ չունեն: Այդ թասերի համար ամենաբնորոշ շուրթերից վեր բարձրացող կանթերն են, որը հնարավորություն է տալիս վերջիններս իրենց մեերով համեմատելու

Կիաֆների հետ: Կանթերը զարդարված են սև ներկով արված երկու գուգա-  
ներ զծերով: Գրեթե բոլոր /16 համ/ ուսնեն մինչույն շափերը /քարձը.  
10-15 սմ/, և ուսիֆիկացված գեղարվեստական ոմ: Ուսկեվազի , , կիաֆնե-  
րը , , Հայաստանում միակ գտածոները չեն: Նման անոթներ հայտնի են  
Էլառից, Կամակատարից /Կիրովական/: Այս խմբին են հարում Լճաշենի


6 ուամբանարէրի երկնախանի երկնուն անոթը և ըռնակի ձևով՝ Հառիմի

### 65 դամբարանի վերոհիշյալ իւրիկ:

Բարձր կանթերով նմանօրինակ անոթներ ներկայացված են նաև Կիրո-  
վականի դամբանարէրուրի մետաղյա սպասում, մասնավորաբան արծաթյա թա-  
սը կանթի ձևով շատ է մոտենում Ոսկեվազի թաս-կիաֆների կանթերին:  
Այս կիաֆների տուակել վաղ օրինակները կարելի է տեսնել Զատալ-Ռոյուկի  
արևմտյան թուուրի վաղ աղնձե-քարեղարյան 2-րդ շերտում /շուրջ մ.թ.ա.  
4900 թ.ձ. Սերսինում, Հունաստանում /Միսկլո/, Կրետեի վաղ մի-  
նույան ժամանակաշրջանի 2-ին փուլում, Կենտրոնական և արևմտյան Փոքր  
Ասիայի վաղբրոնզեղարյան քազմաթիկ հնավայրերում: Այս դարաշրջանուն  
կիաֆները հատկանի տարածված թյուլթեփեռում, Փոլտալիում, Ալաջա-Ռոյու-  
կում, Բողագրյոյում և այլն: Ազելի ուշ, միջին քրոնի դարաշրջանում,  
մ.թ.ա. 2-րդ հազ-ի 2-ին կեսին , , խեթական,, անունը ստացած խցեղենի  
համալիրի կազմում անոթների այս ձևը հանդես է գտնիս այնպիսի հուշար-  
ձաններում, ինչպիսից են թյուլթեփեն, Ալաջա-Ռոյուկը, Բեյթսուլթե-  
նը և այլն:

Միջին քրոնի 3-րդ փուլի հուշարձաններ հայտնի են նաև Էլառի  
դամբառնաղաշտից /դամբ. ԱՇ 31, 34, 42/: Գունված իրենի մեջ տանձնանուն  
են Խոշոր, զունազարդ սափորը՝ զարդարված ստվերագծված քազմաշրջ շերու-  
ներով, ուղղանայաց ալիքանախշերով և ձկների պատկերներով: Հետաքրքր  
են նաև ստվերագծված շերուներով, ուղղանայաց ժապավեններով և ջրային  
թռչունների պատկերներով զարդարված մնացած խոշոր սափորները:

Այս դարաշրջանի եզակի գուածու է Մարտունու շրջանի Ն.Գետաշեն գյու-  
ղում պատճականորեն գոնված գունազարդ հիղըիան: Կարմիր հիմնազույնով  
այս անոթի վրա պատկերված է հետապնդման տեսարան, երկու զայլ հետա-  
պնդում են երկու քարայծի և երկու եղնիկի /արու և էզ/: Տեսարանից  
վերև պատկերված են 6 սազեր կամ կարապներ, որոնք շարժվում են զազան-  
ների հակառակ ուղղությամբ: Մնոթի վայկը զարդարված է ուղղանայաց և  
հորիզոնական զծերով:



Աղ. 43. Միջին բրոնզի դարաշրջանի գավծուներ, նկ. 1-8, 11, 13 Ավանի խճացուց, նկ. 9-10, ծիծեռնակացերդ,  
և 12 Նառմիր սերդից, նկ. 14 Մըլանից:

Պար. 2 Հայաստանի միջին ըրոնզի դարի տնտեսությունը  
և հասարակական հարաբերությունները

Մ.թ.ա. Յ-ը դ հազարամյակի երկրորդ կեսից սկսած, Հայկական թարձ-  
ռավանդակի և Սնդրկովկասի ցեղերի կյանքում տեղի են ունենում զգալի  
փոփոխություններ, որոնց հետևանքով տեղի է ունեցել հզոր քուո-արաբս-  
յան մշակույթի անկումը: Տնտեսական և սոցիալական կյանքում առաջացած  
էական փոփոխություններին նպաստել է թնակչության շարժուանկության  
ակտիվացումը: Մետաղազործության և առանձին այլ արհեստների ամին քզ-  
գալի կերպով նպաստեց հին արևելյան աշխարհի հետ էթնո-մշակութային  
կատերի՝ ընդլայնումը: Այդ օրուոր փոփոխությունները պայմանավորեցին  
ընդհանուր մշակութային զարգացման ուղղությունը, որն իր հերթին քե-  
րեց հին մշակույթների փոփոխության: Եվ այս քուո-արաբյան մշակույթի  
փոխարեն հանդիս էն գալիս միջին ըրոնզեղարի նոր մշակույթները:

Տնտեսության, արհեստների, դամբարանային կառույցների ծեսերի և  
հատկապես խեցեղեն նյութի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս  
ենթադրելուոր Հայաստանի և Սնդրկովկասի միջին ըրոնզի դարի մշակույթ-  
ները կազմել են մի մշակութային ընդհանուրություն, որի մեջ առանձ-  
նանում են չորս մշակութային խմբեր՝ Թրիալեթյան /Թոեղջյան/, Կարմիր-  
քերդյան, Սկան-ուզերլիկյան և Կարմիրվանքյան: Չնայած ամեն խումբ  
ուներ տարածքամասակազմական սահմաններ, այսուամենայնիվ փերջին  
տարիների հայտնագործությունները պարզ մատնաշում են, որ այս սահ-  
մանները երբեմն խափակում են: Այսպես, Թոեղջյան մշակույթը, որը հիմ-  
նականում տարածված է կենտրոնական Սնդրկովկասում, ընդգրկելով Լոռին,  
Հյուսիսարևելյան Հայաստանը, Ներինութել է Արարատյան դաշտ, իսկ նրա  
նյութերը հայտնաբերվել են անզամ կանում: Կարմիրքերդյան մշակույթը,  
որը հիմնականում տարածված է եղել Արարատյան դաշտում, Արագածում և  
Շիրակում, եզակի ծեռվ հասնում է Վրաստան /Ռուսավի/ և նախինքան:  
Սկան-ուզերլիկյան խումբը, որը տարածված էր Ղարաբաղում և Սևանի  
ավագանում, թափանցնում է Արարատյան դաշտ, Արագած Շիրակ և արևելյան  
Վրաստան: Կարմիրվանքյան մշակույթը, չնայած իր առանձին գծերի,  
այսուամենայնիվ, ավելի մոտ է Կարմիրքերդյան մշակույթին և, թատ եր-  
եկույթին, նրա տարբերակներից մեկն է: Այս օրուոր հանգամանքները հնա-  
րավորություն են տալիս թնարկել ըուլոր տեղային մշակույթները, վեր-  
լուծել ըստ նսերի, որը առավել կրացանայի նրանց ընդհանրություն-  
ներն ու յուրահատկությունները և կերպիվեր չոր հնարավորություն  
կընձեռի պատկերացում կազմել միջին ըրոնզի դարի մշակույթների ամբող-  
ջական համակարգի մասին:







Բնակավայըեթք Միջին բրոնզի հուշարձանները հիմնականում հայտնի են դամբարանային կառույցների մեջ: Մտույզ թվագրվող ամրոցներ և քանակավայրեր գրեթե չեն ուսումնասիրված: Դրանց թվին կարելի է գերազանց կարմիր բերդի կիկլոպյան ամրոցը, որը, ինչպես նկատել է դեռևս 1930-ական թ.թ. Բ.Կ.Պիոտրովսկին, կառուցվել է միջին բրոնզի ժամանակաշրջանում, և նրա շրջակայթում կատարված թաղումները վերաբերում են ամրոցի բնակիչներին: Ամրոցը տեղադրված է դեպի Հրազդանի կիրճը դուրս եկող եռանկյունաձև հրվանդանի վրա, իսկ հարթավայրին ուղղված կողմում ամրացված է նզոր կիկլոպյան պարիսաներով: Ներսում երկացող քաղմակիվ բնակարանների հետքերը խիստ ձևափոխված են երկարի դարում և հատկապես միջնադարում: Այժմ առանց երկարատև, պարագերաքար կատարվող պեղումների դժվար է խոսել միջին բրոնզի դարաշրջանի բնականության մասին:

Միջին շրինգեղարյան բնակավայր հայտնի է նաև Հառիճում, որի առաջնային առավագանքը բնակավայրը: Այն գտնվում է Հառիճ գյուղի հարավային ծայրագագատում և կառուցված է մի խոշոր հրվանդանի վրա, որը յոյւսիսից, հարավից և արևմուտքից շրջափակված է կիրճով: Արևելյան հատվածում ամրոցը աստիճանաբար շրջադրանալով համբնկում է Սրագածից սկիզբ առնող լեռնալանջերին: Այս քարձունքը զգվում է արևիլթից արևմուտք և ունի երեք հրվանդաններ: Թուրաթանջյուր դարավանդը՝ մեկը մյուսից անջատվում է խոշոր թարերով կառուցված կիկլոպյան պարսպով: Ըստ միջին բրոնզի դարի վերգետնյա սյուլթերի, թնարկվող ժամանակաշրջանում բնակավայրի դերը էաաես չի փոխվել: Այդ են վկայում նաև հետախուզական պեղումները, որոնք կատարվեցին երկրորդ դարավանդի վրա:

Միջին բրոնզեղարի բնակարանի մեջ մասին որոշակի գաղափար են տալիս Մյակեանի քազմաշերտ պեղումները, ուր վաղ բրոնզեղարյան շերտի վրա հայտնաբերվել են երեք կացարաններ՝ ուղղանկյուն հատկագծով: Այստեղ պահանջվել են միայն թարից հիմքերը, իսկ պատկերի վերին հատկածները թայքայվել են վաղ միջնադարում կատարված շինարարակական աշխատանքների ժամանակ: Այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ ի տարբերություն վաղ բրոնզի ժամանակաշրջանի, բնակարանի հիմնական մեջ հատակագծում դպրում են ոչ թե կլոր հիմք ունեցող, այլ իրար կից ուղղանկյուն շինությունները:

Միջին բրոնզեղարյան ամրոցներ հայտնի են Ոսկեվազում, Մուլեան-նատթափայում:

Հետաքրքիր նյութեր է տվել հարթավայրային Արցախում գտնվող Ուզերլիկիթերե բնակավայրը: Այն սկզբնեկան շրջանում եղել է անտաշտառ,



Ա.44. Միջն բրոնզի դարաշրջանի գտածոներ Տոբի քերդից:

իսկ ապելի ուշերկրորդ շերտի գոյության շրջանում, շրջապատված էր աղյուսաշար կառուցված պարսպով, որի մուտքի մոտ եղել է մեկական որմնանց: Դրանք ըացի պաշտպանական նշանակությունից ունեին կառույցը ամրացնող նշանակություն: Կացարանների պատերի կմախքը ստեղծել են հողի մեջ շարքով խրված 25 սմ տրամագծով փայտե ծողունները: Միջանկյալ տարածությունը լցված է եղեգով կամ թյուղերով և սվաղված է երկու կողմերից: Եւնելով հատակին գլուխած գերանների մնացորդները՝ կարելի է ենթադրել, որ տանիքները եղել են հարթ զերանաշար և սվաղված կապով, հատակները նույնանակած կապածեփ սվաղով են պատված:

Հետաքրքիր նյութեր են տպել նախիջևանի թյուղերափառ 1-ին և 2-րդ և նարմին գանցի ընակպայթերը: Այս հուշարձաններում հայտնաբերվել են քառանկյուն շինությունների հետքեր, որոնց հատակները պատված են եղել թարե սալերով կամ սվաղված կապով: Պատերը շարված են հում աղյուսով: Պահպանված հատվածներում դրանք ունեն 22 սմ լայնություն և 12 սմ բարձրություն /երկարությունը՝ չի պահպանվել/: Սուածին դեպքերում, ըացի քառանկյուն կացարաններից, նկատվում են կլոր կամ ծվածե հիմքերով սենյակների հետքեր: Մակայն քանի դեռ դրանք լրիվ պեղված չեն, հնարավոր չեն որոշել դրանց ստույգ ժեք, հատակագծերը:

Հետաքրքիր մի կացարան է հետազոտվել Լոռի քերդի մոտ գտնվող կիկլոպյան ամրոցի տարածքում: Այդ կացարանը ունի ոչ միշտ ուղղանկյան տեսք /երկարությունը՝ 24-26 մ, լայնությունը՝ 6,25-4,25 մ/ և միջանկյալ պատերով բաժանված է 4 սենյակների: Հիմնական պատերն ունեն 2,5 մ լայնություն, միջանկյալները՝ 1,2 մ: Այստեղ աեղվել է մեկ սենյակ, որի հատակը պատված է խմաճարով և սվաղված է կապով:

Քացի քնակավայթերից հետաքրքիր պաշտամունքային կառույց է հայտնաբերվել Զորացքար Վայրում: Այս հուշարձանը գտնվում է Սիսիխնից 2,6 կմ հյուսիս-արևմուտք: Ջրաղեցնում է արևմտյան կողմից Խոր կիրճով առանձնացող եռանկյունաձև հարթություն, որի արևելյան կողմում, հյուսիս-հարավ ուղղությամբ, շուրջ 280 մ երկարությամբ ձգվում են 0,5-2,4 մ բարձրություն ունեցող ուղղանկյունաձև, սեղանաձև, կոնաձև, ժայռացեկորները, որոնց մի մասը լրված է մայթ հողի մեջ, մյուսները դրված են ժայռերի վրա: Այդ ժայռացեկորներից 57-ի վերին մասերում 6-8 սյ տրամագծով անցքեր են փորված: Զգված թարաշարքի կենտրոնական մասում նույնանակած թարակտորներով ծեռվորված 1է մի շրջան, որի տրամագիծը 40-45 ս է: Այդ թարերից և ոչ մեկի վրա անցը չկա: Թարաշարքի 30-40 ս արևմուտք ողջ հարթությունը ծածկված է տարքեր ժեքով և շափեր ունեցող կիկլոպյան կառույցների ավերակներով: Դրանցից խճորները, որոնց մակերեսը տառանվում է 250-1000 մ<sup>2</sup>, ցանցապատված

բացօթյա բակեր են, մինչդեռ փոքր, սալածածկ կառույցների մակերեսը 20-60 մ<sup>2</sup> էր: Այս կառույցներում և դրանց միջև ընկած տարածքներում տոկա են ուշ շրջանի դամբարաններ, որոնք ըստ կառուցվածքի բաժանվում են երկու խմբի: Առաջին խցին պատկանողները թարթ զրահով ծածկված վերգետնյա թարարկեցներ են և, ինչպես ցույց են տվել պեղումների արդյունքները, պատկանում են մ.թ.ա. 10-8-րդդ.դ.: Երկրորդ խմբի դամբարանները, որ բացված են ու կողոպաված, պատկանում են մայր հողի մեջ պատրաստված խոշոր թարարկեցների տեսակին, ինչպիսիք ընորոշ են ուշ բրոնզի-վաղ երկաթի դարաշրջաններին:

Հետախուզական պեղումներից պարզված է, որ մշակութային շերտի հրագորությունը ամենուր տարածվում է 30-50 սմ միջև, որից ներքև մայր հողն է կամ ժայռեր: Հայտնաբերված սակավաթիվ նյութերը ներկայացված են տարբեր ինցանոթների բեկորներով, վանակատե ծլեպներով, աղորիթներով, կրկնաբարերով, կոկիչներով և այլն: Խեցանոթների քեկորները ներկայացված են մի կողմից վաղ ըրոնզին հատկանշական և ազատափայլ մակերես ունեցող լայնաբերան զավաթների և այլ ամանների մասերով, մյուս կողմից՝ գունազարդ խեցանոթների բեկորներով: Վերջիններիս կարմիր մակերեսը զարդարված է մուգ-շագանակագույն, երբեմն ևն գույնի արված հորիզոնական ալիքանե կամ անկյունաձև տարրված լայն ժառավեններով:

**Դամբարաններ:** Հայաստանի մի ջին ըրոնզի դարի դամբարանային համալիրները տարբեր ճևերև կառուցվածքներ ունեցող շինություններ են, որոնք պահի են ընկնում քազմազանությամբ /որք ընորոշ է նաև թաղման ծեսին/: Այս դամբարանային կառուցվածքների ամենաքննորոշ հատկանիշներից են դամբարաքլուրները, որոնք ունեն փոփած բլուրների տեսք և համեմատաբար կանոնավոր հատակագիծ: Կարմիրբերդյան հայտնի դամբարանադաշտի դամբարաքլուրները ունեն քարե կամ հողաբարե ոչ մեծ /0,7-ից մինչև 2 մ/ բլուրների տեսք: Մըսն դամբարանային խոցերը, որոնք գտնվում են կենտրոնում, ունեն ուղղանկյուն փոսերի ձև և ծածկված են քարե սալերով:

Նման դամբարաքլուրներ հանդիպում են Հատիմի դամբարանադաշտում: Այստեղի դամբարաքլուրիների տրամագիծը տատանվում է 10-16 մ, իսկ քարձորությունը՝ 0,7-0,8 մ միջև: Դամբարաքլուրների գերակշռող մասում, լիցքի տակ խոշոր թարերից կառուցված զրահ: Դամբարանային խցերը, ինչպես և կարմիր թերզում, հիմնականում հիմնառղային են, չնայած որ հանդիպում են սալերով ծածկված թարարկեր: Բոլոր դամբարանախցերը լցված են հողով և քարով: Ի տարբերություն նարմիր թերզի, դամբարանախցերն ունեն տարբեր ճևեր. հիմնականում հատակագծում ուղղանկյուն են, սակայն հանդիպում են նաև ծվածք, կլոր անկյուններով փոսեր: Այս դամբարանների խորությունն է 0,4-3 մ, իսկ երկարությունը՝ 1,6-3,2 մ



1



2



3



4



5




6




7



8




9



10




11




12 13

14



15



16

Աղ. 45. Միջին բրոնզի դարաշրջանի գավառներ Կարմիր  
կտորից:

Նմանատիպ դամբարաններ հայտնի են Գոռնիից, Խոթունարխից, Արծվաբերդից, Սևան Գեսից, Նոր Բայազետից և այլն:

Խոշոր, հիմնանողային դամբանափոսերով դամբանաքըլուրներ հայտնաբերվել են Լոռջենում, որոնց թումբը, երկար ժամանակ մնալով ջրի տակ, քայլայվել է, սակայն առաջանվել է 1 մ. քարձրությամբ ջարե գրանի: Այստեղ մասն քարերի հետ հանդիպում են 4-5 մ լեռության ծածկասալեր: Համակառես հետաքրքիր է նիրովականի դամբանաքըլուրը, որը 30 մ<sup>2</sup> և 3 մ լուրությամբ խոշոր փոս է: Այն ծածկված է փայտ սյուների վրա հենված քարե սալերով: Հառիմի դամբարաններից մեկում հանդիպում են գերանածածկ՝ նրան մոռեցնելով համաշենքի դամբարաններին, ուր լայնորեն տարածված են փայտ ծածկերը:

Համեմատաբար փոքր դամբանաքըլուրների հետ Թուղթում հանդիպում են խոշոր դամբանաքըլուրներ: Թուղթի դամբանաքըլուրներից մեկը ուներ մինչև 5 մ քարձրություն, իսկ դամբանախցերի խորությունը հասնում է 3 մ: Կցերի մեծ մասամբ հիմնանողային են: Դամբանախցերը ուղղանկյուն են, գեռանածածկ, իսկ հատակները ծածկված են եղեգնից պատրաստված խիրով, հենց վուս են փայտ սյուների վրա: Արևելյան կողմից խցերն ունեն դամբանաքըլուր /դրուսո/, որ երկարությունը հասնում է մինչև 40 մ:

Թուղթի դամբանաքըլուրների շարքում հանդիպում են նաև վերզետնյա խցերով դամբանաքըլուրներ, որոնց թմբի քարձրությունը հասնում է մինչև 8 մ: Բայց ևենորութական մասի տակ, մայր հողի մակերեսին, խոշոր քարերով չոր շարքածորով կառուցվել են խոշոր սրաններ, որոնցից մեկի մակերեսը հասնում է 175 մ<sup>2</sup>: Այս շինությունների պատճերի քարձրությունը հասնում է 7 մ, ծածկը նմանվում էր հիմնանողայիններին: Մրանները ունեցել են այլուների վրա հենված գերանածածկ: Նման վերզետնյա դամբանաքըլուրների դամբարան հայտնի է նաև Քարաշամբից: Հայաստանի միջին քրոնգեղարի մի շարք դամբարանաղաշտերում դամբարանների վերզետնյա հատվածներ չեն առնանվել, իսկ դամբարանախցերը տարբեր մեավորում ունեն: Մեծ քանակ են կազմում քարարկերը, որոնք ունեն ուղղանկյունաձև հատակագիծ և ծածկված են մի քանի սալերով: Նման կառույցներ հայտնի են Շիրակավանից, Լոռջենից, Եւառից, Կարմիր քերդից, Լոռի քերդից և Հայաստանի այլ հուշարձաններից: Բացի դրանից քեթիում հանդիպում են հիմնանողային կառակոնքաներ՝ մկան մուտքով: Այն ծածկված է երկու սալերով:

Միջին քրոնզեղարի դամբարանների մի մասը գետնի մակերեսին շրջագուստ է կրոմլեխի քարերով, առանձնանաւով իջուկ կրոմլեխային շրջագուստ թաղումներ: Հայաստանում հայտնի կրոմլեխներն ունեն մի քանի մետր: Հանդիպում են կրոմլեխներ, որոնց շրջագիծ քարերը թաղված են

հողի մեջ, մեկը մյուսից 0,3-1,5 մ հեռավորության վրա: Կան կրոմը եկանք, որոնց շարվածում թարերը կտած են մեկը մյուսին: Հանդիպում են նաև այլ ձևեր: Օրինակ, արտաքին շրջագիծ դեպի ներս, մինչև դամբարանի ծածկը ճգփում են ուղղի պատեր, որոնց կրոմը լեփի ներսը թաճանում են մի քանի հատվածների: Միաշարք շրջագիծ ունեցող դինությունների հետ մեկտեղ հանդիպում են նաև երկշարք կրոմը լեխներ:


Միջին շրոնզեղարի դամբարանների մեջ հատկապես հետաքրքիր է Լոռի քերդի թարարվելու մեկը, որի կրոմը լեփի շարված է թարերից և ծածկված է շրոն սաւերով /երկարությունը՝ 6,7 մ, լայնությունը՝ 2,92 մ, խորությունը՝ 2,6մ/: Դամբարանի պատերը փոքր-ինչ ներս են թերզված, որի հնականությունը կողային պատերը ներթևից վերև մոտենում են մեկը մյուսին և կազմում են երեք աստիճանամբ կեղծ թաղ՝ փոքրացնելով դամբարանի ծածկի թուիչը, որի վրա տեղադրված են ծածկի սաւերը: Այս մեր հիմք է առաջին անդելու, որ Հայաստանում միջին շրոնզի դարից սկսած տարածվում է թաղի գաղափարը: Այս հատազայում օգտագործվում է թաղաքացիական շինարարության մեջ և հիմք է ծառայում Հայաստանում ժողովրդական տեսքի „հազարաշեն,, ծածկի համար:

Դամբարանացերը ինչպես թարակային, այնպես էլ հիմնահողային, հապակները համախակի ծածկված են եղել հողով, պավոնվ, գետացարով: Անսամբին դեպքերում սովորություն կար հանգուցյալի և ուղեկցող նյութը ծածկել ջրիկ կավով, որը շրունչավ դատում է ամուր շերտ՝ առաջանալով ամեղղ թաղման գույքը:

Քեթի դամբարաններից մեկում հայտնաբերվել է երեք թարերից շարված մի օջախ, որն առաջին անգամ է հանդիպում Հայաստանում և Անդրկովկաստում: Դամբարանացերը, որպես կանոն, դատարկ էին որևէ լիցությունայի հանդիպում են դամբարաններ, որոնց թաղումից հետո լցվել են հողով և մասն թարերով:

Մեջեցյալների թաղումները կատարվում էին երկու ձևով: Ավելի համար հանդիպում են դիաբաղումներ, պատճի թիշ՝ դիակիզումներ: Մյուս դատում էլ դամբարանի հատակին, թացի վերը նշված հողից և կավի լիցությունը կազմում էր դամբարանի հատակը, համախակի հանդիպում են խիթներ: Հարուստ դամբարաններում կան փայտի պատգարակներ:

Կիրովականյան պատգարակի ոտքերի կողային փայտերը ծածկված էին արծաթյա թիթեղներով և զամերով: Ավելի մեծ դամբարաններում, հատկապես թուղթյան և լամաշենյան խմբերում, հանդիպում են սաւեր, որոնց վրա դրվում էր հանգուցյալի դին: Ուղեկցող նյութը հիմնականում խեցեղեն անոթներ էին, իսկ հարուստ դամբարաններում համախակի են մետաղի զենցերը, զարդերը, զործիցները և այլն: Թարգր խավին պատկանող



Աղ. 46. Միջին քրոնական դարաշրջանի նյութեր նկ.1-3,5,7 Ական հետ-ից,  
նկ.8,9,11-13 Լըսշենից, 4,6,10,14,15 Նոր Բայզենից,  
նկ.16,18 Նավուրից, նկ.19 Ինևանից:

դամբարաններում քազմաթիվ են ոսկյա և արծաթյա տարբեր զարդերը, որոնց վկայում են սոցիալական խիստ շերտավորվածության, անհավասարության մասին:

ՑՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵՎԵՐԸ: Հայաստանի միջին քրոնզեռյան հուշարձանների ուսումնասիրությունը կատարված է անհամաշափ: Փոքրթիվ քնակավայրերի հետազոտումը՝ Սուլիաննաթթափա, Ուզերլիկթեփե, Այգեսե, Մեծամոր, Ձրահովկիտ, Նախիջևանի Ջուլթեփե և այլն, կատարվել է ոչ մեծ մակերեսով, որի հետևանքով գտնվել է թիզ քանակությամբ, քայլ հետաքրքիր նյութ, որը և հնարավորություն է տալիս դատելու երկրագործության զարգացման մասին: Ուսումնասիրության ընդհանուր պատկերը վկայում է այն մասին, որ միջին քրոնզեռյան սկզբանի և Անդրկովկասի քնակչությունը սկսում է ինտենսիվորեն քնակեցնել նախալեռնային և լեռնային շրջանները, որի պատճառները ոչ միշտ են ստույգ պարզաբանվում: Մի շաբթ ուսումնասիրողների կարծիքով, զա կապված է անտառապահնության և մետաղազործության զարգացման հետ՝ եթե ցեղերը լայնորեն օգտագործուած էին արտավայրերը և հանքերը: Գիտնականների մյուս նույնը գտնում է, որ Բուռ-արաքսյան մշակույթի մոտ մեկ հազարամյա զարգացման ընթացքում կատարվել է մասսայական անտառապահում, որը հանգեցրել է անտառների սեկուլյարյան և կլիմայի փոփոխությանն Տեղումների պակասումը, հաճախակի երաշտները ստիպել են քնակչությանը որոնել քնակլիմայական պահել հարմարավետ շրջաններ ավանդական տնտեսածեները շարունակելու համար: Սակայն քազմաշերտ հուշարձանների պեղումները վկայում են, որ դա կապվել է ոչ ամենուրեք, թանի որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակին փերաբերող շերտի վրա միջին քրոնզեռյան քնակավայրերը շարունակվում են:

Բնակավայրերի նյութերի մեջ հանդիպում են նաև քազմաթիվ աշխատանքային գործիքներ՝ սանդղեր, սանղկոթեր, տրոիիչեներդ վանակատից և կայծարից մանգաղների ներդիրներ, իսկ առանձին հուշարձաններում՝ փոքրթիվ քրոնզե մասգաղներ: Իրենց մեջերկ երկրագործության հետ կապված այս գործիքները թիզ են տարբերվում ցուռ-արաքսյան գործիքներից, որը հնարավորություն է տալիս ենթադրելու միջին քրոնզի ժամանակաշրջանում շարունակվող ցուռ-արաքսյան երկրագործության ավանդույթների, եթեային և արորային երկրագործության ավելի մեծ տարածքների յուրացման մասին: Ուզերլիկթեփեում հայտնաբերված ցորենի, զարու, խաղողի կորիզների, ինչպես նաև կորեկի աւլյուրի մնացորդներով ամբարների հայտնագործուած, վկայում է, որ երկրագործական քնակավայրերը դաշտային շրջաններում շարունակում էին իրենց գոյությունը: Նման պատկեր տոկա է նաև Այգեկանում, որտեղից հայտնաբերվեցին միաշաբթ ցորենի ու զարու հատիկներ, խուրծեր: Այս հանգամանքը մի կողմից վկայում է, որ ավանդաբար կատար-

կում էին խոր ցանքսեր՝ երաշտից խուսափելու համար, մյուս կողմից՝ որ կալում էին աստիճանաբար: Տարածքների զգալի պվելացան մասին է վկայում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի քարե կամի հայտնագործումը Զանզեգուրում: Այս հանգմանը վկայում է, որ ցանքառարածքների պվելացումը և քերքի ամք պահանջում էին կալսելու նոր եղանակներ: Քարե կամի և կալսերի հանդես գտնուց բացի հացանարիկը ցողունից անջատվում էր կենդանիների սմբակներով տրորման միջոցով: Երկրագործության զարգացման անուղղակի վկայությունն է խոչոր եղջերավոր անառուների մեծաքննակ ոսկորների հայտնագործումը:

Հնայած այս ոսկորները հիմնականում գտնվել են դամբարանային համալիրներից և կարող են խոհանոցային մնացորդներ լինել, այսուևս մեծապահության դրանք որոշ շափով պրացուում են անասնականության զարգացման պատկերը:

Այսպես, Թոեղյան մշակույթի հուշարձաններում զերակշռում են խոչոր եղջերավոր անառուների ոսկորները: Նույնը վերաբերում է Արծվաբերդի դամբարաններին, ուր գտնվել են հինգ խոչոր և երկու մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ: Նման պատկեր նկատվում է Լճաշենում և Կիրովականում:

Ատակապս հետաքրքիր են Կիրովականի դամբարանարշուրի նյութերը: Հայտնաբերվել են երկու ցուլի և տասնչորս խոզի գանգեր: Խոզի գանգերի պայտիսի մեծաքննակ հայտնագործումը վկայում է նստակյաց անասնապահության զարգացած ժենիք մասին: Հետաքրքիր է, որ Լճաշենի դամբարաններից հայտնաբերվել են ցլասայլերի մնացորդներ:

Մեծ քանակությամբ ոսկորաբանական նյութեր են հայտնաբերվել Հառիթի դամբարանաշաշտում, ուր քանակական տեսակետից զերակշռում են մանր /շնայմ զգալի են նաև խոչոր/ եղջերավոր անառուների ոսկորները:


Հետաքրքիր նյութեր են տալիս Ծւզերլիկթեփերի պեղումները: Այստեղ գտնված 893 ոսկորներից մի մասը պատկանում է 26 խոչոր եղջերավոր կենդանիների, 20 այժի և ոչխարի, 5 ձիու, 11 ընտանի խոզի և մեկ շան: Նման պատկեր է դիմավում Խանլարի մոտ կատարված պեղումներում: Այստեղ տարբեր դամբարանների պեղումներից հայտնաբերված ոսկորների մեծ մասը պատկանում է ցուլերի, բայց քանակության երկրորդ տեղում են այծերի, ուստի միու և շան ոսկորները: Նման պատկեր նկատվում է Հայաստանի և Անդրկովկասի մնացած հնավայրերում, ուր երբեմն զերակշռում են խոչոր եղջերավոր անառուների, մյուս վայրերում՝ մանր եղջերավորի ոսկորների: Երբեմն դրանք հանդես են գտնիս հավասար քանակով, բայց որպես կական տեսակետից ամենուրեց զերակշռում են խոչոր եղջերավոր անառուներները, ուստի որ ընդունված է 1 խոչոր և մինչև 5 մանր եղջերավոր անառուների հարաբերակցությունը համարել խոչորների զերակշռություն:




1



2



3



4



5



6

Աղ. 47. Միջն բրոնզի դարաշրջանի գառեներ Կիբովյանից:


Նման երեւյթը մի կողմից վկայում է, որ Հայաստանի և Անդրկովկասի միջին ըրոնզի ժամանակաշրջանում կազմակերպվում է յուրատեսակ ռեսանատարներն, որտեղ զգալի դեր է կատարում կենդանիների երկու հիմնական տեսակների օգտագործումը: Հոտում զգալի քանակով խոշոր եղջերագոր կենդանիների առկայությունը հուշում է, որ նրանց կարող էին լայնորեն օգտագործվել վարելու, կալսելու, սայլերը թաշելու նպատակով: Մասնաւոր հայտնաբերումը վկայում է, որ շարունակում և գարգանում էր հեռագնա անասնապահությունը, գարնանը և ամռանը անասունները բարձրանում էին սախալեռնային, լեռնային արոտավայրերը, իսկ ուշ աշնանը վերաբանում մենունոցները: Խոզերի ոսկորների մեծաքանակ հայտնագործումը վկայում է, որ մի կողմից բնակչությունը լայնորեն օգտագործում էր միստ, իսկ մյուս կողմից՝ անասնապահությունը կրում էր նստակյաց ընույթ, թանի որ խոզերը չեն պատկանում թռչվորական կամ հեռագնա կենդանիների թվին:

Միջին ըրոնզի դարաշրջանում ավանդական անասնապահության ժեերի հետ ինտենսիվ զարգանում է միաբուժությունը, որի հանդես գալու, ինչպես նշվեց Վերը, Վերաթերում է էներլիթյան ժամանակաշրջանին: Հայաստանի միջին ըրոնզեղարյան դամբարանային համալիրներում հայտնաբերվել են միու ոսկորներ, որոնց թիվը փոքր-ինչ պակաս է Վաղ ըրոնզի ժամանակաշրջանում: Զիու ոսկորներ գտնվել են Արծվաբերդում, Երևանում, Վերին Նավերում, Նոր Օշականում և այլ վայրերում: Այդ ոսկորների հայտնաբերումը մեծ դեր է խաղում Հայաստանի ուազմական գործի արգաքանման հարցում: Հուշարձաններից հայտնաբերված սպառազինությունը որոշակի սմանություն է տալիս խթական ուազմարվեստի հետ: Բացի դրանից կամ մի շաբթ նյութեր, որոնք վկայում են, որ Հայկական լեռնաշխարհի ցեղերի գինվորները և մարտականացները մասնակցել են խեթական թագավորության կողմից վարվող պատերազմներին: Այս տվյալները հնարավորություն են մասնաւոր հետաքրքրություն ունեցող գիտական հետազոտությունների համար, որ ընդհանուր կամ շատ մոտ պետք է լինեն երկու երկրների միավարժեցման մեջը: Միաժամանակ պետք է նշել, որ շնայած ժիաբուժության զարգացմանը, մին Արևելքում դեռևս մնում էր թանկ կենդանի, և նրա գինը, հաշվի առնելով տարիքը և օգտագործման ժամանակը, հաշվվում էր չորսից մինչև քսան սիկլ՝ /տարբեր երկրներում 1 սիկլը հավասար էր 4,8-5,8 զրամ արծաթի/, այն դեպքում, եթե ամենաքարքը արժեց ունեցող ցուցերի գինը չեր անցնում 12 սիկլից, իսկ ոչխարի գինը՝ 1 սիկլից: Զիու այսպիսի բարձր արժեքը առայմանավորված էր ինչպես անասնապահության զարգացմամբ, եթե հովհանները լայնորեն օգտագործում էին մին, այնպես էլ ուազմական գործի զարգացմամբ, եթե ամբողջ Արևելքում

խուրրիները, հեթիթները, իրանացիները, մեղիացիները, Հայկան քաքա-  
րավանդակի ցեղերը սկսեցին օգտագործել միերով լծված թեթև մարտակառ-  
քերից բարկացած զորամիավորումները: Այս նոր զորամիավորումները կա-  
րողանում էին հեշտորեն մեղքել ոչ կայուն հետևակային միավորումնե-  
րը: Զիերի մարզման համար ստեղծվել են անզամ հատուկ ձեռնարկներ,  
որոնցից մեզ հասած մեկում՝ „Նիկուլիի տրակտտատ,, անվամբ, մանրամա-  
սին նշվում են մարտակառքին լծվող միերի ընտրության և վարժման ժե-  
կերը, որը կատարվում էր մի քանի ամսվա ընթացքում: Իհարկե, չի կա-  
րելի ինն արևելյան վարժեցման մեթոդները մեխանիկորեն փոխադրել Հայ-  
կական բարձրավանդակ, սակայն ավելի ուշ ժամանակների նյութերը վեա-  
յուն են ինչպես ծիաբուծության զգացի ամի, այսպես էլ Կանի թագավո-  
րության և խեթական ծիաբուծության ընդհանրությունների մասին: Գա հնա-  
րավորությունն է տալիս ենթադրել, որ ընդհանրությունները սկսել են  
ավելի վաղ շրջանից:

**ՄԵԾՄԱՎՄԾՎԱԿՈՒՄ:** Տնտեսական և մշակութային կապերի ամրապնդումը,  
լայնացումը հին արևելյան մշակութների հետ մեծ նշանակություն ու-  
նեն Հայկական բարձրավանդակի ցեղերի նյութական և հոգևոր մշակույթի  
զարգացման և ծաղկման համար: Այդ կապերը, որոնք ստույգ արձանագրված  
էին դեռ վաղ ըրոնզի ժամանակաշրջանում, միշին ըրոնզում հատկապես  
պարզորեն նկատվում են մետաղագործության մեջ, եթե Հայաստանի միջին  
քրոնզի ցեղերը ներմուծում էին նոր ճեների մետաղամշակման արտադրանք  
խողովականություն նիգակներ, շրջանակած քոնակներ ունեցող դաշույններ,  
ասիմետրիկ սակրեր և այլն: Դրանք լրացնում էին ավանդական ճենեվ ար-  
տադրվող տեղական տափակ կացինների, պղնձե մանգաղների, տարեեր դուրե-  
րի շարթը, որոնք կատարելագործվելով ժեռու էին քերում նոր ճեներ:

Չուլման արցեցի մասին վկայում է Ուզերլիկթեփեից զտնված հա-  
լոցք: Բացադիկ երկույթ կարելի է համարել ոսկուց և արծաթից, եթե-  
մեն կիսաթանկարժեք գարողարված կիսաթանկարժեք քարերով սպաս-  
ըի հանդես գալը: Կերպիններս աստրաստիվել են փորագրման և դրվագման  
տեխնիկայի օգտագործմամբ: Տարբեր մետաղյա նյութեր պատրաստելու ֆա-  
մանակ Հայաստանում միշին ըրոնզեղարյան վարեատները լայնորեն օգտա-  
գործում էին մկնդեղային ըրոնզը, մկնդեղանազային ըրոնզը, մկնդեղա-  
արմիմային ըրոնզը, բազմակուլապոննենտ ծուլվածքները, ինչպես, այսպես  
կոչված, հատուկ ըրոնզը, որը հանդիսանում է պղնձի և արծաթի խառնու-  
թը: Մետաղե առարկաների՝ զենթերի, աշխատանքային գործիքների, զար-  
դերի հիմնական հայտնագործությունները կատարվել են դասբարանային  
համալիրներից, որոնք միշտ չեն, որ տալիս են մեծաքանակ նյութեր:  
Հայտնաբերված նյութերը հիմնականում ներկայացված են տարեեր կացին-  
ներով, դաշույններով, դուրերով և այլն, որոնք բաժանվում են հետեւալ



Աղ. 48. Միջին բրոնզի դարաշրջանի գուածուներ Կիրովականից  
222

## Ճեթիք:

ՆհջԱՎԿԱՆԵՐ: Փետրածն սայրով, խողովակածն կոթառով նիզակները, որոնք փոխարինում են վաղ քրոնզեղարյան պոշավոր կոթառներ ունեցող նիզակներին, հայտնի են Կիրովականից, Թոեղթից, Արուճից, Ավագարյուրդից, Ազնաբերդից, Լմաշենից, Կամոյից, Հառիմից, Կարմիր վանթից: Դըրանց մեջ հատկապես համարթիքը է Հառիմի մեկ նիզակը, որը ստորին մարտը ունի երկու ծեղվածք՝ կոթառին ամրացնելու համար: Նիզակի կոթառը զարդարված է փորագրված թեթ զծերով լցված ուղղանկյուններով և չեղանկյուններով, մի սախչածն, որը հայտնի է դեռ վաղ քրոնզի ժամանակաշրջանից:

ԱՄՑԻՆՆԵՐ: Հայաստանի միջին քրոնզեղարյան կացինները կազմում են ոչ մեծ, քայլ քնորոշ խումբ: Դրանցից լենինականում գտնված կացինը, որն ունի ասիմետրիկ ձև և կոթառի տակից ելուստ: Այս կացինը, որը սակրածն կացինների ամենահին օրինակն է, թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարմայակի սկզբով: 2-րդ տիափ կացինները հայտնաբերվել են Շամշադինի նավուր գյուղի մոտ: Դրանք ունեն ծվածք անցքով փոքր-ինչ կախված կոթառ, առաջ թերված կեռ իրան և լայնացող սայր: Այս տիափ կացինները թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարմայակի 1-ին քառորդի վերջով: Մրանց մեջ վերջինն է Կիրովականի ասիմետրիկ սակրը, որի վիզը վեց նիստ, թեր կոթառ և կլորացող սայրային մաս: Անդրկովկասում այս տիափ կացիններ հայտնի են Գոմազելեից, Բողուոնից և Տաղկայից: Սի քանի նման կացիններ հայտնի են Հյուսիսային Առվկասից:

ՊԱԿՐՈՒ: Ներկայացված են երկու շենք օրինակներով: Դրանցից մեկը պատահականորեն հայտնաբերվել է իջևանում, մյուսը անդգել է Քարաշամբից մեծ դամբանարելուրից: Երկուսն էլ ունեն կիսալուսնածի սայր, քարքը ուսեր, որոնց ծայրերին կան փոքրիկ զողավորություններ: Ոչ մեծ կոթառի տակով անցնում է իրանին գորգանոն մի ժող: Կոթառի սառորին մասում կա կլոր ելուստ: Այդ տիափ սակրերի մոտիկ մեկը հայտնի են Ուտի արքայական դամբարաններից, իսկ ավելի ուշ, կատարելազործված մեկը գտնվում են Էլուրիստանի, Էլամի, Սիրիայի, Պաղեստինի մի շարք հուշարձններից:

ԴԱՇՈՒԽՆԵՐ: Ներկայացված են ոչ մեծ խմբով և քածանվում են մի քանի տիափ: Առաջինը տերևածն շեղեքը ունեցող դաշույններն են, որոնց կենարոնը փոքր-ինչ հաստատված է, իսկ լեզվակը ներկայացված է Փոքր ելուստավ, որի վերևում կա անցք՝ փայտն կոթառը ամրացնելու համար: Նման դաշույններ հայտնի են Կիրովականից, Երևանից, Արծվաքերդից, Ելատից, Թոեղթից և թվագրվում են մ.թ.ա. 18-16-րդ դ.դ.: Դրանց մեծքով մոտ են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջին հանդես նկող զաշույններ:


ըին, որոնք հայտնի են Շումերից, 'Իելուփից, Կիպրոսից և Փոթրիկ թռն-կով՝ Եփրատ գետի վերին հոսանքի հուշարձաններից:

2-րդ տիպը ներկայացնում են նեղ, երկար շեղը ունեցող դաշտւյն-ները որոնց կենտրոնական մասը նույնանում է հաստացված է, լեզվակը երկար է և վերին մասում ունի անցը՝ փայտ կոթառը ամբացնելու համար: Նման դաշտւյնները հայտնի են Եջմիածնից և Թվազրպում են մ.թ.ա. 17-16-րդ դ.դ.: Դրանց մոտենում են Կարմիր վանքի դաշտւյնները, որոնք, բայց երկույթին, թվազրպում են փոքր-ինչ ուշ ժամանակով: Եջմիածնից հայտնի են նույն տիպի դաշտւյնները, որոնց կենտրոնական մասը, փոխանակ հաստացվելու ունի լայն, միջնակյալ ող, ինչը նկատվում է նաև թուղթում զանկած մի թանի դաշտւյնների վրա:

Դաշտւյնների 3-րդ տիպը կազմված է, այսպես կոչված, առաջավորա-սիական տիպի դաշտւյններից: Դրանց հիմնական հատկանիշը ըռնակի ծևն է: Այդ տիպի դաշտւյնների ըռնակները տափակ են և ծայրերին ունեն ելուս-տաճ եզր, որի մեջ տեղադրվում է փայտայ կոթառը: Կոթառի և շեղի միացման տեղում կա փոքրիկ ելուստ: Հայաստանում այս տիպի վալազույն դաշտւյնները թվազրպում են մ.թ.ա. 18-16-րդ դ.դ. և հայտնի են Հատի-նից, Կարմիր վանքից: Դրանք, փոքր-ինչ ծևափոխվելով, հարատևում են մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի ակիզեր: Առաջարկոր Ասիայում նման դաշտւյններ հայտնի են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերից և 2-րդ - հազարամյակի ակզերից: Գտնվել են Ռաս-Շամրայում, Զաքար քազարում, Սեղինդյում, Նիհավենդում և այլ վայրերում:

ՍՈՒԻՍԵՐՆԵՐԻ: Սիջին ըրոնզի դարշուջանի վերջին Հայաստանում և Անդրկովկասում հանդիս են զալիս սուսեր-թրեր, որոնք ներմուծված էին Կրետոմիթենյան աշխարհից: Այս սուսերներն ունեն մինչև մեկ մետր երկարությամբ շեղը, որի լայնությունը հասնում է 6 սմ: Սուսերների ուսերը փոքր-ինչ լինելու համար անցնում է իսկամ ուռուցիկ միջնակյալ ող: Սուսերի կենտրոնից դուրս է զալիս փոքրիկ ելօնվակ՝ փայտ ըռնակը ամրացնելու համար: Նման սուսերներ Հայաստանում հայտնի են Ձորագետից, Ղաշղանից, Որոտնաքերդից, Մայիսյանից, Այգեշատից: Երկու այդպիսի սուսերներ հայտնի են Սամթավորյացից: Այս սուսերները թվազրպում են մ.թ.ա. 18-16-րդ դ.դ.:

Իսկ զենքից, միջին ըրոնզեղարյան նյութերում հանդիս են զալիս ոչ մեծ խումբ կազմող ըրոնզե գործիքները: Դրանցից է Կիրովականից զանկած տափակ կացինը, որը, նմանվելով վաղ ըրոնզեղարյան երևանյան գանձի տափակ կացիններին, ունի ուշ ժամանակում հայտնաբերված նման գործիքներին ընորոշ մի շարք գծեր: Դրանք արտահայտվում են ավելի լայն, կերպ-ցող աշխատանքային մասով և կողերում հոգերիկ ելուստների առկայությամբ: Այս տիպի գործիքները լայնորերեն օգտագործվել են ատաղճա-



Աղ. 49. Միջն բրոնզի դարաշրջանի գտածոներ Կիրովականից:  
225

գործության և կաշվեզործության մեջ։ Կիրովականից հայտնի է նաև այլ մի ասաղձագործական գործիք՝ ուրբ, որը լայնացող մի խողովակ է, ուր տեղադրվում է փայտի բռնակը։ Աշխատանքային ծայրն ունի կլորացող կորպածք։ Բացի դրանից հայտնի են մետաղե բգեր /քորմիր կանքից, Հա-ռիմից/, որոնք լայնորեն օգտագործվել են կաշվեզործության մեջ, իսկ անհաճեցության դեպքում՝ առաջնազործության։


Միշին քրոնզեղարյան մետաղազործության մեջ ուրույն աեղ են զրա-վում քրոնզե կաթսաները, որոնք հափախակի հանդիտում են քրոնզե կեռիկ-ների հետ նախաները, որոնք կազմում են մետաղյա անոթների մի հաս-տորթիր խուժը, հայտնի են Կիրովականից, Լոռի թերդից, Հառիմից, Սրբ-նից, Քրաչամերից, Թուղթից։ Կիրովականի կաթսան մի խոշոր անոթ է՝ կազմված երկու պղնձե թիթեղներից։ Նրա քարձը իրանը Կենարոնով փոքր-ինչ նեղանում է։ Կերպավուն հատակը պատրատված է մեկ ամրող ջական թիթեղից և ամրացված է իրանին դրվագման միջոցով։ Այս կաթսային մելք մոտ է Հառիմում հայտնաբերվածը, որն ունի փոքր-ինչ հարթ հատակ։ Եր-կու կաթսաների բռնակները ուղղահայաց ամրացված են անոթի վերին մա-մին։ Կիրովականիան կաթսային նման կաթսաներ հայտնաբերվել են Լոռի թերդից, որոնց իրանը ների վեր նեղանում է։ Ծրւանից գանված կաթսայի բռնակները տարբերվում են մյուսներից իրենց ատամնավոր մենով։ Կիրով-վականյան տիպին նման կաթսաներ հայտնի են նաև Թուղթի դամբանաբերւու-ներից։ Կաթսաների հետ միասին համայսիկ հանդիպում են քրոնզե կեռիկ-ներ, որը հնարավորություն է ավել հետազոտողներին ենթադրելու, որ դրանք ծառայել են կաթսաներից միև հանելու համար։ Այդպիսի կեռիկներ հայտնի են Կիրովականից, Լոռի թերդի միջին քրոնզեղարյան համալիրնե-րից, սրբներ ունեն խողովակածն կորած մասում անցրով՝ փայտ կործ ամրացնելու համար։ Զողի ծայրը կորանալով՝ կազմում է աշխատա-ցային մասը։

Միշին քրոնզեղարի արհետաների մեջ քացառիկ աեղ են զրավում ար-ծաթազործությունը և ոսկերչությունը։ Միանգամից այսպիսի հարուստ և մեծաքանակ արծաթ և ոսկյա իրերի հանդիս զալը, որը եզակի երեսութ է նախորդ թուռ-արաքսյան ժամանակաշրջանի համար, շնականաքար, չի կա-րելի քացրել ապանդական զարգացմամբ։ Ոսկերչական իրեր նմանությու-նը նուազվոր և Փոքր Ասիայի գտածոների հետ քացարվում է արտաքին մշակութային կապերով և հին արևելյան քաղաքակրթության ազդեցությամբ։ Նման երեսութը բնորոշ է նաև հարևան Վրաստանին և անգամ հեռավոր Ծու-մերին, որին Ուռի արքայական դամբարաններիւմ հանդիս են զալիս ոս-կերչության հոյական նմուշներ։ Հայաստանի և Անդրկովկասի միջին թրեքեղարյան գեղարվեստական իրերը ներկայացված են քազմաթիվ քրոն-զե, արծաթե, ոսկյա շքանիշներով, շիթերով, լարից պատրատված ուու-

բարույթներով, որոնք հայտնի են Հառիմից, Կարմիր վանքից, Լճաշենից և այլ հուշարձաններից: Թուղթյան դամբարաններում հանդս են զալիս քազմաթիվ արծաթե և ոսկյա թիթեղներ, որոնցով պատվում էին ըրոնզե և փայտ իրեր: Լայնորեն տարածվում են նրբաթիթեղները, որոնք հայտնի են Կիրովականից և Թուղթից: Մեծ թիվ են կազմում ոսկյա ուլունքները: քաջանարարներ /Կիրովականից և Թուղթից/: Պատճե մեծ թիվ են կազմում հայկական Քարաշամբում /ավելի քան 1000/: Այս ուլունքների մի գգալի մասը հարթ են, սնամեջ, մյուսները զարդարված են ալիքածկ զծերով, հատիկավոր նախշերով և այլն: Թուղթից գտնված ոսկե և արծաթե շքատեղները զարդարված են զունավոր քարերով, զարդահյուսվածքով, ուլորված շարով և այլն: Օճունում գտնվել են ոսկյա կրծքազարդ, ուլունքներ, ինչպես նաև ազգայից պատրաստված կաշիկ: Զարմանալի վարպետության էին հասել ոսկերիչները ոսկյա և արծաթե քարձրարկեստ անոթների պատրաստման գործում, որոնք հայտնի են Թուղթից, Կիրովականից, Քարաշամբից: Այս անոթներից յուրաքանչյուրը արվեստի քարձրանշուշ ստեղծագործություն է և սոցիալական խոր շերտավորման արգանձիք, օգտագործվելով հասարակության քարձր խավի ներկայացուցիչների կողմից: Իրենց ձևավորմամբ և զեղարվեստական տանձնահատկություններով այս անոթները կարելի է քանակավոր երեք մեծ խմբերի՝ հարթ պատերով, ուելքեթային նախշերով և դրվագազրդ:

Հարթ պատերով անոթների թվին են պատկանում Թուղթում գտնված մի ոսկե զավաթ, որն իր մենք մոտենում է առյուծներով զարդարված Կիրովականի զավաթին: Այդ խմբին են վերցաբերում նաև Թուղթի մի այլ դամբարանից գտնված զավաթի մասերը, որը փոքր-ինչ սեղմված է կենարության մասում:

Հայկական մեծ խումբ են կազմում ուռուցիկ պատկերներով անոթները: Դրանց մեջ ուրույն տեղ են զրավում Թուղթի 5-րդ դամբանաբւուրից, Քարաշամբից և Կիրովականից գտնված արծաթե զավաթները, որոնց մակերեսը քածանված է մի քանի գտուներով: Գտուները զարդարված են երկրոշշափական նախշով, իսկ մնացած տարածությունները զարդարված են տասապելական որդ սի, դիցաքանական էակների, մանկան պատկերներով: Այս պատկերները անուղղակիորեն պատկերացում են տալիս հնագույն կահույցի, զենքի և հագուստի մեջերի, ժամանակի հոգևոր պատկերացումների մասին: Նախշազարդման ժամանակ ոսկերիչները վարպետորեն օգտագործել են մետաղի հատկությունները: Նրանք հրաշտի մեռվ հաշվի են առել էակների ավանդական պատկերազրության և այլ երերի հարաբերությունը և խեթական ուելքեթարձրացանդակների Ֆիգուրների նման նրանց պատկերել են կղզային ողբերով, իսկ առանձին մասեր՝ դիմացից:



1



2

Աղ. 50. Միջին բրոնզի դարաշրջանի ոսկուց և արծաթից գավաթներ  
Քարաշմերից:

Այդ գավաթների քաղաքները երևում են Խաչայի դամբանաքլուրներից մեկում գտնված դույլի վրա արված պատկերներում։ Այստեղ պատկերված են եղջերուներ, այժյամներ, այճեր և բռւսական նախշեր։ Դրանց զարդարում են դույլի ամբողջ մակերեսը։ Ուսուցիկ պատկերներն արված են ցածր ուղինեթային եղանակով, իսկ նրանց շրջագծերը՝ կոնտուրային գծով, որն ընդգծում է պատկերներն ու հարավօրությունն է տալիս դրանց պարզությունը։ Պատկերը ստուալու համար թիթեղը սկզբից մշակվում էր ներսից կողմից, իսկ հետո, այն ընդգծելու համար արտաքինից ենթարկվում էր գրաֆիկական մշակման։

Մյուս խմբի անոթներից է Թոեղի դամբանաքլուրներից գտնված ոսկյա գավաթը, որը զարդարված է գունավոր քարերով և ապահացիաներով։ Մասնագետների կարծիքով, այս գավաթը պատրաստված է մի ամբողջական թիթեղից, որը ճպվել է խանահի դազգահի վրա նախի վերևից՝ ներքև, և ապա՝ հակառակ ուղղությամբ։ Պահանջվող ծեր ստանալուց հետո կտրվում էր ավելորդ մետաղը։ Արտաքին կողմից ամրացված են ապահացիաները, իսկ հառուկ պատրաստված փոսիկների մեջ տեղապորվում են վարդագույն և կառույցի քարեր։ Հնայած հայտնաբերված ոսկերչական նյութերի մեծ քանակին, անդիպում են նաև ցածրորակ։ Իրերը Դրանցից են քրոնզե, շրասելները, թիթեղները և այլն։ Հնայած այդ իրերի ոչ քարձր զեղարվեստական նշանակությանը, դրանք աեղեկություններ են տալիս միշին քրոնզեղարյան ժամանակաշրջանի զեղարվեստական մետաղամշակման տեխնոլոգիական և ոմական առանձնահատկությունների մասին։ Այս իրերը պատրաստելիս լայնորեն օգտագործվել են ճգման, լինեման, փորագրման, ներմկման և այլ եղանակներ։ Մյուսներ, թարգմարվեան թասեր, գավաթներ, դույլեր պատրաստելիս օգտագործվել են մետաղի ճգման, փայլեցման, հարթեցման եղանակները, որոնք հիմնականում կատարվում էին դազգահի վրա։ Մասր իրերը, ուլունքները և այլն հիմնականում ստացվում էին կուման և լինեման եղանակով։ Զեղարվեստական արժենաներում այսպիսի տարբեր եղանակների օգտագործումը համեմատություն է գտնում նաև Առաջավոր Ասիայի թաղաքարթությունների արվեստի մեջ, մի հանգամանք, որը անկասկած, օգնում էր տեղական ցեղերի մշակութային վերելքին։

**ԽԵՑԵՑՈՒՐԾՈՒԹՅՈՒՆ:** Հայաստանի միշին քրոնզեղարյան խեցեգործական արտադրանքը քածանվում է մի քանի ժամանակագրական խմբերի, ուր տուավել վաղ համալիրներում դեռևս գոյատեսում են վաղ քրոնզեղարյան քրուտագործության ճները, միաժամանակ տեղ տալով նոր տարբերի, որոնց քնորշ են թենարկագիր ժամանակաշրջանին։ Դրանցից է Հառիճում հայտնաբերված խեցեղենը, որը հիմնականում քաղկացած է կոտիս խոհանոցային իրերից և ոչ մեծ թվով սև, փայլեցված անոթներից։ Հառիճի կոտիս խո-

Հանոցային խեցեղենը հիմնականում պատրաստված է դեղին կավից և պարունակում է մեծ թվով խառնուրդներուն բանց հիմնականում քնորոշ են պատճիք անհավատորությունը և հատակային մասի հաստատումը, որն անոթներին տալիս է ասիմետրիկ մեջ: Այս խմբի անոթները հիմնականում ներկայացված են մեծ և փոքր քրեղաններով, որոնց շուրջերը կտրված են, և խոշոր կօռութներով, որոնց մեջերը նկատվում են Հայաստանի վաղ քրոնզեղարյան խեցեղենում:

Այս խեցեղենի գանգվածային թուրքիք և պատրաստման ոչ պրոֆեսիոնալ եղանակը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այն պատրաստել են ոչ միայն քրուտները, այլև, ինչպես Ուզերլիկթեփում, յուրաքանչյուր տառ տնտեսուհին: Վաղ քրոնզեղարյան խեցեղենին սերտորեն կապվում են աև, փայլեցված անոթները, որոնց պատրաստված են լավ մշակված կավից: Ի տարբերություն Խոհանոցային խեցեղենի, այս անոթները՝ պատրաստված են ավելի կատարելազործված տեխնիկական հնարքներով, չնայած սրանց մեջ էլ երեխն հանդիպում են ոչ հավասարաշափ հատակ և թրծում ունեցող անոթները: Մրանք հիմնականում աև, փայլեցված են, երբեմն էլ շագանակագույն և մուգ գորշ գույնի: Այս խեցեղենի զգալի մասը գարղարված է լցված զգիկներով, եռանկյունիներով, կետազարդ նախշերով լցված եռանկյունիներով՝ մի նախշածես, որ համախակի ենք հանդիպում վաղ քրոնզեղարյան խեցեղենի վրա, և հայտնի է Շենզավիթից, Գառնիից, Թոսի Ծոթերից:

Այդ են վկայում նաև անոթների մեջ՝ ցածր վիզը՝ շուրջի դուրս մկումը, իրանի զննագնությունը և այլն: Միաժմանակ անհրաժեշտ է ենթել, որ վերը նշված ավանդական մենարից բացի հանդես են զալիս մի շարք նոր հատկանիշներ՝ անոթների հարթ հատակը, բարձրացող ուսերը: Հանդես են զալիս նաև լայնացերան կմուճները: Սա քնորոշ է ոչ միայն Հատիմի խեցեղենին: Այս հանդիպում է նաև Լմաշենի միջն քրոնզեղարյան վաղ փուլի նյութերում, որտեղ Խոհանոցային խեցեղենը նյոււնական անփայլ է, իսկ նախշազարդման մեջ գերակշռում են թեք, սերմկաված զծերը: Դրանք թիւ են հանդիպում Հատիմում, իսկ Լմաշենի խեցեղենի մեջ թիւ են եռանկյունածես նախշեր ունեցողներ, որոնք լայնորեն տարածված էին Հատիմում:

Հետաքրքրություն է ներկայացնելում Գառնիի միջին քրոնզեղարյան խեցեղենը: Այստեղ լայնորեն տարածված են ներմկաված նախշամուխվները, որոնք լայնորեն առկա են վաղ քրոնզեղարյան խեցեղենի մեջ: Նման պատկերը նկատվում է նաև Քեթիում, ուր հայտնացերված կմուճները, զավաթները, անոթների կափարիչները, քրեղանները իրենց մկներով և նախշազարդով միջն քրոնզեղարյան ժամանակաշրջանի են և պարզորեն քացանայտում են վաղ քրոնզեղարյան խեցեղենի հետ կապեր, նմանվելով նույն Քեթիի, Դրվինի, Հատիմի, Շենզավիթի, Լմաշենի, Շրենքլուրի վաղ քրոնզեղարյան խեցեղենի մեջերն: Ելառի և Լոռի քերդի խեցեղենը նույնական անություն է գտնում վաղ քրոնզեղարյան խեցեղենին: Մակայն ամենաքննորոշ

խեցելենք այդ տեսակետից հայտնի է Ուզերլիկթեփեկ միջին քրոնզեղարյան շերտերից: Այստեղ նույնպես զերակցում է Կոտիս խոհանոցային խեցելենք՝ շուրջնը կտրված թասեր և կմումներ, կլոր իրանով և ցածր վզով կմումներ, որոնք ընորշ են կաղ քրոնզեղարյան մշակույթին: Այս հուշարձանի անոթների 2-րդ խումբը նույնպես ներկայացված է ներմրկված զարդով, սև, փայլեցված անոթներով: Պետք է նշել, որ Ուզերլիկթեփեկի խոհանոցային խեցելենք տիպերը ընորշ են այդ հնավայրի միջին քրոնզեղարյան խեցելենքներ:

Հայաստանի միջին քրոնզեղարյան խեցելենք մյուս խումբը կազմում է գուսազարդ խեցելենք: Այն ինչպես նշվեց էնելիթին նվիրված զլիում, Հայաստանում և Անդրկովկասում հանդիս է զալիս մ.թ.ա. 5-րդ հազարամյակի վերջում և 4-րդ հազարամյակի սկզբում և հայտնի է այնպիսի հուշարձաններից, ինչպիսիք են Թեղուտը Միլ Ղարաբաղյան հուշարձանները, Նախիջևանը, Շամիրամալթին և այլն, ուր այն կրում է միջազետքյան մըշակույթի ազդեցությունը՝ ստանալով որոշ նոր զծեր: Սակայն մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջին Հայկական քարձրավանդակի և Անդրկովկասի համար այն նոր մնույթ է ստանում՝ հանդիս զալով Այգևանում, Ֆրանովում, մասամբ Հառիթում, սև խեցելենքներում մինչև միջին քրոնզեղարդի վերջը:

Սուանձին հուշարձանների գուսազարդ խեցելենք քննարկելիս պարզ վում է, որ այն հանդիս է զալիս սև խեցելենքի հետ միասին, ինչպես վերջիններս, համոզիչ աղերսներ է ցուցաբերում կաղ քրոնզեղարյան խեցելենքի հետ: Այստեղ, Հառիթում սև, փայլեցված, գուսազարդ խոհանոցային խեցելենք հանդիպում է միջին քրոնզեղարյան ժամանակաշրջանում և իր մեջ ու գուսազարդումով որոշակի նմանություն է հանդիս քերում ցուու-արարայան մշակույթի հետ: Նույն պատկերը նկատվում է Կարմիր վանքի դամբարաններից հայտնաբերված խեցելենում, ուր սև, փայլեցված, կետազարդ և գուսազարդ խեցելենք միասին է հանդիս զալիս: Նման երես վույթ նկատվում է Քեթիում, Մուխանսաթթափայում, Գառնիում, Ուզերլիկթեփերում, Վերին Նավերում, Մեծամորում, Թուղթում և այլն՝ թուղթյան վաղ փուլի խեցելենք հիմնականում քացկացած է սև, փայլեցված խեցենոթներից, որոնք ունեն վարդագույյան պատճեն, ինչը որ վկայում է ինն ավանդական սովորությունների մասին: Այստեղ հանախակի են հանդիպում ցածր վիզ ունեցող, կլորավուն իրանով, անոթներ, որոնք զարդարված են ներմրկած շերոններով և ուռուցիկ ելուստներով: Առաջին անգամ հանդիպ պում են երկար վզով նոշոր մվաճիկ անոթներ, որոնք ընորշ են այդ մշակույթի զարգացած փուլին: Այս անոթները հիմնականում զարդարված են քարակ զծերով: Հարուստ դամբարաքը ուրներում գուսազարդ խեցելենք

ունի կարմիր ֆոն, սև ներկով պրված նտեղագարդեր: Ժաղկային դամբաւութուրներում գտնվել է զունազարդ խացաղանի այլ տեսակ, որտեղ անոթների մակերեսը ծածկված է քաց կրեմագույն անգորով, իսկ նախշազարդումը կատարված է գորշ-սև գույնով: Այս խեցեղենը հիմնականում զարդարված է շերոններով, ալիքամակ զծերով, շեղանկյուններով, օղակներով և շամփառամակներով: Որոշ հետազոտողներ այն համեմատում են իրանական և առաջավորասիրական շաց անգորապատ զունազարդ խեցեղենի հետ:

Թուղթյան վերջին փուլի խեցեղենն ուսումնասիրելիս առանձնանում են կիրովականի մեծ դամբարանային համալիրները: Դրանց կապը Թուղթյան մեծ դամբանաբլուրների հետ հնարավորությունը է տալիս հայ հետազոտողներին այդ մշակութային խումբը անվանել Թուղթ-կիրովականյան:

Կիրովականյան խեցեղեննը, ինչպես և մյուս հուշարձաններից հայտնաբերվածը, բաժանվում է երկու խմբի՝ սև, փայլեցված, գորշ աստառով և կարմիր մակերեսով, զունազարդ: Կիրովականից գտնված խոշոր, սև, փայլեցված սափորները զարդարված են երկրաշափական և տամանավոր նրբազի դրոշմանախշով: Անոթների մի մասը զարդարված է հորիզոնական ներմկված զծերով և ուռուցիկ շրջանակածն ելուստներով, իսկ վիզը՝ մեանդրով և գծիկներով լցված եռանկյունիներով: Այստեղ գտնված զունազարդ խոշոր սափորները զարդարված են քարակ զծերով ուղղահայաց շկրոններով, ուղղապատճեն զծերով և այլ նախշերով, իսկ ըրեղանները՝ հիմնականում լայն գոտիներով: Նման նախշազարդումնով անոթներ հայտառանում հայտնի են Էլմիածնից և Գառնիից: Մի շարք հուշարձաններում /Գառնի, Արծվաբերդ, Ելտա, Զուրբնաբաղ և այլն/ հանդիպում են նաև թոշնամն նախշեր:

Կարմիր բերդի խեցեղեննը, որը հայտնաբերվել է ղեղ անցյալ դարի վերջին, ներկայացգած է բազմաթիվ անկանթ, լայնացերան սափորներով, որոնց զարդարված են կարմիր Ֆոնի վրա սև գույնով պատկերված շիկանկյուններով, զույգ եռանկյունիներով, թեք, ցանցածն նախշով լցված ուղղանկյուններով, ուղղապատճեններով, զիգզազածն, ցախմատածն զարդերով; հնչան վերը նշան, հայտնաբերվել է նաև երկու անոթ՝ զարդարված գծիկային նախշով: Նման նախշերով զարդարված անոթներ հայտնի են Լմաշենից, Ուգերլիկթեփեհից, Մուխաննաթթեփեհից: Կարմիր բերդի տիպի հոյակառ զարդարված անոթներ հայտնաբերվել են Վերին Նավերից, Հառիթից, Լմաշենից, Էջմիածնից, Գառնիից: Այսպիսով, կարելի է ասել, որ կարմիրբերդյան միազգույն զունազարդ անոթները հիմնականում ընորոշ են Հայաստանին, որի սահմաններից դուրս, ինչպես ասացինք, հայտնի են միայն Ռուսաթագիւմ: Հետազոտողների կարծիքով դրանք վերաբերում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբին; սակայն Այգևանի պեղումները հարավորություն տվեցին հնացնել Կարմիր բերդի խեցեղենի հանդիս զալը մի թանի դարով և այն թվագրել մ.թ.ա. 24-21-րդ դ.դ.: Այս խեցեղենի ծառկուն շրջանը վերաբերում է մ.թ.ա. 20-18-րդ դ.դ., իսկ վերաբեր-

կային ժեռվ այն հարաւում է մինչև մ.թ.ա. 15-14-րդ դ.դ.: Հարկ է նշել, որ Մագեստի խցեղենը, կրկնելով կարմիրբերդյան խցեղենի զարդարութիվները, պարուտակով է այլ մշակութային տարրեր: Գունդել է մի խոշոր անոնի քեկոր, որի կարմիր մակերեսը զարդարված է կրեմազույն լայն գոտիով: Կրան թաց շազանակազույն գույնով արված են խոշոր ուլորապույտներ և ալիքած նախշեր: Այս եղանակը առկա է Ուզերլիկիթեփի, Հատիմի և Կարմիր վանքի խցանութների վրա: Նման նյութերի թնարկումը հնարավորություն է տալիս ենթարկելու, որ կարմիրբերդյան խցեղենը հանդիս է եկել դեռ քուռ-արագույան մշակույթում, իսկ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին տառորդում պարուն է իր ծաղկման ժամանակաշրջանը: Բացի կարմիր, միազույն գունազարդ խցեղենից, Հայաստանում ոչ մեծ թվով հանդիպում են նաև երկգույն գունազարդում ունեցող անոթներ: Դրանցից են նոր Բայազետում գտնված անոթները, ինչպես նաև հնդկական ընկյուղի Կեղմի տեսքի անոթները, որոնք, կրկնելով կարմիրբերդյան նախշամոտիկները, գունազարդվել են սև, սպիտակ ներկերով:

Խցեղենի վերջին տիպը, այսպես կոչված, Մեան-ուզերլիկյան տիպն է: Այս խմբի հիմնական մասը ներկայացված է գունազարդ անոթներով և սպիտակ ներկով դրվագազարդված խցեղենով, որոնց հետ, թնչան վերը նշվեց, հանդիս է զալիս կոպիտ խոհանոցային խցեղենը: Ուզերլիկի սև, փայլեցված խցեղեննը հարուստ զարդարված գոտիներով, ուղղունաշերերով, եռանկյունիներով և այլ նախշերով: Վաղ փուլում հանդիպում է նաև կամարած նախշը, որը տարածվում է նաև ուշ շրջանում: Վերին խցեղենի մեջ հանդիպում են ներզգված կիսաշրջաններով և շեղանկյունիներով զարդանախշեր: Այս շերտում սև, փայլեցված խցեղենի հետ հանդիս է զալիս գունազարդ խցեղենը: Գունազարդումը կատարվում էր հիմնականութ անոթների վերին մասում և պատկերում էր գուգահեռ ուղիղ, զիգզազածն զծեր, թեր զծերով լցված շեղանկյունիներ և այլն: Մեկ անգամ հանդիպել է սպիտակ անզորով արված գոտի, որի վրա սև ներկով նախշազարդ կա: Հատկապես հարուստ է հմաշենի դամբարաններում գտնված խցեղենը, որը, բացի նման նախշերից, զարդարված է փայլեցման եղանակով: Լճաշենի անոթների զազլի մասը հարդարված է նվազատիկայի պատկերներով: Մեկան-ուզերլիկյան տիպի գունազարդ խցեղենը հայտնի է մի քանի դամբարաններից, սպակյան ցերորշ է դրանցից մեկը, ուր գտնվել են մեծ թվով խոհանոցային անոթներ: Այստեղ գունազարդ խցեղենը ներկայացված է ոչ մեծ սպիտակներով, կմուծներով, խոր քրեղաններով, որոնք ունեն վառ կարմիր մակերես և սև ներկով կատարված գունազարդում: Ինչպես Ուզերլիկիթեփենում, այստեղ հանդիպում են շեղանկյունիներ, ուղիղ և ալիքած զծեր: Վերջիններս բացի Ուզերլիկիթեփից որոշակի գուգահեռներ՝ հինգ սպիտականի, նոր Բայազետի, Ելատի և այլ վայրերի խցեղենիներից հանդիս է հայ: Այս նյութի, ինչպես նույն այլ հուշարձուներից գտնված սպի

առկ ներկով գարդարված անոթների, հատկապես Հառիթից գանվածների թենարկումը հնարքվորություն է տալիս այն թվազրել մ.թ.ա. 18-17-րդ դ.դ.: Սա կառող ողակ է կարմիրեթրդյան և կիրովականյան խմբերի միջև: Այսպիսով, Հայաստանի և Անդրկովկասի մի շին ըրոնզեղարյան խեցեղենը, ի տարբերություն վաղ ըրոնզեղարյանի, պատրաստված է նոր տեխնոլոգիայով: Հանդես են գալիս զունազարդ սև, փայլեցված և սև, փայլեցված, սպիտակ ներկով խեցանոթներ: Այս անոթները հիմնականում պատրաստված են լավ հունցված կավից և պարունակում են մասր հատիկավոր խառնուրդներ: Դրանց մի մասը պատրաստված է ձեռորով, սակայն զունազարդ և բարակ պատճեր ունեցող սև, փայլեցված խեցեղենի մի մասը պատրաստված է պատվող անիվի վրա: Կան կարծիքներ, որ անոթներին տարիին մասը պիտի պատրաստվել է ձեռորով, իսկ վերին մասը՝ պատվող անիվի վրա: Բոլոր սև անոթները չափազարդվում էին. խոնավ վիճակում: Դրանց փայլեցումը կատարվում էր բարձր ջերմաստիճան ունեցող ծինցման եղանակով, որից հետո անոթների մակերեսը ծածկվում էր մարդու՝ փայլեցնելու համար: Ըստ երեսւթիւն թրծումից և փայլեցումից հետո չափազարդվում էին սպիտակ ներկով և ցածր ջերմաստիճանում ամրացվում: Գունազարդ անոթներն իրենց պատրաստման տեխնիկայով չեին տարբերվում սև փայլեցվածից, սպակայն որոշակի տարբերություն կար նախազարդման տեխնիկայում: Այս անոթները չորացնելուց հետո ծածկվում էին կարմիր կամ վարդագույն անգողորով, և թրծումից, փայլեցումից հետո նրանց մակերեսը վրձինով զարդարվում էր վերը նշված նախաներով, որը նույնական չորացնելուց հետո ենթարկվում էր թույլ թրծման՝ ներկը ամրացնելու նպատակով: Եթե սև, փայլեցված խեցեղենը պատրաստելիս ըրուները կարող եին օգնվել տարբեր զրոշմներից, առա զունազարդ խեցեղենի զարդումը կատարվում էր վրձինով, և պահանջվում էր որոշակի ունակություն և նկարչի պրոֆեսիոնալ հմտություն:

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՌՈՐԻԹՅՈՒՆԸ: Հայկական բարձրագանդակի ցեղային միաւթյունների սոցիալական կյանքը միշին ըրոնզեղարյան ժամանակաշրջանում ընորոշվում է Կարուկ փոփոխություններով: Դրան մի կողմից նաև տում է տնտեսության աճը, որը անում էր առանձին ցեղերի հարստացմանը՝ հանգեցնելով ընդհարումների, մյուս կողմից՝ հարավային և հարավարևելյան ահմաններում պրեղեցված հին արևելյան պատությունները: Այսպիսս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսին կենտրոնական Փոքր Ասիայում ստեղծվում է Ենթական պետությունը՝ Խառտուշաշ մայրաքաղաքով, Էարապում՝ Միանհիի թագավորությունը, որի ազդեցությունը հասնում է Ֆիզրիս գետի ակունքները, Կերին նքրատ:

Հին արևելյան քաղաքակրթությունների մասին հառկապես խեթական գրավոր աղբյուրները տալիս են Կցկոռւր, թայց հնատքքիր ավյալներ։ Նշանում է, որ Հայկական քարծրավանդակում այդ ժամանակ տաշացել էին խոշոր ցեղային միություններ, և արվում են դրանց մոռավոր սահմանները։ Սուածին տվյալները վերաբերում են մ.թ.ա. 17-16-րդ դ.դ., դրանք ընտկրա նացար, Վկայում են էթնիկ այդ միավորների ավելի վաղ գոյության մասին։

Այսպես, իին խեթական աղբյուրներում հիշատակվում է Տզոր և անկան Ալզի թագավորությունը, որն ունեցել է հարուստ պղնձահանքեր։ Հայ աղբյուրների Ալզին տեղադրված է Եղել Տիգրիս վատկների և Արածանի հովտի շրջանում։ Միտանի թագավորության գոյության ժամանակ այն եղել է Նրա հյուսիսային հարևանը և իր գոյությունը պահպանել է մինչև մ.թ.ա. 18-րդ դ.։

Ոչ պակաս հնագործիր տեղեկություններ կան Հայաստ երկրի Մասին, որը տեղադրված է Եղել Սփրատի վերին հոսանքի և ճորոխի ավազաններում։ Ժամանակակից Երզնկայի և Էրզումի շրջաններում։ Իր ծաղկման շրջանում Նրա հարավային սահմանները հասել են մինչև Տիգրիսի վերին հոսանքները։ Հարեան է Եղել Ալզի։ Իսկ հյուսիսում՝ մինչև արմելյան Պոնտական լեռները։ Չնայած այն հանգամանքին, որ խատական աղբյուրները Հայաստայի մասին տեղեկություններ են տալիս մ.թ.ա. 14-րդ դ. ուշ քրոնզեղադի շրջանից և կըննարկվեն այդ հատվածում, այնուամենայնիվ, խեթական թագավոր Խատոռուսիլիս Յ-րդի այսպես կոչված ինքնակենսագրությունում /մ.թ.ա. 1275-1250 թ.թ./ հիշատակվում է, որ մ.թ.ա. 16-15-րդ դ.դ. խետական թագավորության հարևան ցեղերը, օգտվելով Նրանց թուլացումից, Ներխուժել են խետական տարածքներուն։ Այդ ցեղերի մեջ է հիշատակվում են հառւա երկրի մարդիկ, որոնք, անցնելով Սփրատի ոչ ափը, գրավում են Թեգարման։ Կեր Հինս Նույնացվում է Քիքլիական Թոգարմայի և ավելի ուշ Հայկական Թորգոմի տան հետ։ Չնայած այս կցկոռւր տեղեկություններին, կարծիք է ենթադրել, որ Հայաստանում խեթական աղբյուրների Վկայությամբ մ.թ.ա. 16-րդ դարից հանդես են գալիս ծեսվորված թագավորություններ, որոնց կազմավորումը կատարվել է ավելի վաղ։

Ի տարբերություն հարավային և հարավարևմտյան հառվածներից, Հայկական քարծրավանդակի հյուսիսային շրջանները չեն հիշատակվում իին արևելյան գրավոր աղբյուրներով, սակայն, ըստ երեւութիւն, այստեղ եօ գոյություն ունեին խաշոր ցեղային միություններ, ուր գերեշեղող դիրք էին գրավում Նրանց ցեղատաները, որոնց թաղումները գրևվում են Թոեղթի, Լմաշենի, Կիրովականի, Թարշամերի և այլ Վայրերի խոշոր դամբանարշուրներում։ Համեմատաբար ավելի փոքր, թայց հարուստ դամբաններում թաղվում էին Ներկեղային արիանկրտահայի Ներկայացուցիչները։

Յեղային պվտպանու ամող տնտեսական պահանջը էր հերթին ստեղծում էր հզոր ստեղծագործական լիցեր և քարենապատ արհետների գարզացման համար: Մյուս կողմից խոշոր դամբարանների հանդիս գտվու, որոնց կառուցումը պահանջում էր աշխատումի հզոր ներդրում, թաղման քարդ ենաց և ուղեկցող հարուստ նյութը վկայում են Հայկական քարձրավանդակում ցեղային հասարակության մեջ առաջնային խոր գույքային անհավասարության մասին: Եթե Հայկական քարձրավանդակի հյուսիսային շրջանները հնագիտական տեսակետից համեմատաբար լավ են ուսումնասիրված, առաջ հարավային և հարավամերյան շրջանները, որոնք հսկայական նշանակություն ունեն հայ ժողովրդի էթնոգենեզի պարզաբանման հարցում, հնագիտական տեսակետից համարյա ուսումնասիրված չեն: Տակայս, ինչպես նշվեց, ին արևելյան աղբյուրները ստույգ վկայում են Հայաստանի, Աւգիի, Նահրիի հանդիս գտնու մասին: Այդ միությունների հարկանությունը չին Արևելյան պետությունների հետ, հատկապես խեթական, հանգեցնում էր նրան, որ այսաեղ հանդիս են գալիս նախադինաստիական դարաշրջանի հասարակական հարաբերությունները: Այս հանգմանները քերում են հզոր ցեղային արխոտնությայի հանդիս գտնուն, որի մեջըն նույնական պետք է կուտակված լիներ հսկայական հարստություն: Ծայած Հայկական քարձրավանդակի ցեղային միությունների հասարակական գարզացման արոցեած փոքրինչ եւ եր մնում իրենց հարկանությունը, այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ նրանցից ենաւ չեր արքերվում:

Հայկական քարձրավանդակում, ինչպես և հարկան երկրներում, հասարակության հիմքը կազմում էին ազատ համայնքականները, որոնք զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ և արհետներով՝ խիստ արքենքությամբ ցեղային պվտպանուց կախման մեջ ընկած մարդկանցից: Հենց այս ազատ համայնքները /զյուղ կամ „քաղաքք“/, որոնք ունեին տեղական ինքնապարություն և ինչ-որ պարտավորություններ, կազմում էին հիմնական քանչություններ: Ըստ երկույթին, օրմերի և զինվորների վերին խավը ներկայացնում էր հասարակության այն վերնախավը, որը ընտրում էր Հայաստանի „Քաղաքորին“, Հետարքի է նաև այն հանգամանքը, որ Հայաստանի „Քաղաքորին“, հավասար կարող էր համարվել ժողովրդական ժողովը: Այս փաստերը վկայում են, որ Հայկական քարձրավանդակում քուրոր ցեղերը կանգնած եին վաղ դինաստիական տասինանի վրա, և խոշոր ցեղային միությունների առաջնորդները ընտրվում եին ժողովրդական ժողովի կողմից՝ սահմանված գալիք արտոնություններ և իրավունքներ:

Համայնքի պատերազմները հզոր հարեան պետությունների դեմ նպաստում էին ոչ միայն հարստության ծեռցերմանը, այլև ստրուկների ծեռցերման աղբյուր էին: Այս հանգամանքը հանգեցնում էր նրան, որ Հայկական քարձրավանդակի առհմացեղային հասարակության ընթացքում առաջ-

Առևմ էր տնային ստրկության ինստիտուտը: Ելնելով ինթեկտն աղքյուր-ներից, իմանում ենք, որ ոչ բոլոր գերիներն են դառնում ստրուկներ: Նրանց մի մասին տեղափորում են ազատ հողերի վրա, և նորկ վերցնում անզամ ընդորում քանակի կազմում: Մյուսները դառնում են արծունիքի և տաճարի ստրուկներ, մի մասը՝ տնային ծառաներ: Հանդիս են զալիս նույն անձնական ստրուկներ, որոնք իրենց տերերի սեփականությունն են: Ինարկե, շի կարելի ինթեկտն ստրկական ինստիտուտը մեխանիկորեն փոխադրել Հայկական քարձրավանդակի ցեղերի հասարակության վրա: Մյուս-ամենայնիվ խոշոր դամբանաբարություններում հայտնաբերված ստրուկների թաղումները վկայում են, որ այդ ժամանակ Հայկական քարձրավանդակում եղել է ստրկական հասարակություն, որն, բայց երեսույթին, պար է նմանվեր հարկան երկրներում տիրողին: Միաժամանակ հանդիս են զալիս զինվորների, քրմերի, քարձրաստիճան ծառայողների խավերը: Ծղամարդը հասարակության մեջ զբաղեցնում էր գերիշնող դեր և մասամբ զպավում տնօսական գործունենություններ, որը քերում էր ծառանզական իրավունքի խորացման և դասակարգային հարցերությունների հանդիս զալուն:

#### ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս.Այիրյան, Հնագիտական նոր հայտնաբերում Երևանի տերիտորիա-յում, ՊԲՀ, 1969, նո. 3 4

Գ.Ե.Արեցյան, Հ.Ե.Միմոնյան, Գ.Մ.Սարգսյան, Հայագիտական կենտրոնի 1976 թվականի դաշտային հնագիտական աշխատանքները, ԲԵՀ ՀԳ Երևան, 2977, նո. 3, էջ 266-274:

Լ.Ա.Բարսեղյան, նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արգեստի պատմության վերացերյալ, ՊԲՀ, 1966, նո. 3:

Ի.Մ.Դյակոնով, Հայաստ-Ազգի ցեղային միությունը և ինթեկտն թագավորությունը. Հայ ժողովրդի պատմություն հ. 1-ին, Երևան, 1971:

Ս.Ա.Եսայան, Գ.Հ.Միքյելյան, Քրոնզեղարյան գունագորդ ինցիդենտի նորանայ նմուշները, ՊԲՀ, 1971 նո. 2:

Ա.Տ.Երեմյան, Հայաստ-Ազգերի տեղորոշումը, Եթնիկական կազմը և լեզուն, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1-ին, Երևան, 1971:

Է.Կ.Խանգաղյան, Գառնի 4-րդ, Երևան, 1967:

Հ.Ա.Սարտիրոսյան, Հայաստան միջին բրոնզի դար ժամանակաշրջանը. Հայ. ժող. պատմություն հ. 1-ին, 1971:

- Կ.Ա.Մկրտչյան, Խանզադյան Է.Վ., Ե.Պարստամյան, Մեծամոր, Երևան, 1978:
- Հ.Օ.Մնացականյան, Լճաշենի Նյութական մշակույթի հիմնական փուլերը, ԳՐՀ, 1965, 2
- Հ.Օ.Միմոնյան, Հնագիտության պիտանեազգութական լաբորատորիայի 1986 թ. դաշտային աշխատանքները, Երևանի համալսարան, Երևան, 1987, նո. 2 էջ 21-29.
- Ա.Ա.Քալանթարյան, Ժ.Դ.Քալարյան, Սևանի ավագանի եզրակի հնագիտական հայտնագործության մասին, Լրացեր, 1969, նո. 4:
- Ե.Ե.Արքան. Մալօազիմական ձևեր արագական բարձրագույն մասերում. Տարածական մասերում. Արագական բարձրագույն մասերում. Երևան, 1973, թ. 4.
- Գ.Ե.Արքան. Ինդոեվրոպեցիան մասերում. Արագական բարձրագույն մասերում. Երևան, 1973, թ. 4.
- Գ.Ե.Արքան, Վ.Յ.Օղանեսյան, Փ.Մ.Մուրադյան, Ա.Վ.Ավետիսյան, Լ.Ա.Պետրոսյան. Կոնց մասերում. Արագական բարձրագույն մասերում. Երևան, 1990, թ. I.
- Ս.Ա.Եսայան. Օружие и военное дело древней Армении. Ереван, 1966.
- Ս.Ա.Եսայան. Ереван (Археологический очерк), Ереван, 1969.
- Ս.Ա.Եսայան. Скульптура древней Армении. Ереван, 1980.
- Ս.Ա.Եսայան. Древняя культура племен Северо-восточной Армении. Ереван, 1976.
- Ս.Ա.Եսայան, Ա.Ի.Պագնյան. Археологические находки в Зангезуре (Арм. ССР), СА, 1962, № 3.
- Կ.Խ.Կոշիարեա. Տազակենский могильник. СА, 1960, № I.
- Կ.Խ.Կոշիարեա. Археологические работы 1954 г. в окрестностях села Ходжали. МИА, 67, 1967.
- Կ.Խ.Կոշիարեա. К вопросу о социальной интерпретации некоторых погребений Южного Кавказа. КСИА, вып. 134, 1973.
- Կ.Խ.Կոշիարեա. Ходжалинский могильник. ИФ, 1967, № 2.
- Կ.Խ.Կոշիարեա. К вопросу о развитии ремесел на Южном Кавказе, в древности. ИФ, 1974, № 2.
- Կ.Խ.Կոշիարեա. Раскопки поселения Узерлик-тепе около Агдама. МИА, 67, 1959.
- Բ.Ա.Կուֆտին. Археологические раскопки в Триалети. Тбилиси. 1941
- Ա.Ա.Մարտirosյան. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван 1964.

- С.К.Междумян. Палеофауна эпох энеолита, бронзы и железа на территории Армении. Ереван, 1972.
- А.О.Мнацаканян. О двухцветной керамике Лчамена. Вестник обн. наук АН АрмССР, 1957, № 5.
- Б.Б.Пиотровский. Археология Закавказья. Л., 1949.
- А.Е.Симонян. Могильник эпохи бронзы Верин Навер. КСИАМ вып. 176. 1983.
- А.Е.Симонян. Кармирбердская культура по материалам периода средней бронзы (опыт 'выделения') в кн.: Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1982.
- А.Е.Симонян. Два погребения эпохи средней бронзы могильника Верин Навер, СА, 1984, № 3, с. I22-I35.
- А.Е.Симонян. Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении (по данным погребения Верин Навер). ИС, № 1, 1990, с. I88-208.
- Т.С.Хачатрян. Древняя культура Мирака. Ереван, 1975.

## ՀԱՅՍՏԱՆԻ ՈՒԾ ԲԲՈՒՋԻ ԴԱՐՄԱՇԽԱՆՈՒԹ

Պար. 1. Ուշ բրոնզեղարի մշակույթը

Ուշ բրոնզի դարաշրջանը, Հայկական լեռնաշխարհի նյութական մշակույթի գարգացման տոռւմով, բացադրի տեղ է գքաղեցնում: Միջին բրոնզի դարաշրջանում նրա տարածքը ըսակեցնող ցեղերի տնտեսական և հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները անհրաժեշտ նախադրյալներ սահեծեցին տնտեսության, մասնավորապես, արհեստների որակապես նոր, թորիչած վերելոի համար:

Քաղաքական կյանքում առաջին անգամ նկատվում են քազմաքանակ խուրացեցու և հնեվրոպակեցու /այդ թվում նաև հայկական/ էթնոսների կենտրոնացում ընդում ասորեստանյան նվաճողների /մանրամասն տես Վանի թագավորությանը նվիրված բաժնում/: Ցնտեսության հիմնական մյուղերը՝ երկրագործությունն ու անասնապահությունը, զարգացման շատ ավելի բարձր աստիճանի են հասնում: Դեռևս վաղերկրագործության ժամանակներից անտեսության հիմնական մյուղ հանդիսացող երկրագործությունը, անկում ապրելով միջին բրոնզեղարում, նորից սկսում է զարգանալ շատ բարձր տեմպերով, ընդ որում ընդգրկելով ոչ միայն դաշտավայրերը, այլև նախալեռնային և լեռնային շրջանները: Անապառնատումների հաշվին մեծ շափով ընդլայնվում էին ցանքատարածությունները, իսկ դաշտավայրերը՝ ոռոգման ցանցի ընդարձակման՝ ջրանցքների ու ջրամբարների կառուցման շնորհիվ: Բացի հացանատիկային կուլտուրաների ցանքատարածությունների ընդլայնումից, զարգանում էին նաև այգեգործությունը, խաղողագործությունը, գինեգործությունը և այլն:

Մեծ զարգացման է հասնում անասնապահությունը, հասնելով իր քանակական զարգացման ծայրակետին, քանի որ անասնագլխի հետագա ամբ սահմանափակված էր ցանքատարածությունների և երկրագործական այլ հողամասերի մեծացմամբ և արոտավայրերի պոտենցիալով: Կերպնականապես հաստիվում է հեռացնա անասնապահությունը /շատ մոտ այն մկին, որ տիրապետող է նաև մեր օրերում/: Բարձր զարգացման են հասնում նաև արհեստները, կառված բրոնզի արտադրության զարգացման հետ: Մտեղծվում են նսկայական քանակությամբ բրոնզի իրեր, որոնց արտադրության զաղտնիքները սկզբանավորվում են դեռևս միջին բրոնզի դարաշրջանից: Մետաղամշակման կառաջնագործումներ նպաստում էր միջնադարյան փոխանակության լայն զարգումը:

Պղնձի մշակման ընզագուշում աեղ գոտի որակական փոփոխությունների լավագույն վկայությունն է քազմատեսակ համաձուլվածքների տարերւմ: Ընդ որում պետք է ենթադրել, որ արտադրական կենտրոնների

վարագաները խնամքով թաքցնում էին իրենց արհեստների գաղանիքները: Լայն տարածում է ստանում մոմե կաղապարներով ձուլումը, դրվագումը, գրուգումը, ավելի սակագ՝ փայտքի, շաղախով, տարբեր գույնի և կիսաթանկարժեք թարերով ազուցելը: և այլն: Ընդունված էր նաև տարբեր իրեր արծաթյա և ոսկյա թիթեղներով պատելը: Ուշ ըրոնզի դարաշը ջանի կարևորագույն նվաճումներից է երկաթի օգտագործման տաշին փորձը, որը մի օճանի հարյուրամյակ անց հանգեցրեց այս էժան և ամուր մետաղ լայնավալ օգտագործմանը:

Դամշարանների այդ խմբից հայտնաքերվել է երեք սուրբ: Շրջանակավոր դաստակով սրբը հետ մեկտեղ հանդես են գալիս անդրկովկասյան տիպի միաձույլ սրբը: Մրանց ուսեն հարուստ գարդարված գլխիկներով խողովակամն երախակալեր և սուրբ կամ կլորացող երկար շեղերը: Շեղերը զարդարված են ակոսներով, կիսալուսիններով, պարույրներով և կետազարդով: Երկու սրբը շեղերից զարդարված են գլաւրվող օծի պատկերներով: Այս խումբը վերջերս համարվեց Մեղրամորի գտածոյով: Խողովակամն երախակալով, լայն շեղը, կլորացող կամ կարված ծայրով սրբը գոյատեսում են մինչև մ.թ.ա. 2-րդ հազ. վերջը և հայտնի են Կիրովականից, Սևանից, Գոլոգինոյից, Ռեդկին լազերից, Արդիից, Այգեմորից, Կեղաքեկից, Խանլարից, Առաջամորից և այլն: Ընդ որում կլորացող և սուրբ ծայրերով սրբը հետ հանդիպում են նաև շեղերի ներքեւ մասը կորպած օրինակներ: Այս տիպի, մի փոքր այլ տարբերակի սրբը հանդիպում են Մամթավորոյւմ և Կախեթիայում:

Բացի սրբից, Արթիկում գտնվել են մեծ քանակությամբ միաձույլ խողովակակոթան նիզակներ: Այս նիզակները երկու տեսակի են: Առաջինը ունի հարթ խողովակամն կոթա՞ն, իսկ երկրորդի կոթանների վրա կան ուռուցիկ, կլոր ելուստներ: Դրանց ըուրոի շեղերից փետրածն են, կլորացողը. կամ քարձր ուսերով: Նման նիզակներ գտնվել են նոյեմբերյանում, Ռեդկին լազերում և Նորաշենում /Շամշադինի շրջան/, Կետաքեկում, Առաջամորում: Հատկապես մեծ քանակությամբ նման նիզակներ հայտնի են Վրաստանում /Մամթավրա, Բեշտաշեն, Կախեթի/:

Մըթիկի ԱՀ 433 դամշարանից գտնվել է ասիմետրիկ սակր, որը լրացնում է Արթիկի ուշ քրոնզի երկրորդ փուլի գեների տեսակները և Երև-

Նուև ու Ախթալայում գտնվածների հետ վկայում է, որ նման սակրերը օգտագործվել են մինչև մ.թ.ա. 2-րդ հազ. վերջը:

Արթիկի զենքի տեսակների նվույտ պետք է հիշատակել երկու գլուխ գուրգերը և ըրուղից, վանականից և ոսկրից պատրաստված նետառլաբները:

Արթիկի դամբարանիների այս խմբում աշխատանքային գործիքները են մետաղից և քարից պատրաստված, քննարկվող դարաշրջանին ընորոշ ոչ մեծ խմբով: Այստեղ առանձնահատուկ տեղ է գրավում

285 դամբարանի ժուլավործ վարպետի գործիքների համալիրը: Այն քաղաքացի է ըրոնզի դողից և թիթեղից պատրաստված ապարանջաններից, մանր կոճակներից և տուժակերտ կուռքի մողելներից: Սովորել ընորոշ են մասնագիտական գործիքները՝ կավե հալոցները, շերտիները; Մրանք ըուլոր շատ լավ թիթեղից են, մի մասն էլ ներսի կողմից նաքեր ունեն՝ մետաղի հետքերով: Այս համալիրը լրացվում է բազալտ զրավածեն, հումքը մաքրելու համար նախատեսված հավանովով: Երկրագործական գործիքները ներկայացված են ըրոնզի մանղաղների շենքներով՝ պատրաստված ըրոնզի քարակ թիթեղներից, որոնց ծայրերին երկու անգք է արգած: Շիրակում նրան մանղաղներ հայտնի են Անիկց, Լենինականից և Քեթիկց, որոնք տերսություն են համոյի, Աշտարակի, Կիրովականի մուշչների հետ: Գտնվել են նաև այլ նշանակության իրեր՝ փոքրիկ տաշուրազ, դուր, որոնք օգտագործվել են փայտյա ներդիրները, տարեր զենքերի ըունակները, կառերի կողապատերը և այլ մասերը, կանույթը ազուցելու համար: Ոչ մեծ խումբ են կազմում ջուլհակագրծության և կաշեգործության հետ կապված գործիքները՝ ոսկը իւիկի զւուխները, հելունները, ասեղները, քարե կոկչները և այլն:

Գտնվել են մեծ թանակությամբ տարեր զարդեր: Այս իրերի մեջ մեծ տեղ են զրայիտու շրոնզի լարից, դողից և թիթեղից պատրաստված ապարանջանները: Հատկապես հետաքրքիր են վերջինները՝ զարդարված հարուստ եղանակիշով և այլ զարդաներով, որոնք համախ հանդիպում են նաև ուշ ըրոնզի դարաշրջանի սրերի և դաշույնների վրա: Նման ապարանջաններ գտնվել են Ճարիմում, Բայազետում, Դիլիջանում, Այումում, և այլն: Գտնվել են նաև մեծ թանակությամբ օճազար հերազարդեր միջնալարով, ըրոնզի նակատակալներ: Օտակառակալների թիւնը առանձնական է՝ 270 դամբարանից գտնված նմուշը՝ զարդարված ծծի, այծի, կեռախաչի և պարույրի պատերներով, որոնք կապվում են երկնային պաշտամունքի հետ: Զարդերի մեջ մեծ խումբ են կազմում շաբաղները, որոնց մի մասը պահպանում է ուշ ըրոնզի 1-ին փուլի պանդական ժևերը: Պահպանվում են վերին ծայրը հաստացող կամ ելուստներով զարդարված նմուշներով: Բնակու վող դարաշրջանում հանդես են գալիս գլխարկածն կամ գնդածն գլխիկներով,

օղակացն ելուստներով, հատիկազարդ և այլ շքասեղներ: Գտնվել են մեծ քանակությամբ կախիկներ՝ ներկայացված թոշունների տեսքով, գեղածն, տանձածն, շեղանկյունածն օրինակներով: Հանդիպում են նաև ըրոնզից և մտնուկից պատրաստված թիթեղի սկավառակների տեսքով կախիկներ, որոնցից կափում էին թոշունների արձանիկներ և այլն: Արանց մի մասը կատարել է հմայիլի դեր: Այստեղ կարելի է հիշառեկել գորտի արձանիկով կախիկը, որը աղերսկում է Լաշենի գտածոնների հետ: Կախիկների մի մասը զարդարված է շրջանի մեջ արված պարույրներով, որը խորհրդանշում է արևի շարժումը:

Մեծ խումբ են կազմում ըրոնզե կոճակները, որոնց մի մասը կարող է կատարած լինել նաև գրահակոմակի դեր: Կոճակները տարբեր չափերի են, սկսած շատ մանրերից մինչև մի քանի սմ տրամագիծ ունեցողները: Արանց նշանակալի մասը զարդարված է խորադիր շեղանկյուններով, խաչերով, ուղղանկյուններով, եռանկյունիներով, որոնք իրենք հերթին ազուցված են բազմատեսակ քարերով և պարույրածն գալարներով: Կոճակների մի մասը երեսպատված է արձաթյա թիթեղով: Նման կոճակները գտնվել են Լաշենում, Սևանում, Դիլիջանում, Շամշադիխում, Կարմիր-քերդում, Ցոլորսում և այլն:

Արթիկի դամբարանաղաշտում գտնված զարդերի մեջ տապել տարածված են ըրոնզից, սարդիոնից, ազաթից, մածուկից, ծարիքից, ապակուց և լեռնային ջյուրեղից պատրաստված ուլուսների նմուշները: Այս ուլուսները առանձնանում են ծերելի բազմազանությամբ, որոնց մեջ գերակշռող են գեղածն, տակոտածն, խողափակածն օրինակները: Ընդ որում քարի ուլուսները հրաշալի հղկված են: Արթիկի դամբարանաղաշտի բուլոր դամբարաններին բնորոշ գտածոններից քացի գտնվել են նաև ոչ մեծ խումբ կազմող այլ իրեր: Այս խմբի մեջ է մտնում քարայծի հրաշալի արձանիկը, որը հարյուրեցված է խարսխածն պատվանդանին և հիշեցնում է Լաշենի օրինակ՝ նրանից տարբերվելով մեծ արտահայտչականությամբ և հարդարանքի որակով: Կենդանու վիճը և իրանը զարդարված են սեպածն փոսիկներով, նշանն զեերով, վրան թեր զծիկներ արված ուլիկեծային զծերով: Ստորին ծնոտին զողված է ոչ մեծ օդ: Այս խմբի վեց են մտնում երկու հրաշալի շերեփները, ըրոնզե կաթսան և թասը: Ենթեփներից մեկն ունի ուռուցիկ իրան և մկան, սնամեջ բուսակ, որը զարդարված է սեպածն փոսիկներով և վազող պարույրներով: Մյուս շերեփն ունի ավելի փոքր չափեր, շայց շատ երկար բուսակ, որը ծայրամասում վերածվում է երկնյուղ մկան կեռիկների: Հետաքրքիր են նաև ըրոնզե անոթները: Այսպէս, ըրոնզե կաթսան ունի ծփածն իրան և կտրված կողապատ, որին ամրացված են կախելու համար նախատեսված կաթերը: Ինչ վերաբերում է թասին, առա-

այն պատրաստված է ամեռողջական լիբերալից և ուսի կիսազնդածն իրան:


Սրբիկի խեցանոթները ներկայացված են տարբեր անոթների մեծ խմբերով, որոնց մի մասը, պահանջելով ուշ բրոնզի վաղ փուլի խեցենենի ձեփերը, մի փոքր տարբերվում է վերը՝ նշվածներից: Փայլանախշով պրված զարդածները կափարված են անիռույն, անոթները կորցնում են մակերեսի սկ փայլի նախկին որակը:

Մյու փուլի խեցանոթների առավել ընորոշ զարդամոտիվներն են հորիզոնական, գիլզազգ, ալիքանախշ՝ գծազպրղերը, դաշազարդ եռանկյունիները, համակենտրոն շրջանները, եղևանախաչը! և այլն: Սկ, մայլեցրած խեցենենի կողդին մեծ խումբ է կազմում կոտահար, խորհունցային խեցենենը: Սկ, մայլեցրեծ խեցանոթները ներկայացված են անկանթ, միականթ, երկկանթ սափորներով և տարբեր ձևերի քրեղաններով: Անկանթ սահորների մեջ մեծ խումբ են թիկազմում ուսուցիկ իրանով, ոչ արձր վզով և զուրս մկված շուրբով անոթները: Մրանց հիմնականում նրաբանցի են և հավասարաշահի նրծված:

Հանդիպում են նաև ուսուցիկ իրանով, թարձր վզով և համեմտաքար նեղ հատակով անկանթ սափորներ: Մրանց կողդին առաջին անգամ սկսում են հանդիս գալ միականթ սափորները, որոնց աղեղնածն կանթերը շուրբից, կամ վրգի կենտրոնից իջնում են դեպի անոթի ուսուբ: ոչ մեծ խումբ են կազմում երկանթ անոթները:

Մեծ քանակությամբ հանդիպող քրեղանները բաժանվում են մի թանի տիպների՝ ուսուցիկ իրանով, նեղ հատակով խոր քրեղաններ, որոնց շուրբ կամ դուրս են մկված, կամ ուղիղ կտրված են և ռուսացիկ ուսեղով, նեղ հատակով, իրանից ուսին անցման հատվածում շեշտված կողերով քրեղաններ և այլն: Սովորել բազմաքանակ են միջին շափերի, թարձրացող ուսերով և մկված շուրբերով քրեղանները: Հանդիպում են նաև օդականներ ըռնակներով քրեղանները: Այս անոթների զարդամոտիվները, բացի վերը նբշ-ված ընդհանուր մոտիվներից, այս կամ այն անոթի վրա տարբեր են: Այսպես, որոշ անոթների հատակները զարդարված են համակենտրոն շրջաններով, որը հանդիպում է նաև առանձին անոթների ուսերին: Մեծ տեղ են զարեցնում առածն զարդը, ցանցաղաշտը, փայլանախշ շերտերը և այլն: Անոթների ձևերի և զարդամոտիվների յանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սրբիկի քննարկվող ժամանականավածի խեցենենը, պահանջելով հնագույն ձևերը, նոր գծեր և մեռք քերպում, որը գոյատեսվում է մինչև վաղ երկաթի դարաշրջանը, վկայելով Հայաստանի նյութական մշակույթի ավանդականության մասին:

Կոպիտ խոհանոցային խեցենենը չի տանձնանում ձևերի ու զարդամոտիվների քազմազանությամբ: Միատիա կազե սպասը ներկայացված է խոշոր, մզգած իրանով, լայնաբերան, երբեմն նաև ուսուցիկ իրանով և թարձրացող ուսերով անոթներով: Հանդիպում են մեծ բանակությամբ անկանթ,



Աղ. 56. Ուշ քրոնակի դարաշրջանի խեցեղեն Արքհական:

երքեմն ցածրադիր իրանով և տարբեր քարձրության վագերով կօռւները: Կոպիտիստի խեցեղենի զարդամտիվների ներկայացված են հիմնականում տարբեր ժերի պարանայուս, խորադիր գոտիներով, զիգզագներով և ավելի հազար՝ ալիքածն և նախշերով: Առավել տարածված է եղունգազարդն ու հատիկազարդը: Հանդիպում են նաև ուռուցիկ ելուստներով զարդարված անոթներ, որ ընորոշ է մ.թ.ա. 1-ին հազ.սկզբի կավանոթներին:

Առողջ բնորդի դաշտավայրեցք: Լոռի եերդի ուշ ըրունակի դարաշրջանի երկրորդ փուլը ներկայացված է երկու դամբարաններով / N<sup>o</sup>8 և 9/: Առաջինը ոչ մեծ, կրոմ լեխով շրջագծված հիմնարդային դամբանախուց է՝ ծածակված սալաբարերով: Մյստեղ մետաղյա իրեր և զարդեր չկային: Գլուխել են 8 կավանոթներ, խոշոր և մասր եղջերավոր անտուռների ոսկորներ, ինչպես նաև հանգուցյադի դիմակագծված աճյունը: Երկրորդը 2 մ քարձրությամբ քարանողային թմբով դամբանախուց ծածակված էր խոշոր սալաբարերով, որոնք հենվել են գերանային կառուցվածքի վրա: Կերչի նըս ներսից պատվել է կտորով: Սալաբարերի ծանրության առկ փոած գերանները և քարերը փլւել-լցվել են խուցք: Չնայած այն քանին, որ դամբարանը մինչև քանդվելը հնում կողուավել է, որոշ իրեր պահպանվել են: Մյս դամբարանի մետաղյա իրերն ունեն որոշ արխայիկ ձևեր, բայց խեցանոթները ընորոշ են ուշ ըրունակի զար 2-րդ փուլին: Մյստեղ գտնվել են ըրունզի կանույթի կամ կառքի զարդ հանդիսացող եղջյուրածկ իրեր և ըրունզից ցլազլուխ հրաշագեղ արձանիկ, որը նույնանուած հանդիսացել է կինույթի մաս, ըրունզի լույսների արձանիկներ, զանզակներ՝ զարդարված նոանկյունածկ կտրվածքներով, տարբեր տեսակի կոմակներ, որոնց մի մասը կարգել էր զրահաշապիկին, կլոր վահանիկներ, զամեր և այլն: Մյս քազմաքանակ զածոների մեջ առանձնանում է գլւխ արձանիկը, որն ունի փոքր շափեր, սակայն դեմքի մանրամասերը շատ հաջող են ընդգծված: Կենդանուու աշքերը և թիթը, ինչպես նաև կտորները արգած են շատ արտահայտչի: Թթարես ընդգծված է ուղղանկյուն փոսիկով, իսկ ստորին ծնոտը զարդարված է սեպածն փոսիկներով:

Երկու դամբարանների կավանոթները ներկայացված են սափորների, կօռւների, զավերի, զավաթների, սկանակ-սկուտեների տեսքով, որոնց զարդարված են փայլանախշով արգած զծերով ու շերտերով, սախտակ և կարմիր ներկած գունազարդով, ակոսներով, համակենտրոն շրջաններով, զիգզագով, ալիքանախշով, սեպածն զարդերով և այլն:

Լոռիցերդի նշանակած խեցեղենը, ինչպես նաև մետաղյա արխայիկ զծեր ունենալով հանդերձ, արդեն նշանակալիորեն տարբերվում են վաղ ձևերից և իրենց հիմնական հառկանիշներով կվազըվում են մ.թ.ա. 11-10-րդ:

դ.դ.-ով, որը վկայում է երկաթի դարաշը ջանի վաղ փուլերում դեռևս գոյատևող ուշ ըրուզի դարաշը ջանի ավանդական ծեսերի մասին:

Զանգեզուրի ուշ ըրուզի դարաշը ջանի երկրորդ փուլը ներկայացված է հուշարձանների ոչ մեծ խմբով, որոնք թվազրպում են մ.թ.ա. 12-11-րդ դ.դ.: Մրանց լիին են դասվում Արծվանիկ գյուղի դամբարանի նյութերը: Այս 10 մ տրամագծով և 0,7 մ բարձրության քարանողային թմբով դամբանքը լուր է՝ քարարկեային դամբանաթիցով: Կատարվել է մասնատված դիաքում: Պանզը և ծեսորի ոսկորները դրված են իցի կենտրոնում, իսկ մնացածները՝ հյուսիս-արևելյան անկյունում: Գտնված նյութերը ներկայացված են կմուճներով, օրեղաններով, զրահակոսակներով: Խեցանոթներըն ունեն սև-փայլառ մակերս և գարդարված են հիմնականում զծազրդով: Զեռվ նման անոթներ գտնվել են Ղափանի շրջանի Բնդաբուրջ և Նիկանոյ գյուղերում: Ընտարկվող ժամանակահատվածով են թվազրպում Անզեղակութից պատահականորեն գտնված ըրուզի դաշույնը, նիզակի ծայրը, սրեկան գլխիկով շքասեղը, վանական նետառլաքները, ծարբից քածանարարները?

Հետաքրքիր գտածոներ կան Ս.Ա.Եսայանի կողմից ուսումնասիրված հյուսիսարևելյան Հայաստանի հուշարձաններում: Դեռևս նախանորհողային շրջանում Թեղին-լազերում և Ֆարիս շրջանում Մուրյեի աեղումներից գտնվել են մ.թ.ա. 13-12-րդ դ.դ. թվազրպող միաժույռ դաշույներ, գավազանի գլուխի: Խողովակամն կոթառով նիզակների և դաշույների գտածոները հայտնի են Նոյեմբերյանից, Արասնոսելսկից և Դիլիջանից: Մետաղյա հետաքրքիր հավաքածու է գտնվել հնանի շրջանի հուսածոր գյուղում: Այս բարակացած է, ոչ մեծ սակրից, միաձույլ խողովակամն երեխակալով դաշույնից, որն ունի հարթ, ակոսիկներով գարդարված շեղը ու ցանցկեն գլխիկ, և ըրուզի մանզաղից: Առանձնահատուկ հետաքրքրություն ունի Խոշոր, ուռուցիկ մակերեսով սկավառակամն զրանակոմակը՝ զարդարված հոռանկյունածն շերպներով, որոնք ստվերագծված են կետզերով:

Համեմատաքար մեծածավալ պեղումներ են կատարվել Շամշադինի շրջանի Արծվաբերդ գյուղի մոտ գտնվող Խուրին-հողեր տեղամասում: Այստեղ պեղվել է 15 դամբարան: Մրանց քուրոր խոշոր քարաբեկորներով շարված քարակղեր են՝ ծածկված սալաքարերով: Դամբարանների մի մասը, հատկապես դամբանաքլուրները, թեև հնում կողոպատվել են, այնունամենայնիվ գտնվել է իրերի հետաքրքիր հավաքածու քաղկացած տարենր տեսակի խեցանոթներից, զենքի տեսակներից և տարբեր զարդերից: Խեցեղենը: Քաղկացած է անկանք միականթ սափորներից, կծումներից, օրեղաններից, զավաթներից և այլն, որոնք ունեն սև կամ գորշ, փայլեցրած կամ ան-փայլ մակերես: Զարդամոտիվները ներկայացված են խորալիր զծերով,

ակոս-գոտիններով, զիզագներով, թեր գերբով արված ցանցադաշտով, մատնեթներով, եռանկյունիներով արված շկրոններով և այլն։ Առավել մեծ հետաքրքրությունը է ներկայացնում խոշոր զայտի հիշեցնող սափորը։ Այս ծիսական անոթ է, որն ունի ոչխարի ոմավորված ծեփածո պատկերներ հիշեցնող շորս բռնակներ, որոնց գլուխները բաժանանում են շուրջի կիա։ Այս սափորը մտնում է ծիսական անովների խմբի մեջ, որոնք հայտնի են Աստղի և Արքից, Դիւի ջանից, Բայազետից, Սալինից, Այրումից և այլն։ Դրանց զարդարված են օճերի, գորտերի, լոշտւների, այծերի, հովազների, մարդու գլխի ծեփաքանակներով։ Ձենքի տեսակները, ի տարրերություն ինցանոթների, թեև հանդես են զալիս ուշ ըրոնզի վերջին փուլում, զոյտառում են մինչև մ.թ.ա. 1-ին հաջ. սկզբանը։ Առավել հետաքրքր է խոշոր, այսպես կոչված անդրկովկասյան տիպի տուրը։ Նման սրեր հայտնի են Ռեդկին-յազերից, Գուոգինոյից, Արթիկից, Կիրովականից, Կալաթենդից, Այգեմերից և այլն։ Մը հետ գտնվել են վեց վանականեր, լավ ոետուշված և երկու ըրոնզից միջանկյալ ողի վերածվող բառակող, երկար առշուկով նետասլաքներ։ Ձենքի մասին խոսելիս պետք է նրանք նաև զրահաշապակի մասեր հանդիսացնու չորս մեծ և 12 փոքր զրահակոնակները, որոնք կարգել են կաշվե կամ կտղրե շապիկ։ Նման զրահաշապիկներ լավ հայտնի են ուշ ըրոնզի դարաշրջանից, զոյտառել են նաև երկաթի դարձում, հայտնի են Լճաշենում, Արթիկում, Դիւի ջանում և Հայաստանի այլ հուշարձաններում։ Եթեմն նման զրահաշապիկների որովայնի հատկածից կախվել են խոշոր փայտյա ծվածկ կամ կլոր սկավառակներ՝ եկերպած ըրոնզի շրջանակով /Գուոգինո, Լոռիերդ, Մեղրածոր/, իսկ կրծքին կախվել է խոշոր ըրոնզ մարմար /Գուոգինո, Լուսածոր, Թանլար, Այգեմեր, Կիրովարան և այլն/։

Քննարկվող ժամանակահատվածի հետաքրքր հուշարձան է Ալեքսանդրապոլում /Լենինական/ 1875 թ. մարտկոցի կառուցման ժամանակ բացված զինվորի համբարանը, որը նկարագրել է Գ.Դ. Դիւլմոնովը։ Կատակոմբի ծեռունեցող այս լամբարանային կառույցից գտնված իրերը թվակրվում են մ.թ.ա. 12-11-րդ դ.դ.։ Մարան խին են՝ ատականում տափակ շեղողվ, ուշածին անցքերով լաշույնը, որը լակ հայտնի է Լոռիերդուց, Սեծամուղից, Կարմիրերդից և այլն, անդրկովկասյան տիպի տուրը, մանկավոր, ըրոնզի նետասլաքները, կախելու համար անցք ունեցող ծովային խորուները և այլն։


Այդ ժամանակահատվածին գերաքերող Շիրակի հուշարձանների թվում հարկ է նշել ևս մի քանի համալիրներ։ Մրանցից մեկը բացվել է 1926թ. Պատուի-Գեղ զյուղում։ Կերպինիս գույքը բաղկացած է սեանյան տիպի ըրոնզի դաշույնից, ըրոնզի օղից, սարդիոնն վեցանիստ ու լունքներից։

վանակատե նետասլաքներից: Սուանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում մածուկից ապարաստված զլանածն կնիքը, որի վրա պատկերված է թթե զծերով արված սիրազան ծառը: Ոչ պակաս հետաքրքիր հուշարձան է Արթիկի շըջանի Վարդաթար գյուղում գտնված „Թարարկողը“, որը 1959թ. ուսումնասիրել է Տ.Ս.Խաչատրյանը: Վարդաթարի գտածոները քաղկացած են սակրից, սևանյան տիպի դաշուլյից, հարթ կացնից, երկժանից, դուրից, զավազանի զլինից և ինչ-որ իր բոնակից, սկավառակածն լինեղներից, ըրոնզե կոմակներից և այլն: Բացի մետաղյա իրերից գտնվել են միականթ սափորներ և խոհանոցային նշանակության կմուճներ:

Ուշ ըրոնզի 2-րդ փուլի հետաքրքիր նյութերը գտնվել են 1894թ. Ե.Ս.Թաղայշվիլու կողմից պեղված Որնակի /Ակներ/՝ դամբարանադաշտից: Ժավոթ, այս առաջնակարգ հուշարձանը անհրաժեշտ է նկարագրություն չունի և այդ պատմուկ դժվար է որևէ սան ասել թաղման մեջ և դամբարանային կառույցների մասին: Սուանձնապես հետաքրքիր եյութեր գտնվեցին Ակների 16 դամբարանից: Զարդարմուշները ներլայացված են ոչ մեծ ըրոնզե օղով, զանգվածեղ, միաձիյլ ապարանջանով, սարդիոնե ուլունքներից մասնակով կառուրի խիունն ջներով: Գտնվել է նաև ըրոնզե լայն գրտի՝ պատված դրվագազարդ պարույրներով: Բացի այս զարդերից, առանձնատուկ արժեք են ներկայացնում երկաթյա իրերը, որոնք ուշ ըրոնզի վերջին փուլի երկաթյա առաջին գտածոներից են: Զենքի գտածոների թվին են դասկում դասակի բեկորը, ըրոնզե կոլատով երկաթյա նիզակը, որից գտնվել են նաև վերը նշված „Ձինվորի դամբարանում,, , Ձիմո-Ակնալայում և Սամբավոյում, որոնք վկայում են Հայաստանի և Անդրկովկասի դամբարանային համալիններում երկաթյա իրերի հանդիս գալու մասին: Այս դամբարանում գտնվել են նաև կտրված ծայրով ըրոնզե սուր, հարթ կացին և գանգվածեղ ըրոնզե սակր:

Ոչ պակաս հետաքրքիր գտածոներ պատահականորեն հայտնաբերվել են Ախթալայի երկաթուղային կայարանի մոտ 1957 թ. Կատարված աշխատանքների ընթացքում: Գտնված զանձը քաղկացած է յոթ հարն կացիններից և յոթ զանզվածեղ սակրերից, որոնք դրված եին ըրոզյա թիթեղից պատրաստված կաթսայի մեջ: Որնակի և Ախթալայի գտածոները գկայում են Լոռի-Փամբակի մետաղագործական օջախի խոշոր դերի մասին՝ որպես մետաղյա իրերով հարևան շըջանները մատակարարողի:

ՕՇԱԿԱՆ: Օշականի դամբարանադաշտը ընկած է Աշտարակի շըջանի 0-շալան գյուղի կենտրոնում քարմաքող , , դիղի կոնդ,, շւրջ հյուսիսացին լանջերին: Դամբարաններն իրենց մերով ստորաբաժանվում են մի քանի տիպերի, ոչ քարձը թմբերով խոշոր դամբարանաքարերներ, որոնց դամբարանները խոշոր թարաքենորներից կառուցված թարարկողեր են՝ սալերից



Աղ. 57. Ուշ երոնդի դարաշրջանի գտնվող Արթիկից:

Կառուցված երկաստիճան-եռաստիճան է Կենդ թաղ ունեցող ծագույզ, կրու-  
թիսով շրջագծված թարարկղեր և առանձին կառուցված թարարկղեր:

Խոշոր դամբանաքաղաքացիներում ամյունի դիրքը որոշել հարավոր չե-  
ղավագանի որ վերջիններս հում կողոպակած էին, և կմախքների դիրքը  
խիստ խաթարված էր: Ոչ մեծ կրութեխներում և առանձին թարարկղերում հան-  
գուցյալները պառկեցվել են խիստ կծկված վիճակում, զլիով հյուսիս, ար-  
և եւլու կամ արևմուտք մի փոքր շեղվածությամբ: Անհատական թաղումների  
հետ հանդիպում են նաև խմբակային թաղումներ, հատկապես խոշոր դամբան-  
ներում; , ուր գտնվել է ավելի քան 20 զանզ:

Դամբանաների հիմնական մասը վերաբերում է երկաթի դարաշրջանի  
վաղ փուլերին, և միայն <sup>4-ը</sup> ուշ ըրոնզեղարին: Այստեղ գտնված նյու-  
թերը ներկայացված են հրաշալի սև, փայլեցրած անկանչ սականը սականը՝  
զարդարված ցանցաղաշտով, փայլանահշով թեք գծերով: Գտնվել են նաև խո-  
շոր կճումներ, որոնց մի մասը ունի սեղանածե բուսակներ, ինչպես նաև  
ոչ մեծ սափորներ, որոնց կացված են եղել մեծ անոթների ուսերին  
/գտնվել են քենորային վիթակում/, կազմելով յուրահատուկ կեռասներ: Անոթների մի մասի հատակը զարդարված է եղունզազարդով, հատիկազարդով  
արզած շրջանակներով: Այս օրուոր խցեղենը շատ լավ աղերսվում է հա-  
շենի, Արթիկի, Կարմիրերդի, Թեղարստի և այլ խցեղենի հետ ու թվազր-  
գում է մ.թ.ա. 1<sup>5</sup>-14-րդ դարերով:

Բազմազան են ըննարկվող դամբանաների մետաղյա իրերը: 95 դամ-  
բանից գտնվել է ըրոնզեղակալի թեկոր, որպիսիք լայն սարածում  
են ստանում ուշ ըրոնզի <sup>2-ը</sup> դիրքում: Այստեղ հանդիպում են պվելի  
ուշ շրջանի նյութեր: Քանի որ դամբանած կողոպակած էր: Կաթելի է ենթաղը-  
րել, որ մինչև կողոպակելու պյատեղ կատարվել է երկրորդ թաղումը, որի  
ընթացքում խցեղենի հետ մեկտեղ դրվել է մեկ օճազլուի ապարանջան:  
Ուշ ըրոնզեղարյան նյութերի մասին խոսելիս պիտք է նշել 38 դամբա-  
րանից գտնված թոշնի արծանիկների տեսքով ոչ մեծ ցանցեն կախիկները,  
որոնց մեջին ողակներ են կացվել կաթելու համար: Այս արծանիկները  
թեև հանդիպում են մ.թ.ա. 14-19-րդ դ.դ., պիտի ընդոր են. ուշ  
ըրոնզի դարաշրջանի <sup>2-ը</sup> դիրքում:

Հատկապես հատկանշական է ոչ մեծ ըրոնզի դաշույնը, որն ունի  
եռանկյունաձև շեղը, որի ամբողջ երևայնը անցնում է միջանկյալ ող:  
Երկճյուղ դաստակը ամուր գրելում է շեղեի ուսերը: Ինչպես հայտնի է,  
երկճյուղ դաստակները հանդիպում են ուշ ըրոնզի դարաշրջանում: Մրանց  
վաղ օրինակները հանդիպում են հաշենում: Այս օրինակը ավելի մոտ է  
էջմիածնից գտնված սրին, որը բազրվում է մ.թ.ա. 13-12-րդ դ.դ.-ով:

Բացի այդ, մի փոքր անփույթ ծևափորումը ենթաղրել է տալիս, որ սա ավելի ուշ շրջանի արտադրանք է: Կետեւ նշվածը, հարավորություն է տալիս ոյս համալիրները բվագրել մ.թ.ա. 18-րդ դ. Վերջով և մ.թ.ա. 12-րդ դ.-ով:

Ներկայացվող փուլի հուշարձաններից Գուլովինոյի № 6 դամբարանը: Վերջինս երկու մեծ սալաթարերով ծածկված ։, թարարկելու, է: Այստեղ զբուժված տղամարդու ամյունը պառկեցվել է աջ կողեի վրա, կծկված վիճակում: Նրա ոտքերի տակ դրված էին 23 մեծ ու փոքր կավանոթներ: “Դատակի անրակոսկրի միջև դրված էր որնակյան օրինակը հիշեցնող հրաշալի սուրբ: Նրծավանդակի մոտ գտնվեցին հիմբում ուղղանկյուն հանվածքով վանական նետառանարքներ: Գուլովինոյից այս ժամբարանից գտնված զրահաշապիք կաշվից տյոււպած լանջապանակ է, որի վրա ըրոնզե սկավառակներ, ծարյանդաններ, կոճակներ են կարգած: Որովայնի մասում կախվել է փոքրիկ ըրոնզե զամերով փայտյա սկավառակ:

Երկանի հանդես գալու վաղ փուլի համեմատարար ավելի ուշ հուշարձան քաշվել է իշխանի շրջանի Խաչտարակ գյուղի մոտ: Խաչտարակի համալիրը աղկացած է լավ պահպանված կորված ծայրով: Որից որն ունի կենտրոնական ող և զարդարված է սլաքածև ակոսիկներով, երկշար առողույրով և այծի 2 պատկերներով: Միածույթ, կիսակլոր դաստակը ավարտվում է կիսագնդամ գլխիկով, որը զարդարված է աստղամեծ զարդով: Այս համալիրի մյուս գտածոներից են խոշոր ըրոնզե երկու սակրերը և չորս մանգաղները:

Ուշ ըրոնզե 2-րդ փուլի հետաքրքիր գտածոներ կան Ղարաբաղում: Կարերապույն հուշարձաններից Խոջալուի դամբարանաղաշտք՝ թաղկացած է մեծ և փոքր զամբանաքլուրներից, ինչպաս նաև թարարկներից, որոնց թթվագրում են ուշ ըրոնզեի Վերջով և վաղ երկանի դարով: Խոջանլուի դամբարանաղաշտք ուսումնասիրությանը անդրադարձել են թազմաթիվ հետազոտողներ: Սակայն առ այսօր առավել նշնակալից գտածոները ճեղք են քերպել դամբարանաղաշտքի առաջին ուսումնասիրողի՝ է.Ռ.յոսլերի պեղումներից, որոնք ուսումնասիրել է Կ.Թ.Քուշնարյովան: Այս հուշարձանի դամբարանաղաշտքները քածանվում են երեք խմբի և 6 առանձին թարարկերի, որոնք վերաբերում են մ.թ.ա. 13-11-րդ դ.դ., 11-9-րդ դ.դ. և 8-7-րդ դ.դ.-ի: Այս գլխում կըննարկվեն փոքր, հողային թմբով դամբանաղաշտքները, որոնք թվագրվում են մ.թ.ա. 13-11-րդ դ.դ.-ով, իսկ մնացածները կըննարկվեն հաջորդ գլուխներում:


Այս խմբին են վերաբերում թարահողային կամ թարե և ավագե թիմով ոչ մեծ դամբարանները, որոնց տրամագիծը հասնում է 10-20 մ, իսկ թարձրությունը՝ 1-3,5 մ. Դամբանախցերը հիմնահողային են, երեսմն թղումները կատարվել են անմիջապես մայր հողի վրա կամ դեղին ավագի

շերտերում և շրջագծել գետաքարերով։ Ամյունսերը դրվել են մեջբի վրա պառկած վիճակում։ Հետաքրքիր հիմնահողային խցով դամբարան է պեղվել այստեղ։ Դամբանաթումը շրջագծված է կրոմլեխ հիշեցնող գետաքարերով։ Հիմնահողային դամբարանը /շափերը 4 1,85 1,5/ ծածկված է փայտյա տախտակամածով։ Դամբարաններից մեկում կմախթից քացի գտնվել են շատ կմախթի ոսկորներ։ Դամբարանաթմբի այս խմբի գույքը աղքատ է, քաղկացած ոչ մեծ քանակությամբ կավանոթներից, ըրոնզի շքասեղներից, կոմակներից, վանակատե և կայծքարե նետասլաքներից և սարդիոնե ուլուներներից։

Պոքր դամբարանաթմբերում շրեղ գտածոների քացակայությունը ցույց է տալիս, որ սրանց հասարակ համայնականների թաղումներ են և թվազրպում են մ.թ.ա. 18-11-ըդ դ.դ.-ով։

Այս թվազրությունը չեն հակասում Կ.Խ.Թուշնարյովայի պեղած երկու դամբարանաթմբերը, որոնք թնկած են նոր գյուղի խողովի այգիների տարածում եղած դամբարաքլուրի արևմտյան հատվածում։ Այստեղ գտնվել են մի քանի կավանոթներ։ Նրկու դամբարաններն էլ ունեն փայտյա տախտակամածով ծածկված հիմնահողային դամբանախցեր։ Այստեղ կծկված վիճակում պառկեցված ամյուններից քացի, դամբարաններից մեկում գտնվել ել կովի վերջույների ոսկորներ։

Այս դարաշրջանին են վերաբերում Խանլարի մի շարք դամբանաթլուրները։ Սրանց մեջ տանձնահատուկ տեղ է գրավում Յ.Ի.Գումելի՝ Ելենենդորֆի /Խանլար/ մոտ պեղված դամբանաթլուրը, որն ունեցել է 30 մ արագմագիծ և 4 մ քարձորություն։ Լիցքի տակ քացկեցին 7 դամբանախցեր, որոնց ցից կենտրոնականը հիմնահողային էր /շափերը՝ 13x3, 5x2,8մ/։ Երկայնական պատերին կից զրգված են եղել մայրու և կաղնու 12-ական հենասյուներ։ Խցի կենտրոնում դրված է եղել 55-60 սմ տրամագծով կաղնու հենասյուն։ Վերջիններս պահել են ծածկի գերանները։ Դամբարանի հարավարևմտյան անկյունում դրվել է դամբարանի տիրոջ ամյունը, որը եզրագծված էր զետաքարերով։ Կենտրոնական դամբարանում կատարվել է խմբակային թաղում։ Գտնվել են 7 կմախթ, ինչպես նաև միու ոսկորներ։ Գյուղակած հարուստ գույքը քաղկացած է անդրկովկասյան տիպի քրոնզի սրից, սևանյան տիպի մի քանի դաշույններից, ըրոնզի սայրերից, որոնցից մեկը երկսայր է, վահանի ուլուններից, վանակատե և կայծքարե նետասլաքներից, մեծ քանակությամբ պերճանքի իրերից՝ մարմարե գլխիկ, գլխածածկի գարգեր, խոշոր կափիկներ և մեղալիոններ, թոշունների տարբեր արձանիկներ, գղտածներ իրեր, խողովակածներ, լուսնամեն գարզեր, կոմակներ, ըրոնզի անոթների մասեր, սարդիոնե և շաղախից ուլունքներ։ Գտնվել է նաև կավանոթների ոչ մեծ խումբ՝ սափորներ, գավեր, քրեղաններ՝ զարդարված



Աղ. 58. Ուշ բրոնզի դարաշրջանի զենքեր և զործիքներ Արթիկից:

խաշերով, կեռախաչերով, եռանկյունիներով և զիգզագներով։ Հանդիպում են նաև կենդանակերպ՝ այծերի, ուղտի, ծիռ, օճի ապակերներ։ Այս զարդաների մեծ մասն արգած է զծազարդով, որն ագուցված է սպիտակ շաղախով, այն ընդգծված առանձնանում է անոթների սև ֆոնի վրա։

Ուշ ըրունզի դարաշրջանի 2-րդ փուլի վաղ հուշարձանների լվան կարելի է դասել նաև Զուռնաքաղ գյուղի մոտ գտնված խմբակային թաղումները դամբարանները։ Բացի խմբակային դամբարաններից, այստեղ հանդիպում են նաև միախուց դամբարաններ, որոնք ընկած են հանլարից և կիրովագրադից հարավ-արևմուտք, Կոշկար-շայ զետի ժամ, Կիլիդաղ լեռան մոտ։

Մեկ այլ խումբ են կազմում Կեդաքեկյան հուշարձանները։ Քննարկվող դարաշրջանի վաղ դամբարանները ներկայացված են թարարկերով, որոնք պեղվել են Սենցենդի, Վերին Դաշեսանի, Բայանի, Զովողարի և Դաշեսանի մոտակայքում և թվագրված են մ.թ.ա. 13-11, ըդ դեկ.-ով։ Հիմնականում այստեղ հանդիպում են կծկված, ճգված և նստած վիճակում թաղումներ։ Բայան գյուղի մոտի դամբարաններում երբեմն հանդիպում են դիակիզված խաղումներ։ Այս խմբի դամբարաններում գտնվել է գլխարկածն զրինկով շքասեներից, ապարանջաններից, ողերից և մատանիներից կազմված աերձանքի իրերի ոչ մեծ խումբ։ Ձենքը, որպես կանոն, այստեղ բացակայում է։ Մե, զորշ, կարմիր մակերեսով խեցանոթները ներկայացված են զնդան սափորներով, զավաթներով և թրեղաններով՝ երբեմն զարդարված եղունգանախշով և ակոս-գոտիներով։

Ուշ ըրունզեղարի այս մշակույթը, որը որոշ ուսումնասիրողների կողմից անվանվել է հյուսիս-հայկական, իսկ մյուսների կողմից՝ արևելաքրացական, հիմնականում ընորոշ է Անդրկովկասի կենտրոնական և արեւելյան շրջաններին և փաստորեն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհ հի հյուսիսակելյան մասը։ Այս երեք խմբերի հուշարձաններում, բացի ընդհանուր զծերից, կան նաև տարբերություններ։ Այսպես, դարաքաղաքան և կիրովագրադի խմբում՝ արարկերը Շատ նման են թաղման ծեսերը՝ ամյունի լաղումը և դիակիզումը։ Միայն կիրովագրադի խմբում նկատվում են մասնատված թաղումներ, որը նկատվում է նաև Հայաստանի քաղաքի շրջաններում։

Ուշ քրոնօգեղարի տնտեսությունը և հասարակական  
հարաբերությունները

Մ.թ.ա. 2-րդ հազ-ի երկրորդ կեսից Հայկական լեռնաշխարհի և Անդ-դղուկասի ցեղերի կյանքում տեղի են ունենում զգալի փոփոխություններ, որոնք պայմանավորված են մի ջին քրոնօգեղարյան ժամանակաշրջանի տնտեսության ձևերի՝ երկրագործության, անասնաբանության, արհեստների աննախանթաց աճով:

Երկրագործության և անասնաբանության զարգացումը, քրոնգի ինդուստրիայի աճը հանգեցրին արհեստների ծաղկմանը: Հին արևելյան աշխարհի հետ կապերը իրենց հերթին նպաստեցին երկրի մշակութային զարգացմանը:

Տնտեսության և արհեստների տարբեր ճյուղերի վերլուծությունը, ինչպես նաև ընակավայրերի, դամբարանների մեջ և նոգենոր մշակույթի ուսումնասիրությունը վկայում է, որ տեղի է ունենում Հայկական լեռնաշխարհի ցեղերի մշակույթների համարմում: Միաժամանակ քացանայտվում են տեղական արտադրական կենտրոնների յուրահատուկ, մասնագիտաց-մաքը, արհեստներ: Նյութական արտադրանքի կտրուկ աճը ապահովում է տնտեսական լայն կապեր ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան երկրների հետ, հիմնականում՝ Հարավային, արևմտյան և հյուսիսային շրջանների հետ /Միջիա, Վերին Միջազգաց, Թալիչ, Ըլամ-Զագրոս, արևմտյան Վրաստան, Հյուսիսային Կովկաս/:

Ուշ քրոնօգեղարյան ժամանակաշրջանում Հայաստանը, շնորհիվ իր ոչխարհապահ քարենապատ դիրքի, կարևոր դեր է խաղում Կովկասի, Առաջավոր Սսիհայի թնդարժակ շրջանների հետ կապեր հաստատելու գործում: Գույնելով արևմտքթի և երևելքի խաչմերուկներում, Հայաստանը կապող օղակ էր Պարսկաստանի, Փոքր Ասիայի, Միջիայի, Կովկասի միջև: Դրա պայցույցն են Հայաստանի մի շարք հնավայրերից գտնված քարմարվեստ ներմուծված գոտածոները:


Հայաստանը եշգած, ժամանակաշրջանում ներմուծող պասսիվ երկիր չէր: Հին Արևելքի երկրներից Հայաստանով ապրանք էր փոխադրվում զերի Հարավային Կովկաս, Պարսկաստան և այլ շրջաններ, առա Կովկասի, ինչպիս և Հայաստանի արտադրանքը տարածվում էր Ասիա, երանեական քարծ-վանդակի արևելյան շրջաններ, Հյուսիսային Միջազգաց, մինչև Պաղես-տինի ասամանները, Խաչառունույթ ոչ միայն ապրանքահիմնակությանը, այլև ուղևոր գողակարափուսական տարբեր երևույթների տարածմանը:

**ՀԱՅԱԿԱՎԱՅՐԵՐԻ:** Հայաստանի ընակավայրերը հիմնականում ներկայացնում են կրկնույթան ամրոցներով և մի քանի հայտնի հնավայրերով: Սա-այն ընակավայրերի և ընակարանների մասնավայրերում ժամանակաշրջանում է դրանց սակագ պեղված լինելու պատճռով: Դրանցից է

Լենինականի քնակավայրը, որի թվագրվում է ուշ քիոնզի և երկաթի դարով; Ացուեղ պեղված կացարանները հատակածում ուղղանկյուն են, կավածեփ հատակներով: Դրանք ծածկվել են մոխրի և փայտածուի հասա շերտով՝ վեկայելով հրդեհի պատճռով տանիթի վլուզման. մասին: Աենյակներից մեկը, ուր գտնվել է ծուլման կաղապար, ծուլման մի արհեստանոց է, որի մեջ եղել են նաև վառարանի մնացորդներ և այրված խարամ: Լենինականի շրջանում նշված քնակավայրը միակը չէ: Թաղաքի հյուսիսարևելյան մասում գտնվող Կումայրի ամրոցի պեղումների վամանակ հայտնաբերվել են կիելույսյան շարվածքով ամրոցի պարսպապատեր և ուշ քրոնզի մամանակաշրջանով թվագրվող խեցեղեն առարկաներ: Շիրակի ուշ քրոնզեղարյան հուշարձաններից աետը է նշել Հառիթի ամրոցը, որը, ինչպես նշվել է, հիմնադրվել է վաղ քրոնզեղարյում: Խնչախ ցույց են տալիս դարձանակաշրջանում գտնված նյութերը, այն գոյատել է նաև ուշ քրոնզեղարյան ժամանակաշրջանում: Ամրոցի Յ-ը ող դարավանդում քացվել են հատակածում ուղղանկյուն մի քանի կացարաններ՝ նեղ մուտքով: Այս կացարանների պատերը և շարված են տարբեր մեծության տուֆով, կավե շաղաթի օգնությամբ:

Ուշ քրոնզեղարյան ժամանակաշրջանի նյութեր գտնվել են Շիրակի մի շարք քնակավայրերից՝ Հոռոմ, Սառնաղջյուր, Քեթի և այլն, որոնք հիմնադրվելով վաղ քրոնզեղարյում և լքված մնալով միջին քրոնզի դարաշրջանում, վերաբնակեցվել են ուշ քրոնզեղարյում: Նույնատիպ ամրոց է Շւարի ամրոցը, ուր վաղ քրոնզեղարյան մշակութային շերտի վրա գտնվել են մ.թ.ա. 1<sup>4</sup>-1<sup>3</sup>-րդ դ.դ. խեցեղեն իրեր, սա վկայում է, որ վերջինս քնակեցված էր նաև ուշ քրոնզեղարյան ժամանակաշրջանում: Խոսելով ամրոցների մասին, անհրաժեշտ է նշել, որ ուշ քրոնզի դարում նրանց քանակը գգալիորեն աճում է նախորդ շրջանի համեմատությամբ: Մեծ թվով ամրոցներ հայտնաբերվել են Սևանի պազանում, Լոռիում, Զանգեզուրում, հյուսիսարևելյան Հայաստանում և այլ վայրերում: Իրենց քնույթով այս ամրոցներն ունեն Ֆունկցիոնալ տարբեր նշանակություն: Դրանց մի մասը ամրոց-թանակավայրեր են, օրինակ՝ Հոռոմը, Քեթին, Ոտոնաղջյուրը, Կառնուտը, Շւարը, Լմաշենը, Կամոն և այլն, մյուսները՝ անասուններին հարձակումից պահելու կետեր: Ամրոցների մի մասը պաշտպանական փոքրիկ կառույցներ էին, որոնց պահակակետեր էին ծառայում Խոշոր ամրոցների, քնակավայրերի արվարձանները պաշտպանելու նպատակով: Դրանք կառուցում էին լեռնանցքներում, մարգերի սահմաններում, գետահովիտների մոտակայում և այլուր:

Քնակավայրերից հիշարժան են Արարատյան դաշտի և Սևանի պազանի մի քանի հուշարձանները, օրինակ, Արմավիր բլուրի քնակավայրը, ուր հետագայում կառուցվել է Արգիշտիխինիւի ամրոց: Բնակավայրը հիմնար-



Աղ. 59. Աւշ քրոնակի դարաշրջանի գենոբեր և գործիքներ Մըթիկից:

վել է մ.թ.ա. 18-12-ըդ դ.դ.: Այստեղ կառուցվել են թարե քազմաթիվ կացարաններ և արհեստական քարայրներ: Պեղումներից գտնվել են ժայռափոր, քառանկյուն հատակագծով 12 կացարաններ, որոնք, ինչպես և Մեծամորի նման կառույցները ունեցել են պաշտամունքային նշանակություն: Նույն տիպի շինություններ քացվել են նաև նոր Արմավիր քլուրում: Այս ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հաստատագրելու, որ երկու քլուրների վրա եղել են նրկուտ տարբեր քնակավայրերի հետքեր: Հետաքրքիր է Մեծամորի քնակավայրը, որի ամրաշինական համակարգը ընդգրկում է շուրջ 30 հա տարածք: Այստեղ մեծ քլուրի ժայռերի վրա, ուր կառուցվել է միջնաբերդը, հայտնաբերվել է արտադրական կառույցների մի համալիր՝ ծուլարան-արհեստանոցներ: Մեծ քլուրի զագաթը և փոքր քլուր հիմնականում կառուցապատճել են պաշտամունքային շինություններով: Արտադրական շինություններում գտնվել են մեծ թվով կէոր կամ ուղղանկյուն թոնիր-հալոցներ: Հայտնաբերվել են նաև փուրքի կավից անոթներ, հալանյութի ոսկերե և կավե ըրիկեսներ: Ոչ պակաս հետաքրքիր են նաև պաշտամունքային ժայռափոր սրբարանները, որոնք նման են վերը հիշտակված Արմավիր քլուրի շինություններին: Եզակի են միջնաբերդի հյոււխարևելյան լանջի շինությունները, որոնք կառուցվել են մ.թ.ա. 2-ըդ հազ. վերջին, մ.թ.ա. 1-ին հազ. սկզբին: Դրանք մի մեծ համալիր են կազմում՝ հատակագծում ուղղանկյուն, 60-80 մ քառ. տարածությունի տեսքով: Այստեղ, կենտրոնական մասում, տեղադրված են կավածերի գործարաններ, իսկ հարավային պատի տակ՝ կավածերի տարբեր նշանակությամբ քածանուններ: Արևելյան կողմը զբաղեցված է խոշոր կավե կանացի կուրքերով և սյունած գոհարաններով ու այլ պաշտամունքային կառույցներով՝ ծոնված պաղաքերության մայր ամտվածունուն:


Հայաստանի ուշ քրոնզեղարյան հուշարձաններից հետաքրքիր է նույնարմիր քլուրի նախառւրարտական քնակավայրը: Այդ քնակավայրը կազմված է տունծին մեծ շինություններից, որոնք ունեցել են հում աղյուսե պատեր՝ քարքարացված քարե հիմքի. վրա: Յուրաքանչյուր համալիր ծածկված էր մեկ ընդհանուր տանիքով: Բնակարանային համալիրները քաղկացած էին մի շարք կացարաններից: Կացարանները օժտված են տնտեսական և պաշտամունքային օջախներով, հացանատիկի հորերով, մարդակերա կանացի արձաններով և կուռքերով, տնտեսական ու արտադրական նյութերով: Կարմիր քլուրի այս նախառւրարտական քնակավայրը շինարարական և ծարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համարել, որ դրանք պատկանել են նահապետական ընտանիքի:

Այս շինությունների ստորին հորիզոններում հայտնաբերվել են մեծաղածութական արհեստանոցի հետքեր՝ փայտածիկ և մոխրի հզոր շեր-


տերի ուղեկցությամբ, ուր հայտնաբերվել են հալոցներ, քրոնզի իարամ, որոնք վկայում են մետաղամշակման արհեստանոցի գոյությունը: Հետաքրքիր է այն, որ նույն շերտում հայտնաբերվել են երկաթի մասցուկներ, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի ուշ շրոնզեղարում վարպետները միաժամանակ արտադրում էին երկաթի առարկաներ:

Հայաստանի ուշ շրոնզեղարյան կիկլոպյան ամրոցների շարքում մեծ տեղ է զրավում Լճաշենի ամրոցը, որն ընդգրկում է 55 հա տարածք: Այստեղ հետազոտողների նորմից զտնվել են տարբեր ժամանակաշրջանների /վաղ քրոնզից մինչև միջնադար/: Դրանց մեջ ուրույն տեղ են զրավում ուշ սրոնզի հավաքածուները: Նշված ժամանակաշրջանում Լճաշենի ամրոց-թանգավարյօթ նղել է հզոր ցեղային միության առաջնորդների նստավայրը, որը նեխունի անվանումով հիշատակվում է ուրարտական ավելի ուշ արծանագրություններում: Լճաշենի ամրոցի պաշտպանական պարիսաների երկարությունը 5 կմ է, լայնությունը՝ 3-4 մ: Արևելյան և հյուսիսարևելյան հատվածներում, տեղանքից զգալի քարձը ըլրաշարերի վրա, կառուցված են երկու հզոր միջնաբերդեր, որոնք իրարից անջատվում են 200 մ լայնությամբ խոր կիրովգի: Նշված միջնաբերդերը ամրացված են անկյունային աշտարակներով և մի քանի տասնյակ որմաննեցերով, գերածելով այն հզոր պաշտպանական համակարգի: Ամրոցի ամբողջ տարածքը, ինչպես նաև միջնաբերդը, գեղղեցրել են մեծ ու փոքր կացարաններ և օճանդակ տնտեսական շինուալիքուններ: Բնակելի համալիրները հիմնականում կազմված են Յ-4 սենյականց տներից; ուր գտնվել են օջախների քազմանիվ հներեր: Սյս շինուալիքուններում գտնվել են փայտե սյան մնացորդներ, թարգի խարիսխներ, որոնք վկայում են, որ կացարանների տանիքները գլխատան մեջ են ունեցել, պատկանելով մեծ ընտանիքի: Լճաշենի ամրոցների կացարաններից հայտնաբերվել են երկաթի ծուլարան-արհեստանոցի հներեր, որոնք, ինչպես և Կարմիր քլուրի նախառարարության ժամանակաշրջանի նյութերը, վկայում են, որ Հայաստանի ուշ շրոնզեղարյան ժամանակաշրջանի բրոնզ ծուլող վարպետները մ.թ.ա. 13-12-րդ դ.դ. սկսել էին մշակել երկաթը:


**ԴԱՄ-ՄՐՄՄԾՅԻՆ ՀԱՄԱԼԻՇԽԵՐԸ:** Հայաստանի ուշ շրոնզեղարյան դամբարանները աշթի են ընկերում իրենց մերի քազմազանությամբ: Մտորգետնյա դամբարանահացի սովորական և առավել տարածված մեր, այսպիս կոչված, թարարկելուն է, որի կողային պատերը իոնշոր քարերից եին, երեսն կոպիտ մշակված և ծածկում եին խուզք մի քանի սալերով: Թարարկի մեջ ունեցող այս դամբարաններն ունեին մի քանի տարբեիքաններ, որոնք կապվում են հայթային վայրերի շինանյութերի և թաղման ծեսի հետ: Եղեծմն մեկ մակատային պատը քած է մնում, ստեղծելով յուրօրինակ մուռք, որի միջոցով,



1



2



3

Աղ. 60. Ուշ քրոնակի դարաշրջանի զարդեր Արթիկից:

դամբարանը ծածկելուց հետո, ներս էր քերպում հանգուցյալը՝ ուղեկցող նյութով։ Կերջում այն փակում էր մեծ քարերով և ծածկում հոյ դով։ Հայաստանում նման դամբարաններ կան Լճաշենում, Շամիրամում, Ռեդկին Լազերում, Շամշադինում և այլուր։ Որոշ դեպքերում կողային պատճեն ավելի շագր էին և մակատայինի հետ հավասարեցնելու համար շարված էին մի թանի շարք մանր քարերով։ Կառուցված դամբարանը ծածկված է սալերով։ Մի այլ դեպքում դամբարանախուցը հիմնահողային էր, սակայն նրա կողապատճեն վերին եզրը մայր հողի վրա շարված էր մանր քարերով՝ ստեղծելով յուրահատուկ շրջանակ, որի վրա դրվում էին ծածկասալերը։


Քարարկղերի հիմնական մասը գուրեկ էր լիցքեց։ Մակայն հանդիպում են դամբարաններ, որոնք թաղումից հետո մինչև ծածկվելը լցվում էին քարանողով։ Քարարկղածն դամբարանների հետ մեկտեղ հանդիպում են հիմնահողային հատակագծում ուղղանկյուն և քառանկյուն տարրեր մեծություններին լիցքեր, որոնք ծածկվում էին թարբե սալերով կամ զերաններով։ Հայաստանի ուշ քրոնզեղարյան դամբարանների վերգետնյա ճևագորումը թթվանորշում է կրոմլեխներով, որոնք հանդիպում են Արագածոտնում, Շիրակում, Լոռիում, Շամշադինում, Ասոզեղուրում, Տափուշում և այլուր։ Իրենց ձևերով կրոմլեխները, ինչպես և միջին քրոնզեղարյան, քաժանիքում են մի թանի տիպի, որոշ մանրամասներով կրկնելով նախորդ շրջանի ձևերը։ Ուշ քրոնզեղարյան կրոմլեխների տրամագծերը հասնում են երկու և ավելի տասնյակ մետրերի։ Կրոմլեխների շրջագծի մեջ ներգծված դամբարանային կառույցները բաժանվում են մի թանի ձևերի։ Ամենատարածվածը թարգղկղերն են, հանդիպում են դամբանաքլուրներ, ինչպես նաև հիմնահողային դամբանախցեր։ Կրոմլեխներից աշքը են ընկնում Շամիրամի լավ մշակված տուֆե ցանկապատճերով դամբարանները, որոնց սալերին կան կենդանիների և երկնային նշաններ։

Երակի դամբարանային կառույցներում ուշ քրոնզում հանդիս է գայլիս թաղման մի նոր ձև՝ կատակումները, որոնք հայտնի են Արթիկից, Հառիթից, Ոսկեհասկից, Լենինականից և այլն։ Միայն Արթիկում աեղվել է ավելի թան 600 կատակոմբ։ Դրանք ունեն ուղղանայաց հորան, որը առնում է դեպի մեջ փորված դամբանախուցը։ Հորանը հատակագծում քառակուսի է կամ կլորավուն։ Այս ստորին մասով մուլվում է դամբանախցին՝ ստեղծելով մի ընդհանուր շինություն։ Դամբանախուցը սովորաբար ձվածն է՝ հազվադեպ՝ ուղղանկյուն։ Հորանի մուտքը ծածկվել է կոնաձև թարբե խցաններով, որոնց երկարությունը 1,2-1,7 մ է։ Այս խցանները կարմիր կամ սև տուֆից են և քերված են այլ հանքավայրից, թափե


որ տուժը վարդագույն է: Եզակի դեպքերում հանդիպում են մուսքի ծածկի այլ ձևեր, եթե դրանք լցվել են մանր քարերով և ապա ծածկվել սալշաբերով: Դամբանախցերին քնորոշ են ուղղանկյուն գաղտնաբառն-խցերը, որոնք կցվել են հիմնական դամբանախցին:

Հայաստանի ուշ քրոնզեղարյան ժամանակաշրջանի մի խումբ դամբարանների վերցելուն ամենանշանավիշը հատկանիշը դամբանաթւուրն է: Դամբանաթւուրները լայնորեն տարածված են Տավուշում, Արցախում, Լոռիում, Սրբածոտնում, Սեանում և այլուր: Եթեմն 4-5 մ քարծրության թմբով նման կառուցյաները շրջանագծվում են կրոմլեխաշարով՝ 30-40 մ տրամագրծով: Դամբանաթւուրների խցերը, ըստ Լոռիի, Օշականի, Լճաշենի նյութերի, ունեն 5-10 մ երկարություն, 2,5-3 մ լայնություն, մինչև 3 մ խորություն: Դամբանախցերը, որոնք փորկած են հողի մեջ, երեսապատված են խոշոր, կոպիտ մշակված 3-7 տ սալերով: Դրանց ծածկերը կազմված են սալերի երկ կամ եռաստիճան շարվածքով, ստեղծելով կեղծ թաղ: Թաղի և ծածկի քարերի կշիռը հասնում է 4-5, եթեմն 10 տ: Թաղը, որպես կանոն, հենքում էր երկշար գերանների վրա, իսկ պատերը եթեմն երեսապատվում էին տախտակներով: Հանգուցյալները ծածկված իուց էին քերվում դրույսի միջոցով, որը հետագայում լցվում էր հողով և մնում դամբանաթմբի տակ:


Իրազմածն են ոչ միայն թաղման կառուցյաները, այլև ծեսերը: Դրանք ամբողջովին համապատասխանում էին նեցեցյալների սոցիալական դիրքին: Սևանի ավագանի, հատկապես Լճաշենի, Ներքին Գետաշենի նյութերը վկայում են, որ ցեղային տոաջնօրդների դիմակները տեղադրվում էին սայլերի վրա, որոնք լծված էին եզներով: Եթեմն սայլեի հետեւ կառում էին ծիերը: Դամբարաններում, տեղ զգացեցնելու համար դամբանախցում դր վում էին միայն այդ կենդանիների գլուխները: Մինչդեռ Լոռիի, Սեանձմորի դամբարաններում հայտնաբերվել են հեծյալ ծիերի ամթողջական կրծմաքներ: Դամբանախուցք լցվում էր հսկայական հարստությամբ, գինանշաններով, զենքով, խեցեղենով, արդուզարդով: Թաղման ժամանակ կատարվել են մարդկային և կենդանիների զոհաբերություններ, որոնք հաստատվել են Արցախի, Լճաշենի և այլ վայրերի դամբանաթւուրների ակնումների ժամանակ: Դամբանաթուրը լցնելուց առաջ կատարվում էր հոգեհացի արարողություն, որի մասին են վկայում խցի ծածկասալերի վրա և թմբի մեջ հայտնաբերված մոխրի, փայտածուխի, կենդանիների ոսկորների, ամշողջական, ինչպես նաև կտրատված անոթների շենքերը: Քարարկերի և հիմնահողային թաղումների ծիսակարգը ըստ եռւթյան չնշին տարերությամբ նույնըն էր: Հանգուցյալների կմախքները, որպես կատան, կծկված են աջ կամ ձախ կողերի վրա: Խմբակային թաղումներում եթեմն հանդիպում են նստած կամ մեջքի վրա պառկած կմախքները: Դրանց ունիւն արտօնյալ




1



2



3



4

Աղ. 61. Ուշ բրոնզի դարաշրջանի զբություններ Արթիկից:

դիրք. Նրանց մոտ մեծ թանակի աշխատանքային գործիքներ, զենք և այլ ուղեկցող նյութեր կան: Հայաստանի ուշ ըրուզակերպում թաղումներում առանձին դեաքերւմ հանգուցյալների գլխի տակ կամ խցում հանդիպում են զետաքարեր, որոնք վկայում են դամբարանը „ջրով մաքրելու „ծեսի մասին: Այս ժեք հատկապես տարածված է Գուլովինոյի, Քաղսիի, Արթիկի և այլ դամբարաններում: Մի շարք դամբարաններում, հատկապես Լաշենում, Արթիկում պահպանվել է դեռևս միջին ըրոնդի ժամանակաշրջանից /Կիրովականի մեծ ժամբանաքըլուրը/ եկող այն սովորությունը, եթե հանգուցյալներին թաղում էին փայտե կամ կաշե պատզարակների վրա: Պատզարակի ուղերն ունեին մինչև 0,4-0,5 մ ըարձրություն:


Բացի դիաֆառումից /կծկված, նստած, պառկած, ճգված դիքըով/ այս ժամանակաշրջանի դամբարաններում հատտառզրկած է դիամասնատում, ինչպես նաև գլխի տանձին թաղում նույն խցում: Երեխն գլուխները դրվում էին քրեղանի մեջ: Թնորոշ սովորությունը է, եթե դամբարանի մեջ կամ դամբանաթմքի վրա դրվում էին թարե ֆալոսներ, սյուներ, յարդակերպ արձաններ: Ֆալոսներ և սյուներ հանդիպում են Շամիրամում, Արթիկում, Լաշենում, Պատշաշրում, Զաղալուռում: Մարդակերպ արձաններ գտնվել են Շամիրամից, Կարմիր ըլուրից, Մեծամորից, Կարմիր քերդից և այլն: Այդ թարե կոթողների մի մասը հարդարված է խաչերի, պարույրի պատկերներով, որոնք կապում են արևի պաշտամունքի հետ և հնարավորություն են տալիս ենթադրել որոշ թաղման ծեսերի հիմքի մասին, ուր ընկած է հարություն առնելու գաղափարը: Ինչպես դամբանաքըլուրների վրա, այնպես էլ շարքային թաղումներից հայտնի են հոգեհացի հետքեր, որը վկայում է այդ սովորության լայն տարածման մասին ընակչության ըուղը իմերի մեջ:

ՑԱՅՑԱՅՑՈՒՄՆ ՀԻՄՍԱՎԱՆ ՁԵՎԵԲԲԸ: Ուշ ըրուզակերպության ժամանակաշրջանի հուշարձանների ուսումնասիրությունը հետաքրքիր նյութեր է տալիս պատկերացում կազմելու Հայկական լեռնաշխարհի ցեղերի տնտեսական կյանքի մասին: Հատկապես արագ է զարգանում երկրագործությունը: Ընդլայնվում են ցանքատարածքները, որին նպաստում են մի շարք հանգամանքներ: Այստեղ հիմնական դեր ունեն հարթավայրերի կրկին ընակեցման փաստը, եթե լեռնային վայրերից լրացուցիչ ընակչություն էր ի հնում դաշտավայրեր, ինչպես և անտառնատումը՝ նոր ցանքատարածություններ յուրացնելու համար: Զարգանում է նաև այգեզործությունը, խաղողագործությունը, քանչարաքստանային կուլտուրաների մշակումը: Դրան նպաստում է արորի կատարելագործումը: Նախորդ շը ջանների համեմատությամբ զգալիորեն ընդլայնվում են ոռոգման ցանցերը, որոնց հետքերը առկա են Արագածի հարավային լանջերում, Մեծամորում և այլուր: Ըննարկվող համանակաշրջանում հիմնական վարող գործիքն արորն էր, որի պատկերը

Կապանվել է Սրցախի Խոջալուի դամբարանաղաշտից հայտնի մի կավաքեկորի վրա: Այստեղ պարզ երևում է Փայտի արորի և նրան թաշող ցուլի պատկերը: Արորն ունի սրածայր ելուստ, իսկ վերին մասում՝ խաչով՝ ըստակը մածկալին հենելու համար: Նման արորներ հայտնի են Մյունիստի ժայռապատկերներում: Հողը փխրեցնելու համար օգտագործվում էին նաև ըրոնզե և քարե քրիչներ: Ուշ ըրոնզեղարի հիմնական հնձող գործիքներից են ըրոնզե մանզաղները, որոնք լայնորեն հայտնի են Կիրովականից, Լուսածորից, Խաչտարակից և այլն: Դրանց հետ մեկտեղ պանդաքար օգտագործվում էին քարե ներդիբներով փայտ մանզաղներ: Հնձված թերթը դիզվում էր փայտ եղանակով: Հայաստանում Լճաշենից, Վարդապաղից, Սերքին Գետաշենից և այլ վայրերից գտնված ըրոնզե եղանակները, ըստ ամենայնի, խորհրդանշում էին առաջնորդի գինանշանները և տնտեսության մեջ չեին կարող օգտագործվել, քանի որ նրանց առանձները քարակ էին և կարող էին ծովել ծանրության տակ: Հավաքված թերթը տեղափոխվում էր զրատների և տարբեր մեթոդներով, որոնք հայտնի են Լճաշենից և Ներքին Գետաշենից: Հնայած այստեղ սայլերը պատրաստվել են թաղման համար, անկասկած, նման սայլեր տարածված էին ամբողջ Հայաստանում և գործածվել են տնտեսական գործունեության ընթացքում: Գտնված սայլերը 2-4 անիվներով են: Քառանիվ սայլերն ունեն ոչ մեծ թափք /1x2 մ/, որը նպաստում էր նրա շարժունակությանը: Անիվները պատրաստվում էին 3-4 խոշոր տախտակներից և ազատ պատվում էին անշարժ ստորև շուրջը: Մայրեից մի քանիսն ունեին թաղակառ մեկ ծածկ: Նըկանիվ սայլեն ունեին քաղաքի տեսք, որոնց երկարությունը կազմում էր 3 մ: Քաղաքի վերջնամասում տեղադրված էր թափք /1x 1,5 մ/, որի տակ տեղադրված էր կլոր վերջավորություններով անշարժ ստորին: Այս մենա պվելի շարժունակ էր, քան քառանիվը և գործնականում կիրառելի էր ցանկացած պայմանների համար:

Կալսելու համար օգտագործվել են քարե կամեր, որոնք հայտնի են Լճաշենից: Սակայն, ի տարբերություն նախորդների, սրանք պվելի կատարելագործված էին, ստորին աշխատակողի վրա կային խոր ակոսներ, որոնց առավել արդյունավետ էին դարձնում կամի աշխատանքը:

Ուշ ըրոնզեղարյան ժամանակաշրջանում Հայաստանում, Անդրկովկասում երկրագործությանը զուգահեռ շարունակում է զարգանալ անասնականությունը: Կենդանիների քնական աճը առանձում էր կերի քազայի ընդլայնում, արտավազյարերի ընդարձակում: Այդ նպատակով ճմեռված կերի համար հեռու խոտհարել տարածեներից խոտք սայլերով ու թաշաններով թերվում էր քնակավայր, իսկ ամուսք օգտագործվում էին ամենահեռավոր առրոտավայրերը: Սակայն հոտերի հետագա քանակական մեծացումը սահմանափակ



Աղ. 62. Ուշ պրովինցիալ դարաշրջանի գտածոներ ԱԿ. 187 Լոռի-Շերություն  
ԱԿ. 8-12 Գեղարվություն:





